Embassy of the
Kingdom of the Netherlands

INSTITUTE OF
LIBERAL POLITICS

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2

Embassy of the
Kingdom of the Netherlands

INSTITUTE OF
LIBERAL POLITICS

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՁԵՌՆԱՐԿ

2

Երևան 2025

Հեղինակ՝
Տաթևիկ Մատինյան

Էջադրող՝
Արուսյակ Օհանյան

Կազմի ձևավորումը՝
Ֆլորա Վարդանյանի

Սույն ձեռնարկում մատչելի լեզվով ներկայացվում է մարդու իրավունքների գաղափարի զարգացումը՝ սկսած հնագույն քաղաքակրթություններում դրված հիմքերից մինչև միջազգային ժամանակակից փաստաթղթերում դրանց ամրագրումը: Քննվում են մարդու իրավունքների տեսական հիմքերը, արժանապատվության և ազատության փիլիսոփայական ընկալումները, ինչպես նաև դրանց արտահայտումը միջազգային իրավունքում և ազգային օրենսդրության մեջ: Ընթերցողը կծանոթանա իրավապաշտպանության գործնական հնարավորություններին, ներպետական և միջազգային մեխանիզմների փոխկապակցվածությանը և մարդու իրավունքների պաշտպանության համաշխարհային կազմակերպությունների գործունեությանը: Նախատեսված է իրավաբանների, իրավապաշտպանների, ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են մարդու իրավունքների տեսությամբ և գործնական կիրառությամբ:

Ձեռնարկը մշակվել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտի՝ «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի շրջանակում:
Ծրագիրը ֆինանսավորել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանատունը:

© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
Ներածություն 7
1. Մարդու իրավունքներ. հիմնական հասկացությունները 9
2. Մարդու իրավունքներն անհատակա՞ն են, թե՞ կոլեկտիվ 12
3. Որքա՞ն հին են մարդու իրավունքները 13
4. Կրոնի ու փիլիսոփայության ազդեցությունը մարդու իրավունքների զարգացման վրա 16
5. Մարդու իրավունքները սահմանող մերօրյա կարևորագույն միջազգային փաստաթղթերը 18
6. Մարդու արժանապատվության և իրավունքների փոխկապակցվածությունը 23
7. Ինչո՞ւ են մարդու իրավունքները միշտ ուղղահայաց 26
8. Ո՞վ և ինչպե՞ս կարող է խախտել մարդու իրավունքները 28
9. Մարդու նյութական և դատավարական իրավունքների տարբերությունը 33
10. Մարդու իրավունքները քանի՞ հիմնական խմբի են բաժանվում 34
11. Մարդու իրավունքների ծագման աղբյուրների դասակարգումը 36
12. Պետության դերը մարդու իրավունքների ապահովման գործում 38
13. Մարդու իրավունքների սահմանափակումները 40
14. Ինչո՞ւ որոշ խմբեր ունեն հատուկ իրավունքներ 43
14.1. Երեխայի իրավունքների պաշտպանության ի՞նչ մեխանիզմներ կան 43
14.2. Ովքե՞ր են միգրանտները և ի՞նչ իրավունքներ ունեն 45
14.3. Ի՞նչ մեխանիզմներ են նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար 47
14.4. Բռնի անհետացած անձանց պաշտպանության ի՞նչ մեխանիզմներ կան 48

15. Ինչպե՞ս են պաշտպանվում և վերականգնվում խախտված իրավունքները 50
15.1. Վարչական վարույթ 50
15.2. Ներպետական դատական համակարգը Հայաստանում 52
15.3. Ի՞նչ է վեճերի լուծման այլընտրանքային եղանակը 54
15.4. Մարդու իրավունքների պաշտպանի դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում 56
15.5. Մարդու իրավունքների եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ 58
15.5.1. Անհատական գանգատի ներկայացման ընթացակարգը 61
15.5.2. Միջպետական գանգատի ներկայացման ընթացակարգը 66
15.5.3. Ի՞նչ է պիլոտային վճռով վարույթը 66
15.5.4. Գրավո՞ր, թե՞ բանավոր ընթացակագով է քննվում գործը ՄԻԵԴ-ում 68
15.5.5. ՄԻԵԴ վճիռներ 69
15.5.6. Հնարավո՞ր է ՄԻԵԴ-ում ստանալ իրավաբանական օգնություն 70
16. Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների դերն ու մանդատը 72
16.1. ՄԱԿ մեխանիզմներ 72
16.2. Amnesty International 77
16.3. Human Rights Watch 78
16.4. Minority Rights Group International 79
17. Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված հակամարտությունների ժամանակ 80
18. Արհեստական բանականության ազդեցությունը մարդու իրավունքների վրա 85
19. Գրականություն 89

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ձեռնարկը, որը ներկայացնում է մարդու իրավունքների միջազգային և ներպետական հիմունքները, նպատակ ունի ընթերցողին ամբողջական պատկերացում տալու մարդու իրավունքների էության, դրանց իրավական կարգավորման, ինչպես նաև պաշտպանության մեխանիզմների մասին: Այն մշակվել է ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաև այլ կառույցների ընդունած հիմնարար փաստաթղթերի և սկզբունքների հիման վրա:

Գիրքը վերլուծում է մարդու իրավունքների համաշխարհային զարգացման ուղին՝ ընդգծելով, թե ինչպես է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված միջազգային համակարգը նպաստել մարդու արժանապատվության պաշտպանությանը վերաբերող նորմերի հաստատմանը: Դրանով սկիզբ է դրվել այն շարժմանը, որի հիմքում ընկած է խտրականության բացակայության, հավասարության և արժանապատիվ կյանքի ապահովման սկզբունքը:

Հրատարակության նպատակն է լուսաբանել թե՛ հիմնական իրավական փաստաթղթերը՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948), Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր, ԱՄՆ իրավունքների բիլլ ևն, թե՛ հետագա միջազգային պայմանագրերը՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (1966), «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (1989), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (1979) ևն:

Հատուկ ուշադրություն է դարձվում մարդու իրավունքների ուսուցմանը, դրանց իրացման մեխանիզմներին թե՛ ներպետական, թե՛ միջազգային մակարդակում: Քննարկվում է մարդու իրավունքների կիրառման բնույթը կոնկրետ իրավիճակներում, ցույց է տրվում, որ իրավունքների պաշտպանությունը պահանջում է իրավական գիտելիքներ, գործնական հմտություններ և ինստիտուցիոնալ հնարավորություններ:

Ներկայացվում են պետություն–անձ հարաբերություններում իրավունքի և ազատությունների դերը, խտրականության դեմ պայքարի իրավական հիմքերը, երեխաների, խոցելի խմբերի, կանանց, փախստականների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առանձնահատուկ պաշտպանությունը:

Բացի այդ՝ ձեռնարկում քննարվում է մարդու իրավունքների ապահովման մեխանիզմների ամբողջական համակարգը՝ վերադասության կարգով բողոքարկման, դատարաններ դիմելու, Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի, ՄԻԵԴ-ի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների դերը և գործառույթները:

Ուշադրություն է դարձվում նաև արդի մարտահրավերներին, որոնք առնչվում են թվային պատերազմներին, արհեստական բանականության ազդեցությանը, կիբեռհարձակումների և զինված հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել ուսանողների, իրավաբանների և մարդու իրավունքների պաշտպանությամբ հետաքրքրվողների համար:

Մարդու իրավունքները գիտելիքի այն ոլորտն է, որը սերտորեն կապված է փիլիսոփայության և առաջին հերթին էթիկայի, իրավագիտության ու քաղաքագիտության հետ: Գիտելիքի այս ոլորտը իր ժամանակակից ձևակերպումը ստացել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, սակայն դրա ակունքները հստակորեն նկատելի են դեռևս անտիկ շրջանում, միջնադարում և, իհարկե, Լուսավորության դարաշրջանում: Կոմունիզմի ժամանակ մարդու իրավունքները հետազոտության առարկա չէին և ոչ մի տեղ չէին դասավանդվում:

ՄԱԱՐԵԿ ՆՈՎԻՑԿԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքներն ու ազատություններն այն կարգավորումներն են, որոնք սահմանափակում են մեծամասնության իշխանությունը, և որոնցով անձը օժտվում է ծննդյան պահից:

Մարդու իրավունքները յուրաքանչյուր անձի անօտարելի իրավունքներն են՝ անկախ ազգությունից, բնակության վայրից, սեռից, էթնիկ պատկանելությունից, մաշկի գույնից, կրոնից, լեզվից կամ որևէ այլ առանձնահատկությունից: Բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ, որոնք բացառում են ամեն տեսակի խտրականություն: Մարդու իրավունքները համընդհանուր են, այսինքն՝ նույնն են բոլոր մարդկանց համար բոլոր երկրներում: Դրանք անօտարելի են, անբաժանելի և փոխկապակցված, այսինքն՝ անձը կամայականորեն չի կարող զրկվել իր իրավունքներից:

Գոյություն ունի մարդու իրավունքները դասակարգելու մի քանի եղանակ: Առավել հաճախ բաժանումը կատարվում է ըստ հետևյալ ոլորտների՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային:

Մարդու իրավունքները կարելի է արդյունավետորեն պաշտպանել թե՛ ներպետական և թե՛ միջազգային դատական մակարդակներում:

Սույն ձեռնարկի նպատակն է երիտասարդ մասնագետներին և ոլորտով հետաքրքրված անձանց հանրամատչելի եղանակով ներկայացնել մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար տեղեկություններ, ինչպես նաև որպես օգտակար ուղեցույց ծառայել իրավապաշտպան գործունեության ընթացքում:

1.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքներն այն հնարավորություններն են, որոնք անձն ունի անկախ իր ազգությունից, բնակության վայրից, սեռից, էթնիկ պատկանելությունից, մաշկի գույնից, կրոնից, լեզվից կամ որևէ այլ հատկանիշից: Հին ժամանակներում մարդիկ իրավունքներ ունեին հիմնականում այն պատճառով, որ պատկանում էին որևէ խավի, ընտանիքի կամ սոցիալական խմբի: Սակայն ժամանակի ընթացքում հետևյալ հարցը ծագեց. մի՞թե բոլորը՝ որպես մարդ, չունեն նույն արժանապատվությունն ու իրավունքները: Այսպես սկսվեց մարդու իրավունքների ժամանակակից ընկալման ձևավորումը: Մեր օրերում բոլոր անձինք հավասարապես օժտված են իրավունքներով, որոնք բացառում են ամեն տեսակի խտրականություն: Դրանք համընդհանուր են և անքակտելի, փոխկապակցված են և անբաժանելի, հիմնված են խտրականության բացառման և հավասարության սկզբունքների վրա: Մարդու համընդհանուր իրավունքները հաճախ ամրագրվում և երաշխավորվում են օրենքով՝ պայմանագրերի, միջազգային սովորութային իրավունքի, իրավունքի ընդհանուր սկզբունքների և միջազգային իրավունքի այլ աղբյուրների տեսքով: Այս ոլորտում միջազգային իրավունքը պետություններին պարտավորեցնում է ապահովելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Հիմնական հասկացություններ

- **Համընդհանրություն:** Սա նշանակում է, որ յուրաքանչյուրն ունի իրավունքներ՝ անկախ ազգությունից, սեռից, կրոնից, մաշկի գույնից, լեզվից, կամ որևէ այլ հատկանիշից: Մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքը միջազգային իրավունքի հիմքն է, որը մշտապես ամրագրվում է մարդու իրավունքներին վերաբերող բազմաթիվ միջազգային կոնվենցիաներում, հռչակագրերում և բանաձևերում: Այն առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում 1948 թ.՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունմամբ: Իսկ 1993-ին Վիեննայում տեղի ունեցած Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովին արձանագրվում է, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանումն ու պաշտպանությունը պետության պարտականություններն են՝ անկախ դրա քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգից: Յուրաքանչյուր երկիր վավերացրել է մարդու իրավունքների հիմնական պայմանագրերից առնվազն մեկը, իսկ պետությունների 80%-ը՝ չորս և ավելի պայմանագրեր: Սա արտացոլում է երկրների միջև

առկա համաձայնությունը, որը նրանց վրա իրավական պարտավորություններ է դնում և հաստատում համընդհանրության սկզբունքը: Մարդու իրավունքների որոշ հիմնարար նորմեր ամրագրված են նաև միջազգային սովորութային իրավունքով:

- **Անքակտելիություն:** Կիրառվում է նաև «անբաժանելիություն» եզրույթը, այսինքն՝ բոլոր իրավունքները (քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային) փոխկապակցված են և ունեն հավասար կարևորություն: Դրանցից մեկի խախտումը կարող է ազդել մյուսների վրա: Մարդուն չի կարելի զրկել իր իրավունքներից՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պատշաճ իրավական ընթացակարգի համաձայն: Օրինակ՝ ազատության իրավունքը կարող է սահմանափակվել, եթե դատական կարգով մարդը մեղավոր է ճանաչվել հանցագործություն կատարելու համար:

- **Անօտարելիություն-օտարելիություն:** Որոշ իրավունքներ համարվում են անօտարելի: Դրանք մարդու այն իրավունքներն են, որոնցից նա չի կարող հրաժարվել: Անձի ստորագրած փաստաթուղթը, որով նա հրաժարվում է իր անձնական ազատությունից և ստրկության է համաձայնում, իրավական հետևանք չունի, այսինքն՝ ուղղակի անիմաստ է: Միևնույն ժամանակ կան իրավունքներ, որոնք օտարելի են. այսինքն՝ մարդը կարող է դրանցից հրաժարվել, սահմանափակել կամ փոխանցել ուրիշի: Օրինակ՝ սեփականության իրավունքը համարվում է օտարելի, քանի որ անձը կարող է վաճառել, նվիրել կամ ժառանգությամբ փոխանցել իր ունեցվածքը: Մարդը կարող է սահմանափակել իր սեփականության օգտագործումը՝ բնակարան վարձակալության հանձնելով կամ կտակ գրելով: Դա նշանակում է, որ այդ իրավունքը թեև կարևոր է, սակայն մարդու անօտարելի էությունը կազմող տարր չէ: Այս բաժանումը կարևոր է նաև պետության դերը հասկանալու համար. պետությունը պարտավոր է հատուկ պաշտպանություն ապահովելու անօտարելի իրավունքների երաշխավորման համար և կանխելու դրանց նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն, իսկ օտարելի իրավունքների դեպքում՝ կարգավորելու դրանց օգտագործման կանոնները:

- **Փոխկապակցվածություն:** Մարդու բոլոր իրավունքները մեկ ամբողջություն են կազմում, փոխկապակցված են և փոխկախված: Դրանք կարող են լինել քաղաքացիական և քաղաքական (օրինակ՝ կյանքի, օրենքի առջև հավասարության կամ խոսքի ազատության իրավունքը), տնտեսական, սոցիալական և մշակութային (օրինակ՝ աշխատանքի, սոցիալական ապահովության և կրթության իրավունքը) կամ հավաքական (օրինակ՝ զարգացման և ինքնորոշման իրավունքը): Մի իրավունքի պահպանումը նպաստում է մյուսների պահպանմանը: Եվ հակառակը՝ որևէ իրավունք չպահպանելը բացասաբար է անդրադառնում մյուս իրավունքների իրացման վրա:

- **Խտրականության բացառման և հավասարության սկզբունքի վրա խարսխվածություն:** Այս սկզբունքը ներառված է մարդու իրավունքներին վերաբերող բոլոր հիմնական պայմանագրեր և կենտրոնական թեմա է որոշ միջազգային կոնվենցիաներում, ինչպիսիք են «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիաները: Խտրականության բացառման սկզբունքը կիրառելի է յուրաքանչյուր մարդու նկատմամբ և տարածվում է բոլոր իրավունքների և ազատությունների վրա՝ թույլ չտալով խտրականություն՝ որևէ հատկանիշով պայմանավորված (օրինակ՝ սեռ, ռասա, մաշկի գույն): Այն լրացվում է **հավասարության** սկզբունքով, ինչն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»:

- **Բնածին բնույթ:** Գիտական տեսությունների մեծ մասի համաձայն՝ մարդու իրավունքները բնածին են: Պետությունը պարտավոր է ոչ թե «շնորհելու» դրանք, այլ ճանաչելու, պաշտպանելու և ապահովելու դրանց արդյունավետ իրացումը:

2.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՀԱՏԱԿԱ՞Ն ԵՆ, ԹԵ՞ ԿՈԼԵԿՏԻՎ

Մարդու իրավունքները կոլեկտիվ չեն, բացառապես անհատական են, քանի որ իրավունքի սուբյեկտը մարդն է՝ անհատը: Հետևաբար մարդու իրավունքների համատեքստում հնարավոր չէ խոսել, օրինակ, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին: Սակայն այս խմբի իրավունքների մասին խոսելիս «փոքրամասնությունների իրավունքներ» ասելով պետք է նկատի ունենալ ազգային փոքրամասնություններին պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքները: Նույն կերպ՝ հատուկ կարիքներով անձանց իրավունքների մասին խոսելիս ոչ թե հաշմանդամների՝ որպես խմբի, այլ յուրաքանչյուր հաշմանդամի իրավունքների մասին պետք է խոսել:

Այս կանոնից միակ բացառությունը ՄԱԿ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 1-ին հոդվածն է, ըստ որի՝ բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Ժողովուրդների իրավունքները չեն բխում անհատական իրավունքներից. դրանք տիպիկ կոլեկտիվ են: Այս հոդվածը միջազգային դաշնագրում հայտնվել է քաղաքական նկատառումներով, այդ իսկ պատճառով մարդու իրավունքների մասին խոսելիս նկատի ենք ունենում ոչ թե ժողովրդի, հասարակական դասի կամ դասակարգի, այլ առանձին անձանց իրավունքները:

3.

ՈՐՔԱ՞Ն ՀԻՆ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու իրավունքները մեր կյանքի մի մասն են: Երբեմն զգացողություն է առաջանում, որ դրանք միշտ էլ գոյություն են ունեցել: Սակայն իրականում աստիճանաբար են ձևավորվել: Մարդիկ տարբեր ժամանակներում պայքարել են իրենց ազատության, արժանապատվության ու հավասարության համար: Այդ պայքարի ընթացքում էլ առաջ են եկել նոր իրավունքներ, որոնք հետագայում ամրագրվել են տարբեր փաստաթղթերում: Երբ ուսումնասիրում ենք մարդու իրավունքների պատմությունը, հասկանում ենք, որ դրանք հեշտությամբ չեն տրվել. ձեռք են բերվել պայքարի և հետևողական աշխատանքի շնորհիվ:

Մ.թ.ա. 539 թ. Աքեմենյան տերության թագավոր Կյուրոս Մեծը գրավում է Բաբելոնը: Բայց նրա քայլերը չէին սահմանափակվում միայն պատերազմով: Նա անում մի բան, որը դառնում է մարդու իրավունքների պատմության կարևորագույն էջերից մեկը: Կյուրոսն ազատում է ստրուկներին՝ թույլ տալով ինքնուրույն ընտրել իրենց կրոնը, և հայտարարում է, որ բոլոր ազգերը հավասար են: Այս և մյուս հրամաններն արձանագրվում են կավե գլանաձև առարկայի վրա, որն այսօր հայտնի է որպես «Կյուրոսի գլան» և համարվում է մարդու իրավունքների վերաբերյալ ամենահին գրավոր փաստաթուղթը[1]: ՄԱԿ-ը նույնիսկ ընդունել է, որ այդ գլանի որոշ գաղափարներ կրկնվում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

1 First Declaration of Human Right by Cyrus the Great Inscribed in cuneiform on a clay cylinder discovered in 1879. Now on display in the British Museum.

1184 թ. Մխիթար Գոշը գրում է «Դատաստանագիրք»-ը[2], որը միջնադարյան Հայաստանում ծառայել է որպես ֆեոդալական (ավատատիրական) իրավունքի հավաքածու: Ամբողջական անվանումն է «Գիրք դատաստանի»: Թեև գրվել է դասակարգային հակասությունները մեղմելու, ժողովրդի ազգային-ազատագրական ոգին բարձրացնելու նպատակով, այնուամենայնիվ դրանում տեղ են գտել նաև մարդու իրավունքների որոշ ձևակերպումներ: Մինչև Գոշը բնական իրավունքի վերաբերյալ եղել են բազմաթիվ նկարագրություններ, սակայն Գոշը ավելի բարձր հարթության է հասցրել և ձևակերպել բնական իրավունքը որպես ի սկզբանե Աստծուց տրված ճշմարտություն, որը պետք է պահպանել և փոխանցել սերնդեսերունդ: Ըստ նրա՝ մարդուց է կախված արդարացիորեն վարվելը և առաքինի լինելը, իսկ մարդիկ ի բնե ազատ են և հավասար: Բնական իրավունքն արտահայտում է աստվածային արդարության, ազատության, հավասարության իրավունքները, որոնք հավերժ են, համամարդկային արժեքներ են և չեն ենթարկվում փոփոխությունների: Այս առումով կարևոր է ընդգծել, որ ըստ «Դատաստանագրքի»՝ արգելվում է բռնությունը կանանց նկատմամբ: Ամուսինն իրավունք չունի մարմնական վնասվածքներ հասցնելու կնոջը, հակառակ դեպքում պետք է պատժվի այդ արարքի համար նախատեսված տուգանքի կրկնակիի չափով: Իսկ եթե ամուսինը կրկնի իր արարքը տուգանվելուց հետո և վտանգի կնոջ առողջությունը, կինն իրավունք ունի ամուսնալուծվելու: Մխիթար Գոշը եզակի խնդիր է առաջ քաշել, որը չենք գտնի միջնադարյան այլ աղբյուրներում, գույքային իրավահավասարություն սահմանելով տղամարդու և կնոջ միջև: «Դատաստանագիրք»-ը կնոջն իրավունք է վերապահում ինքնուրույն տնօրինելու իր գույքը: Նա կարող է սեփականությունը կտակել՝ ըստ իր հայեցողության. երեխաները նրա ունեցվածքը ստանում էին հայրական ժառանգությունից անկախ: Նման մոտեցումն այդ ժամանակաշրջանի համար առաջադիմական քայլ էր կնոջ նկատմամբ:

1215 թ. Անգլիայի թագավոր Հովհան I Անհողը ստորագրում է «Ազատությունների մեծ խարտիա»-ն (Magna Carta Libertatum), որը հետագայում դառնում է Մեծ Բրիտանիայի սահմանադրական-օրենսդրական հիմնարար փաստաթղթերից մեկը՝ ազդելով արևմտյան այլ երկրների իրավական համակարգերի կայացման վրա: Դա թագավորի դեմ ապստամբած խոշոր ֆեոդալների, հոգևորական բարձր դասի և քաղաքային բնակչության վերնախավի հաղթանակի արդյունքն էր: Խարտիան բաղկացած էր 63 հոդվածից, որոնցից 30-ը պաշտպանում էին հոգևորական և աշխարհիկ ֆեոդալների, 7-ը՝ ասպետների, 3-ը՝ քաղաքացիների շահերը: «Ազատությունների մեծ խարտիա»-ն սահմանափակում է թագավորի իրավունքները. նա ստիպված ճանաչում է եկեղեցու անկախությունն ու իրավունքների անձեռնմխելիությունը, համաձայնում թագավորական ընդհանուր խորհուրդ գումարելու՝ ընդարձակելով նրա իրավասությունները: Թագավորին առանց խորհրդի արգելվում է միջամտել խոշոր ֆեոդալների ներքին գործերին, հարկ գանձել նրանցից, կալանավորել, արտաքսել նրանց ևն:

2 https://banber.matenadaran.am/ftp/data/Banber5/6.E.Pivazyan.pdf

«Ազատությունների մեծ խարտիա»-ի 39-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ մի ազատ մարդ չի կարող բանտարկվել, կալանավորվել կամ զրկվել տիրույթներից այլ կերպ, քան օրենքով նախատեսված կարգով: Այս հրովարտակն առաջինն է ամրագրում ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքները:

1776 թ. հուլիսի 4-ին Մայրցամաքային 2-րդ կոնգրեսում ընդունվում է Միացյալ Նահանգների անկախության հռչակագիրը (անգլ.՝ United States Declaration of Independence), որն ազդարարում է գաղութների անջատումն Անգլիայից և ԱՄՆ ստեղծումը: Փաստաթղթի գլխավոր գաղափարն այն է, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և ունեն իրավունքներ, ինչպիսիք են կյանքը, ազատությունը և երջանկություն փնտրելը, ինչը մեծ ազդեցություն է ունենում նաև պետության սահմաններից դուրս:

1789 թ. Ֆրանսիայում մեծ փոփոխություններ են սկսվում: Ժողովուրդը պայքարում է հին կարգերի դեմ՝ տապալելով թագավորի բացարձակ միապետությունը: Այս հեղափոխական օրերին Ֆրանսիայի Ազգային Ժողովն ընդունում է «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիա»-ն[3] (պարունակում էր 17 հոդված). այն ազդարարում է, որ մարդու բնական և անկապտելի իրավունքներն են ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը, օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարությունը, անձի խղճի, խոսքի ազատությունը, հարկերի հավասարաչափ բաշխումը բոլոր քաղաքացիների միջև: Դեկլարացիան ֆեոդալական բացարձակ միապետական կարգերի դեմ պայքարի դրոշ է դառնում ոչ միայն Ֆրանսիայում, այլև ուրիշ երկրներում:

3 https://www.elysee.fr/en/french-presidency/the-declaration-of-the-rights-of-man-and-of-the-citizen.

4.

ԿՐՈՆԻ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Մարդու իրավունքները մենք այսօր պատկերացնում ենք որպես օրենքներով ամրագրված իրավունքներ՝ ի պաշտպանություն յուրաքանչյուր անհատի: Սակայն այս գաղափարն առաջացել է շատ վաղ՝ դեռ մինչև արդի իրավական համակարգերի ձևավորումը:

Մինչ պետությունները կքննարկեին մարդու իրավունքների պաշտպանությունը՝ որպես օրենքով ամրագրվող պարտավորություն, մարդիկ արդեն սկսել էին մտածել, թե ինչն է ճիշտ ու սխալ, և ինչպես պետք է վերաբերվեն միմյանց: Այդ ամենն արտացոլված է թե՛ կրոններում, թե՛ փիլիսոփայական ուսմունքներում:

Շատ հին կրոններ խոսում են այն մասին, որ մարդն արժեք ունի հենց այն պատճառով, որ մարդ է: Օրինակ՝ հինդուիզմը սովորեցնում է, որ յուրաքանչյուր կյանքի ձև սուրբ է: Դրա հիմքում է «ահիմսա»-ն, որը թարգմանվում է «չվնասել ուրիշներին»: Այս գաղափարը կարելի է համարել մարդու իրավունքների նախադրյալ. այն հաստատում է, որ բոլոր մարդիկ արժանի են հարգանքի ու բարության:

Նույնը տեսնում ենք հուդայականության մեջ: Աստվածաշնչի սկզբում ասվում է, որ բոլոր մարդիկ ստեղծվել են Աստծո պատկերով, ինչը նշանակում է՝ բոլորն ունեն միևնույն արժանապատվությունը: Այստեղից է բխում միմյանց նկատմամբ հարգանքի ու պատասխանատվության գաղափարը:

Քրիստոնեությունը մեծ ուշադրություն է դարձնում թույլերին, աղքատներին ու կարիքավորներին օգնելուն. առանձնակիորեն կարևոր են համերաշխությունն ու կարեկցանքը:

Բուդդայականության կենտրոնում մարդկանց միջև համերաշխությունը և ուրիշների հանդեպ հարգալից վերաբերմունքն են՝ անկախ կարգավիճակից: Առանցքային է բոլոր մարդկանց հավասարության գաղափարը:

Կոնֆուցիականությունը կարևորում է մարդու բարոյական վարքը, ընտանիքի ներդաշնակությունը և հասարակական կարգը: Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե մարդը

սրտում բարեպաշտ է, ապա տունը կլինի խաղաղ, իսկ եթե ընտանիքը ներդաշնակ է, համայնքը նույնպես կարգուկանոն կունենա: Եվ եթե համայնքը կարգուկանոն ունի, ապա ողջ աշխարհը կլինի խաղաղ»:

Իսլամը խոսում է մարդու կյանքի արժեքի մասին: Մուհամմադը ուսուցանում էր, որ բոլոր մարդիկ հավասար են Ալլահի առաջ՝ անկախ ազգությունից, մաշկի գույնից կամ սոցիալական դիրքից: Նա տարբեր կրոնների և ժողովուրդների միջև հանդուրժողականություն էր քարոզում:

Այս կրոնական ուսմունքներն ընդգծում են միևնույն գաղափարը. մարդուն պետք է հարգել, պաշտպանել և չվնասել՝ անկախ նրանից, թե ով է:

Մարդու իրավունքների գաղափարի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև փիլիսոփայությունը:

Հին Հունաստանում Սոկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը քննարկում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք են արդարությունը, բարոյական պարտքը, և թե ինչպես պետք է պետությունը և քաղաքացիները փոխադարձաբար գործեն: Թեպետ նրանք չեն կիրառել «մարդու իրավունքներ» արտահայտությունը, սակայն նախանշել են այդ գաղափարի հիմքերը:

Հատուկ կարևորություն ունի ստոիցիզմը, որի ներկայացուցիչներ Սենեկան, Էպիկտետոսը և Մարկուս Ավրելիուսը համարում էին, որ բոլոր մարդիկ բանական են, հետևաբար նաև հավասար: Նրանք կարծում էին, որ բոլոր մարդիկ մի ընտանիքի անդամներ են և արժանի են հարգանքի:

Ի վերջո, այս բոլոր ուսմունքներն ու գաղափարներն այս կամ այն կերպ իրենց դերակատարումն ու տեղն են ունենում ավելի ուշ ժամանակաշրջաններում իրավունքի ձևակերպման մեջ:

5.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՄԵՐՕՐՅԱ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհը տեսել էր շատ ծանր հետևանքներ՝ միլիոնավոր զոհեր, ցեղասպանություններ, խտրականություն և բռնություններ: Այս ամենից հետո պետությունները հասկանում են, որ անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր սկզբունքներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր անձի արժանապատվությունը և իրավունքները:

Այս նպատակի համար ստեղծվում է ՄԱԿ մարդու իրավունքների հանձնաժողովը, որն Էլեոնորա Ռուզվելտն է գլխավորում՝ ԱՄՆ նախկին նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի այրին: Նրա ջանքերով 1948 թ. ընդունվում է **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:** Այն ներկայացնում է բոլոր հիմնական իրավունքները, որոնք մարդը պետք է ունենա սոսկ մարդ լինելու հիմքով[4]:

Դրանցից են՝

- ապրելու և ապահով լինելու իրավունքը,
- ազատորեն կարծիք արտահայտելու իրավունքը,
- կրթություն ստանալու իրավունքը,
- առանց պատճառի ազատությունից չզրկվելու իրավունքը,
- խտրականության զոհ չդառնալու իրավունքը (օրինակ՝ մաշկի գույնի, սեռի, կրոնի կամ ազգության պատճառով):

Ամրագրվում են մի շարք կարևորագույն սկզբունքներ.

- **Համընդհանրություն:** Բոլոր մարդիկ ունեն նույն իրավունքները՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ են ապրում կամ ովքեր են:

4 Human rights principles, Unites Nations Populations Fund.

- **Անօտարելիություն:** Մարդու իրավունքները ոչ ոք (նույնիսկ իշխանությունները) չի կարող վերցնել կամ չեղարկել:
- **Փոխկախվածություն:** Բոլոր իրավունքները միախառնված են:

Ամբողջ աշխարհն այս հռչակագիրն ընդունել է որպես հիմնարար փաստաթուղթ: Այն դարձել է մարդասիրական իրավունքի և միջազգային բազմաթիվ համաձայնագրերի հիմքը: Օրինակ՝ այսօր շատ պետություններ իրենց օրենքները ստեղծում են՝ այս հռչակագրի դրույթները հաշվի առնելով:

Այս ամենից զատ՝ փաստաթուղթը հիշեցնում է, որ իրավունքները ոչ միայն պաշտպանում, այլև պարտավորեցնում են: Մարդու իրավունքները փոխկապակցված են. պետություններն ու ղեկավարները պետք է հարգեն դրանք, իսկ մարդիկ պետք է պատասխանատվությամբ օգտվեն իրենց ազատություններից:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան[5] (հայտնի է որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ, անգլ.՝ ECHR)) միջազգային համաձայնագիր է, որը կարգավորում է մարդու իրավունքները և հիմնական ազատությունները Եվրոպայում: Կազմվել է 1950 թ. նոր ստեղծված Եվրոպայի խորհրդի կողմից: Համաձայնագիրը ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ից: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են կոնվենցիային: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան առաջին փաստաթուղթն էր, որը հստակացրեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ամրագրված իրավունքները և պարտադիր ուժ հաղորդեց դրանց: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսվում են բացարձակ իրավունքներ, որոնք մասնակից պետությունները երբեք չպետք է խախտեն. այդ իրավունքներից են կյանքի իրավունքը և խոշտանգման արգելքը: Կոնվենցիան պաշտպանում է նաև որոշ իրավունքներ և ազատություններ, որոնք սահմանափակվում են միայն օրենքով, երբ ժողովրդավարական հասարակությունում դա անհրաժեշտ է լինում, օրինակ՝ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը: Արձանագրությունների ընդունմամբ մի շարք իրավունքներ են ավելացվել տեքստի սկզբնական տարբերակին, որոնք վերաբերում են մասնավորապես մահապատժի վերացմանը, սեփականության պաշտպանությանը, ազատ ընտրությունների իրավունքին և տեղաշարժի ազատությանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամբողջ աշխարհը սկսում է լրջորեն մտածել՝ ինչպես կանխի նացիստական ռեժիմի զանգվածային հանցագործությունները: Պետք է վերջ դրվեր մարդկանց տարբերակմանը ըստ ռասայի, մաշկի գույնի կամ ծագման: Ի վերջո, 1965-ին ՄԱԿ-ն ընդունում է մի փաստաթուղթ, որը կոչվում է

5 https://www.arlis.am/hy/acts/81165.

«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա[6]: Սա առաջին միջազգային պայմանագիրն է, որով պետություններն իրավաբանորեն պարտավորվում են պայքարելու ռասայական խտրականության դեմ:

1948 թ. ընդունվում է **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը**[7], որում խոսվում է մարդու հիմնական իրավունքների մասին: Բայց դա միայն հռչակագիր էր, և պետությունները պարտավոր չէին այն կատարելու: Իսկ 1966-ին ՄԱԿ-ն ընդունում է **«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը**[8], որն արդեն պարտադիր էր պետությունների համար: Ուժի մեջ է մտնում 1976 թ.: Փաստաթղթում ամրագրված են այն հիմնական ազատությունները, որոնք անձին պատկանում են սոսկ այն պատճառով, որ մարդ է: Դրանցից են ապրելու իրավունքը, խոշտանգումներից պաշտպանությունը, ազատության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, կարծիքի, խոսքի, խղճի և կրոնի ազատությունը, խաղաղ հավաքների ազատությունը: Դաշնագրում ամրագրված են նաև հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք պետությունները պարտավոր են ապահովելու մարդու վերոթվարկյալ իրավունքների սահմանափակումներ կիրառելու ժամանակ: Դաշնագրի կատարման վերահսկման համար ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտեն, որը ստանում է պետությունների զեկույցները, նաև ընդունում անհատական բողոքներ (եթե պետությունը ճանաչել է այդ իրավասությունը): Այս փաստաթուղթը դառնում է հիմնաքար այն գաղափարի համար, որ մարդու իրավունքները պետությունների իրական պարտականություններն են, ոչ թե պարզապես բարեմաղթանք:

1966-ին ընդունվում է ևս մեկ կարևոր փաստաթուղթ՝ **«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը**[9]: Այն ճանաչում է, որ մարդն արժանի է ապրելու ապահով և արժանապատիվ կյանքով: Այս դաշնագրում ամրագրված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են աշխատանքի, արդար աշխատավարձ ստանալու, հանգստի, առողջապահության, կրթության, սննդի, բնակարանի իրավունքները, մշակույթին կյանքին մասնակցելու հնարավորությունը: Ի տարբերություն քաղաքացիական և քաղաքական իրավունքների, որոնք պետք է անմիջապես իրացվեն, այստեղ պետությունները պետք է քայլ առ քայլ, ըստ իրենց հնարավորությունների ապահովեն այս իրավունքների իրագործումը: Օրինակ՝ եթե երկիրը դեռ զարգանում է և չունի բավարար ռեսուրսներ, ապա կարող է ժամանակի ընթացքում բարելավել առողջապահական կամ կրթական ծառայությունները՝ այդ-

6 «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա, ընդունված 21.12.1965:

7 https://www.arlis.am/hy/acts/1896.

8 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ընդունված 16.12.1966:

9 «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ընդունված 16.12.1966:

պես կատարելով իր պարտականությունները: Դաշնագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում էր Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR), որը վերլուծում էր պետությունների զեկույցները և առաջարկում բարելավումներ: Այս դաշնագիրը հիշեցնում է, որ մարդու իրավունքները ոչ միայն օրենքներին են վերաբերում, այլ նաև մարդու ապրելու որակին:

20-րդ դարի երկրորդ կեսին աշխարհում ձևավորվում է ավելի ուժեղ պայքար կանանց իրավունքների համար: Ֆեմինիստական շարժումները, ձգտելով հավասարության, ազդում են նաև միջազգային հանրության վրա: Այդ շարժման ազդեցությամբ 1979-ին ՄԱԿ-ն ընդունում է մի կարևոր փաստաթուղթ՝ «**Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան,** որը առավելապես հայտնի է որպես CEDAW[10]: Այս կոնվենցիան հաճախ անվանում են «կանանց իրավունքների միջազգային բիլլ», քանի որ այն համապարփակ ձևով ամրագրում է կանանց հիմնական իրավունքները կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային: Ի՞նչ է խտրականությունը. դա այն է, երբ մարդուն, այս դեպքում՝ կնոջը, վատ են վերաբերվում սոսկ այն պատճառով, որ կին է: Այս կոնվենցիան պահանջում է, որ պետությունները հավասար իրավունքներ և հնարավորություններ ստեղծեն թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: Սա նշանակում է, որ կանայք պետք է ունենան նույն հնարավորությունները կրթություն ստանալիս, աշխատելիս, առողջապահական ծառայություններից օգտվելիս, ընտանեկան որոշումներ կայացնելիս և քաղաքական կյանքին մասնակցելիս: Կոնվենցիան ոչ միայն արգելում է խտրականությունը, այլև պարտադրում է, որ պետություններն ակտիվ քայլեր անեն կանանց վիճակի բարելավման ուղղությամբ: Օրինակ՝ երկիրը պարտավոր է փոխելու այն օրենքները, որոնք բացասաբար են անդրադառնում կանանց վրա: Կոնվենցիայի կատարումը վերահսկում է հատուկ մարմին՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն, որը բաղկացած է փորձագետներից: Պետությունները պարբերաբար ներկայացնում են զեկույցներ, թե ինչպես են կատարում կոնվենցիայի պահանջները: Սա կարևոր է, որովհետև CEDAW-ն ընդգծում է, որ կանանց իրավունքների խախտումները ոչ միայն ներքին խնդիր են, այլ նաև միջազգային նշանակության հարց: Առանց կանանց և տղամարդկանց հավասարության անհնար է հասնել մարդու իրավունքների իրական պաշտպանության:

Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ՄԱԿ գլխավոր ասամբլեայի առաջին քայլերից մեկը 1946-ին ՄԱԿ մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) ստեղծումն էր: Երեխաների իրավունքներին վերաբերող ՄԱԿ առաջին ակտում՝ 1959-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած **Երեխայի իրավունքների հռչակագրում**[11], ձևակերպված են այն տասը սկզբունքները, որոնք սահմանում են բոլոր նրանց գործողությունները,

10 «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, ընդունված 18.12.1979:

11 https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/childdec.shtml.

ովքեր պաշտպանում են երեխաների իրավունքները՝ ապահովելով նրանց երջանիկ մանկությունը: Ըստ հռչակագրի՝ մարդկությունը պարտավոր է երեխային տալու իր ունեցած լավագույնը, երաշխավորելու, որ երեխաները կօգտվեն բոլոր իրավունքներից և ազատություններից՝ հօգուտ ամբողջ հասարակության: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան[12] ընդունվում է ՄԱԿ գլխավոր ասամբլեայի 1989 թ. նոյեմբերի 20-ի 44/25 հռչակագրով, իսկ 1990 թ. հունվարի 26-ին մեկնարկում է ստորագրումը: Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 1990 թ. սեպտեմբերի 2-ին՝ 20 պետությունների վավերացնելուց հետո:

Բնականաբար, թվարկվածները մարդու իրավունքների ոլորտում կարգավորումներ սահմանող բոլոր կարևոր ակտերը չեն, սակայն դրանք մերօրյա ամենահիմնարար փաստաթղթերն են, որոնք գործուն մեխանիզմներ են նախատեսում մարդու իրավունքների ապահովման և խախտված իրավունքների վերականգման համար:

12 https://www.arlis.am/hy/acts/60503.

6.

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու արժանապատվությունը հիմքն է բոլոր իրավունքների: Այդ պատճառով միջազգային փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ սահմանադրությունը սկսվում են հենց արժանապատվության գաղափարից: ՀՀ սահմանադրության մեջ հստակորեն նշված է՝ մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա արժանապատվությունը՝ մարդու իրավունքների հիմքը: Սա նշանակում է՝ պետությունը չի կարող արդարացնել մարդու նկատմամբ ոչ մի նվաստացուցիչ վերաբերմունք, նույնիսկ եթե դա իբր թե «հասարակության շահի» համար է: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները ոչ միայն գաղափար են, այլև իրական պահանջներ պետության նկատմամբ: Պետություններ-ը պարտավոր են ստեղծելու գործուն մեխանիզմներ մարդու իրավունքներն ապահովելու և պաշտպանելու համար: Արժանապատվությունը մարդու իրավունքների կենտրոնական գաղափարն է:

Մարդու իրավունքների հայեցակարգի համար կարևոր է անբաժանելի և բնածին արժանապատվության գաղափարը: Արժանապատվությունը բխում է մարդկության բուն էությունից և բնորոշ է ինչպես նորածնին, որը դեռ ոչինչ չի հասցրել անել, այնպես էլ կրկնահանցագործին: Մարդու արժանապատվությունը նույնը չէ, ինչ անձնական արժանապատվությունը, որը մոտ է պատվի գաղափարին: Անձնական արժանապատվությունը մենք ինքներս ենք վաստակում, այն աճում է, եթե մենք մեզ արժանապատիվ ձևով ենք պահում, և նվազում է, եթե զանցանքներ ենք գործում:

Մարդու իրավունքների հայեցակարգի հիմքում ընկած է այս երկու գաղափարներից առաջինը, այսինքն՝ մարդու արժանապատվությունը: Դրա հիմնավորումը մենք գտնում ենք տարբեր դավանանքներում և փիլիսոփայական տեսություններում: Քրիստոնյաների համար մարդկային արժանապատվությունը որոշվում է նրանով, որ մարդը, ստեղծված լինելով Աստծո պատկերով և նմանությամբ, իր մեջ կրում է Արարչի արժանապատվության մի մասնիկը:

Այսպես, արժանապատվություն նշանակում է, որ մարդն ինքնին արժեքավոր է՝ անկախ նրանից, թե որքան կրթված է, հարուստ, առողջ, ինչ մաշկի գույն ունի կամ որ

երկրից է: Այդ արժեքը կապված չէ մարդու կատարած գործերի հետ: Օրինակ՝ նորածին երեխային դեռ ոչ ոք չի ճանաչում, բայց բոլորս հասկանում ենք, որ նրան պետք է սիրով վերաբերվել, պաշտպանել ու խնամել: Սա է արժանապատվության հիմնական գաղափարը:

Այսօր մարդու իրավունքներն ու ազատություններն այն գործիքներն են, որոնց միջոցով արժանապատվությունը պաշտպանվում է: Դրանք «պաշտպանիչ վահան» են, որ մարդը չդառնա միայնակ, անպաշտպան կամ անանուն զանգվածի մի մաս պետության կամ հասարակության մեջ:

Օրինակ՝ խոսքի ազատությունը թույլ է տալիս, որ մարդն արտահայտի իր կարծիքը առանց վախենալու հետապնդումից: Սեփականության իրավունքը պաշտպանում է մարդուն, որ իր վաստակածից կամ ունեցվածքից չզրկվի առանց հիմնավորման: Խղճի և կրոնի ազատությունը նշանակում է, որ մարդը կարող է հավատալ նրան, ինչ ճիշտ է համարում, կամ ընդհանրապես չհավատալ:

Տոտալիտար համակարգերում, որոնցում մարդու արժանապատվությունն արժեք չէ, մարդկանց ստիպում են մտածելու նույն ձևով, ունենալու նման սանրվածքներ, խոսելու նույն բառամթերքով ևն, այսկերպ արմատախիլ անելով մարդու անհատականությունը: Այդպես են գործել շատ բռնապետություններ: Նրանք փորձել են ստեղծել «կատարյալ քաղաքացի» առանց սեփական կարծիքի, ձայնի կամ իրավունքի: Այս դեպքում մարդը վերածվում է անանուն զանգվածի, որը չունի արժեք որպես անհատ:

Այդպիսի վտանգներից խուսափելու համար մարդու իրավունքները սահմանում են նաև որոշակի պարտականություններ պետության համար: Պետությունը պետք է ապահովի, որ բոլոր քաղաքացիները, անկախ իրենց տարբերություններից, կարողանան ազատ և արժանապատիվ կերպով ապրել: Իսկ եթե պետական մարմինները խախտում են մարդու արժանապատվությունը, իրավական համակարգը պետք է գործի արդյունավետորեն՝ վերականգնելով արդարությունը:

Եվ ուրեմն, կարելի է ասել, մարդու իրավունքներն ու ազատությունները մարդու արժանապատվության իրավական արտահայտությունն են: Դրանք պաշտպանելու միջոցով իրավունքը պաշտպանում է մարդուն՝ որպես անհատի, որպես անփոխարինելի և արժեքավոր անձի:

Տարբեր մտածողներ՝ փիլիսոփաներ, կրոնական առաջնորդներ կամ իրավաբաններ, փորձել են բացատրել՝ ինչու մարդը պետք է գնահատվի: Օրինակ՝ հայտնի գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտը ասում էր՝ մարդը երբեք չպետք է դիտվի որպես գործիք որևէ նպատակի համար, այլ միայն որպես նպատակ ինքնին: Այլ կերպ

ասած՝ մարդուն երբեք չպետք է օգտագործեն, շահագործեն կամ վերաբերվեն ինչպես օբյեկտի[13]:

Նման պատկերացումներ կան նաև կրոնական ուսմունքներում: Ըստ քրիստոնեության՝ մարդը ստեղծվել է Աստծո պատկերով[14]: Նույն գաղափարին կարելի է հանդիպել իսլամում, բուդդիզմում և այլ կրոններում: Բոլորն ընդգծում են նույնը. մարդն ունի արժանապատվություն միայն նրա համար, որ մարդ է:

Այս հայացքները իրավական փաստաթղթերում ևս գտել են իրենց արտացոլումը: Օրինակ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին հոդվածում գրված է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ արժանապատվությամբ և իրավունքներով»:

13 Kant, I., *Groundwork for the Metaphysics of Morals*, Cambridge University Press, 1998, p. 38.

14 Ծննդոց 1:27 ՆՎԱԱ:

7.

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՇՏ ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

Մարդու իրավունքներն ու ազատությունները դրսևորվում են բացառապես մարդու և պետության հարաբերություններում: Սա կոչվում է այդ իրավունքների, այսպես կոչված, ուղղահայաց (վերտիկալ) գործողություն: Մարդու իրավունքների մեթոդաբանությունը և տերմինաբանությունը մարդկանց միջև հարաբերությունների նկատմամբ կիրառելու փորձերը («հորիզոնական գործողություն») չեն արդարացել, և մարդու իրավունքների մասին խոսելիս մենք նկատի են ունենում մարդու և պետության (այստեղ կարևոր է ընգծել, որ նկատի ենք ունենում պետական պաշտոնյաների գործողությունները ևս, ինչպես նաև պետության վերահսկողության տակ գտնվող հաստատությունները, օրինակ՝ ատոմակայանը, որի 100 % բաժնետերը պետությունն է) միջև փոխհարաբերությունները: Ու թեև ընտանիքը, սերը, ընկերությունը կամ հարևանների հետ հարաբերությունները մի շարք իրավունքների և պարտականությունների աղբյուր են, «մարդու իրավունքներ» հասկացությունը դրանց նկատմամբ չի կիրառվում:

Եվ քանի որ իրավունքներին և ազատություններին առնչվող ամեն բան տեղի է ունենում մարդու և իշխանության փոխհարաբերությունների գծով, հարկ է նշել, որ դրանց բնույթի վերաբերյալ կան երեք բոլորովին տարբեր մոտեցումներ:

Առաջին մոտեցման համաձայն՝ **իշխանությունն առաջնային է, և հենց իշխանությունն է իր ողորմածությամբ մարդկանց շնորհում այս կամ այն իրավունքները:** Սա նշանակում է, որ մարդիկ ունեն ճիշտ այնքան իրավունք, որքան իշխանությունը բարեհաճել է նրանց տալ: Այս մոտեցումը ներկայացված է բոլոր կոմունիստական երկրների (օրինակ՝ Լեհաստանի 1952 թ. հուլիսի 22-ի ուժի մեջ մտած սահմանադրական դրույթները. «Լեհաստանի Հանրապետությունը ամրապնդում և ընդլայնում է քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները») և XIX դարում ընդունված որոշ եվրոպական պետությունների սահմանադրություններում:

Երկրորդ մոտեցումը հիմնված է **հանրային պայմանագրի մոդելի** վրա: Հանրային պայմանագիրը կնքվում է, մի կողմից, իշխանության, մյուս կողմից՝ Ժողովրդի՝ որպես առանձին մարդկանց ամբողջության միջև: Նրանք, որոնց կառավարում են, համա-

ձայնում են փող տալու կառավարիչներին, օրինակ՝ հարկեր են վճարում, իսկ կառավարիչը պարտավորվում է ինչ-որ բան անելու նրանց համար՝ ապահովելու նրանց իրավունքները և ձեռնպահ մնալու նրանց կյանքի որոշ ոլորտներին միջամտելուն, այսինքն՝ նրանց իրավունքները ճանաչելուն: Նման պայմանագիրը, որն ավելի կամ պակաս շահավետ է կողմերից մեկի համար, հաճախ անվանվում է **սահմանադրություն:**

Երրորդ մոտեցումը բնորոշ է ամերիկյան մտածողությանը: **Մարդիկ, որոնք օժտված են բնական, մարդկային էությունից բխող իրավունքներով և ազատություններով, որոշում են պետություն ստեղծել և իշխանություն նշանակել, որպեսզի իրենց համար ավելի լավ ու հարմարավետ լինի ապրելը:** Եվ հանուն այն բանի, որ պետությունը կարողանա գործել, նրանք կամավոր կերպով համաձայնում են սահմանափակելու իրենց որոշ իրավունքներ՝ փոխանցելով պետությանը: Օրինակ՝ համաձայնում են սահմանափակելու իրենց գույքային իրավունքները և հարկեր են վճարում, կամ սահմանափակում են իրենց ազատությունը և, ըստ անհրաժեշտության, համաձայնում են ծառայելու բանակում:

Այս վերջին մոդելը արմատապես տարբերվում է առաջինից: Առաջին մոտեցման դեպքում մարդիկ ունեն ճիշտ այնքան իրավունք, որքան նրանց տալիս է իշխանությունը: Երրորդ մոտեցման դեպքում իշխանությունն ունի այնքան իրավունք, որքան մարդիկ համաձայնել են փոխանցելու նրան: Այս մոտեցումների տարբերությունից բխում են էական գործնական հետևանքներ: Դրան հեշտությամբ կարելի է համոզվել՝ ընտրելով իրավական նորմ և կիրառելով հտակորեն ընտրված դեպքի նկատմամբ. կախված նրանից, թե մարդու և իշխանության փոխհարաբերությունները հասկանալու համար կհետևենք առաջին, թե երրորդ մոտեցմանը, կհանգենք բոլորովին տարբեր լուծումների:

Սա ցույց է տալիս, որ նույն դրույթներով կարող է ձևավորվել բոլորովին այլ հասարակական իրականություն: **Երրորդ մոտեցումը, ըստ որի՝ իշխանություններին թույլատրվում է միայն այն, ինչ թույլատրված է օրենքով, իսկ մարդուն՝ այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով, մարդու իրավունքների հայեցակարգի հիմքն է:**

7.

Ո՞Վ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ԽԱԽՏԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու իրավունքները միայն պետությունները կարող են խախտել: Այստեղ կարևոր է նկատել, որ «պետություն» եզրույթի ներքո պետք է հասկանալ թե՛ պետական մարմինները, թե՛ պաշտոնատար անձանց և պետության իրավասության ներքո գտնվող հաստատությունները: Ավելին՝ խախտումները կարող են տեղի ունենալ թե՛ ուղիղ գործողությունների կատարման, թե՛ որոշակի պարտականությունների կատարման թերացման հետևանքով: Պատահական չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան կարելի է դիմել բացառապես ընդդեմ այն պետության, որի տարածքում կամ որի արդյունավետ վերահսկողության տակ գտնվող տարածքում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտումը: Ցավոք, չափազանց հաճախ է լինում, երբ անձն իր իրավունքները չի կարողանում տարանջատել մարդու իրավունքներից: Օրինակ՝ երբ քաղաքացի Ա-ն սպանել է քաղաքացի Բ-ին, իսկ պետությունն էլ ապահովել է արդար և արդյունավետ քննություն տվյալ գործի հետ կապված, ապա այստեղ սպանությունը չի դիտարկվի որպես մարդու իրավունքների խախտում, այնինչ ՄԻԵԴ ներկայացված «Ենգիբարյանն ու Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Դատարանն արձանագրել էր մարդու, տվյալ դեպքում դիմումատու Արման Ենգիբարյանի կյանքի իրավունքի խախտում, քանի որ հանցագործության կատարման համար կասկածվող անձին հանրային վայրում հետապնդել և հրազենի երկու կրակոցով սպանել էին ոստիկանները, իսկ պետությունն էլ արդյունավետ քննություն չէր անցկացրել այս գործով: Այսպիսով, պատշոնատար անձանց, այս դեպքում ոստիկանության աշխատակիցների ուղղակի գործողությունների հետևանքով խախտվել էր մարդու կյանքի իրավունքը: Մեկ այլ՝ «Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել էր, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված մարդու՝ կյանքի իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային կողմի խախտում: Մասնավորապես՝ 2010 թ. հոկտեմբերի 7-ին Սլավիկ Ոսկանյանը ձերբակալվել է սպանության և զինված հարձակման կասկածանքով, տեղափոխվել է «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ: Հոկտեմբերի 18-ին Ոսկանյանը բողոքել է ձախ սրունքի ցավից, այտուցից և հիպերեմիայից՝ նշելով, որ մաշկի տակ թուք է ներարկել: Նրան զննել է կալանավայրի բուժկետի բժիշկը, որն արձանագրել է թարախ և արյուն, ինչի մասին ՔԿՀ-ի պետին հաղոր-

դում է տվել: Նույն օրը հրավիրվել է քաղաքացիական հիվանդանոցից վիրաբույժ: Բժշկական փաստաթղթերում նշվում է «վերքից շագանակագույն թարախային արտանետում»: Հոկտեմբերի 24-ին Սլավիկ Ոսկանյանը, որն առանց օգնության արդեն չի կարողացել տեղաշարժվել, իր երկու խցակիցների օգնությամբ տեղափոխվել է կալանավայրի բուժմաս: Որոշվել է շտապ վիրահատության համար տեղափոխել դատապարտյալների հիվանդանոց, սակայն Սլավիկը նույն օրը մահացել է: Այսպես, Դատարանն իր վճռով արձանագրել է, որ 2010 թ. հոկտեմբերի 7-ից մինչև մահվան օրը՝ 2010 թ. հոկտեմբերի 24-ը, Ոսկանյանը եղել է կալանավորված և հետևաբար Հայաստան իշխանությունների հսկողության տակ: Հաշվի առնելով, որ Ոսկանյանը այդ ժամանակ եղել է ներպետական մարմինների հսկողության տակ, Դատարանը կոչված է քննելու, թե արդյոք իշխանություններն ամեն բան արել են ողջամտության սահմաններում, բարեխղճորեն և ժամանակին՝ փորձելու կանխել մահացու ելքը, ինչպես նաև պետության պատասխանատվությունը և գործով արդյունավետ քննություն անցկացնելու պարտավորության ապահովումը: Հաշվի առնելով փորձագիտական խմբի միասնական եզրակացությունը Ոսկանյանին ցուցաբերված թերի բուժօգնության մասին՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ բանտի ղեկավարությունը վարակի անկառավարելիության աստիճանից պետք է հասկանար՝ ինչ վտանգ է սպառնում դատապարտյալի կյանքին ուշացած տեղափոխումը հիվանդանոց: Դրանից հետևում է, որ Հայաստանը չի պաշտպանել Ոսկանյանի կյանքը կալանքի տակ գտնվելու ժամանակ: Հետևաբար տեղի է ունեցել կյանքի իրավունքի նյութաիրավական կողմի խախտում: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ իշխանության մարմինները չեն կարողացել իրականացնել Ոսկանյանի մահվան համապատասխան և արդյունավետ քննություն: Այսպիսով, տեղի է ունեցել կյանքի իրավունքի ընթացակարգային կողմի խախտում:

«Ենգիբարյանն ու Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Արման Ենգիբարյանի կյանքի իրավունքը խախտվել էր պաշտոնատար անձանց անմիջական գործողությունների՝ կրակելու հետևանքով, իսկ Սլավիկ Ոսկանյանի կյանքի իրավունքը խախտվել էր պաշտոնատար անձանց՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակցի անմիջական պատրավորությունների կատարման թերացմամբ, այն է՝ անհետաձգելի և արդյունավետ բժշկական օգնության տրամադրում:

«Ղույումչյանն ընդդեմ Հայաստանի» գործով 2007 թ. հունիսին ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել էր դիմումատուին՝ իրազեկելով նրան, որ բողոքը վարույթ չի ընդունվել այն հիմքով, որ չի ներկայացվել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն (գործի վարման պահին առկա օրենսդրական կարգավորումներ): Դատարանում դիմումատուները պնդել են, որ իրենց ընտանիքը այդպիսի փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորություն չի ունեցել: Ղույումչյանի որդին, դիմելով ՄԻԵԴ, վիճարկել է, որ խախտվել է ՄԻԵԿ 6-րդ հոդվածի

1-ին կետը՝ արդար դատաքննության իրավունքը, որում ասվում է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները.... ունի [որևէ] դատարանի կողմից.... արդար.... դատաքննության իրավունք»: Այնինչ Գարեգին Ղույումչյանը զրկվել է Վճռաբեկ դատարանի մատչելիությունից, քանի որ հնարավորություն չի ունեցել օգտվելու Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ծառայություններից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարել է, որ տվյալ ժամանակահատվածում ընթացակարգային այն պահանջը, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարան կարող էին ներկայացվել միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով, անհամաչափորեն սահմանափակում էր դիմումատուի՝ դատարանի արդյունավետ մատչելիության իրավունքը, ինչն էլ հանգեցրել է մարդու արդար դատաքննության իրավունքի խախտմանը: Հետագայում Հայաստանի Հանրապետությունը վերանայել է այս օրենսդրական կարգավորումը և հանել այդ պահանջը: Սակայն կարևոր է նկատել, որ այս գործով՝ պետությունը խախտել է մարդու իրավունքները անգործությամբ, այսինքն՝ չնախատեսելով բավարար արդյունավետ մեխանիզմներ դատարանի մատչելիության սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Հետևաբար, ներկայացված օրինակներով ակնհայտ է դառնում, որ պետությունը կարող է խախտել մարդու իրավունքները թե՛ անմիջական գործողություններով կամ անգործությամբ, թե՛ բավարար մեխանիզմներ չնախատեսելով մարդու իրավունքների անխոչընդոտ ապահովման համար կամ չապահովելով բավարար ընթացակարգեր պետության վերահսկողության տակ գտնվող հաստատություններում մարդու իրավունքների ապահովման համար:

Կարևոր է նաև քննարկել այն հարցը, թե ինչպես պետք է որոշվի, որ պետության դեմ անհրաժեշտ է ներկայացնել մարդու իրավունքների խախտման հայց, երբ տվյալ հարցը միանշանակ չէ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածն ասում է, որ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի 1-ին բաժնում»: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում նշվում է, իրավազորության իրականացումը պայմանավորվող պետության համար անհրաժեշտ պայման է պատասխանատվության ենթարկվելու համար դրան վերագրվող այն գործողությունների կամ անգործության համար, որոնք հանգեցնում են Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման հետ կապված պնդմանը: Թեև պետության՝ 1-ին հոդվածով սահմանված իրավազորությունն առաջնայնորեն կրում է տարածքային բնույթ, Դատարանն իր նախադեպային իրավունքում ճանաչել է մի շարք բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ, որ պայմանավորվող պետությունն իրականացնի իրավազորությունն

իր իսկ տարածքային սահմաններից դուրս: Յուրաքանչյուր գործում այն հարցը, թե արդյոք առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք պահանջում են Դատարանի եզրահանգում առ այն, որ պետությունն իրավազորությունն իրականացրել է արտատարածքային եղանակով, որոշում են՝ հաշվի առնելով կոնկրետ փաստեր: Արտատարածքային իրավազորության իրականացումը կարգավորող երկու հիմնական չափորոշիչներն են պետության՝ իր տարածքից դուրս գտնվող տարածքի նկատմամբ «արդյունավետ վերահսկողության» իրականացումը (իրավազորության տարածական մոտեցում) և «պետական իշխանական գործառույթների և վերահսկողության իրականացումը» անհատների նկատմամբ:

Անդրադառնաք «Նարայանը և այլք ընդդեմ Ադրբեջանի» գործին: 2016 թ. դեկտեմբերի 29-ին Ադրբեջանի և Հայաստանի սահմանին զինծառայողների միջև տեղի են ունեցել բախումներ: Կռվի ժամանակ սպանվել են զինծառայողներ՝ երեք հայ և մեկ ադրբեջանցի: Նրանց մարմինները հայտնաբերվել են Տավուշի մարզի Ջինարի գյուղի մոտակայքում (տե՛ս նաև՝ «Գուրբանովն ընդդեմ Հայաստանի» [Gurbanov v. Armenia], թիվ 7432/17): Հայ զինվորների հարազատները, դիմելով Մարդու իրավունքների եվրոպական դատարան, գանգատը ներկայացրել էին ընդդեմ Ադրբեջանի՝ բարձրացնելով Ադրբեջանի արտատարածքային իրավազորության հարցը: Դեպքերը տեղի են ունեցել ոչ թե բռնազավթված տարածքում, այլ առնչվել են Հայաստանի և Ադրբեջանի պետությունների միջև սահմանը հատելու միջոցով ներխուժմանը և այնուհետև հայ զինվորների սպանությանը, որը Ադրբեջանի պետական գործակալ զինծառայող Գուրբանովն էր կատարել: Դատարանն իր վճռով արձանագրել է, որ իրավազորության հարցը, որը սերտորեն կապված է տվյալ արարքները պատասխանող պետությանը վերագրելու հարցի հետ, պետք է պարզվի ի սկզբանե՝ հետևյալ տարրերի քննությամբ. նախ՝ թե արդյոք մահացու կրակոցներն իսկապես արձակել է Գուրբանովը, ինչպես պնդում են դիմումատուները, և եթե այո, ապա երկրորդ՝ արդյոք տվյալ պահին բոլոր երեք զոհերը գտնվել են իր իշխանության և վերահսկողության ներքո (իրավազորության անձնական մոտեցում), և վերջապես՝ արդյոք նա այդ կրակոցների ժամանակ գործել է որպես Ադրբեջանի պետական գործակալ: Դատարանը եզրակացրել է, որ Գուրբանովը, լինելով ադրբեջանական զինվորական համազգեստով և կրելով բանակի ծառայողական զենքը, մահացու կրակ է արձակել Նարայանի և Աբովյանի վրա՝ գտնվելով Հայաստանի տարածքում: Դատարանը վերահաստատում է, որ այդ պահին Գուրբանովը եղել է Ադրբեջանի զինված ուժերի ակտիվ զինծառայող և իր ծառայողական պարտականությունները կատարելիս գործել է որպես զինծառայող: Նույնիսկ եթե ենթադրենք, որ նա չի մասնակցել պլանավորված գործողությանը, այլ ներգրավվել է ինքնաբուխ առաջացած հետապնդման գործողությունների մեջ, կիրառելի են նույն նկատառումները: Ավելին՝ Գուրբանովի գործողությունները, որոնք հանգեցրել են հայ զինծառայողների մահվան, հետմահու մեծարվել են Ադրբեջանում, իշխանությունները նրան այդ արարքի համար հռչակել են ազգային հերոս: Նշելով պատասխանող կառավարության՝ պետության ներգրավվածության մասին prima facie ապացույցները

չհերքելը՝ Դատարանը չի կարող հանգել այն եզրակացությանը, որ Գուրբանովը եղել է պետական գործակալ, և որ երկու հայ զինծառայողների մահվանը հանգեցրած իր գործողություններն իրականացնելիս օգտվել է այդ դիրքից: Այս հանգամանքներում այն գործողությունները, որոնց դեմ ներկայացվել է բողոք, կարող են վերագրվել պատասխանող պետությանը, որը պատասխանատվություն է կրում նրա վարքագծի համար: Հետևաբար, դիմումատուների բողոքներն այդ մասով պետք է հայտարարվեն ընդունելի:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը նաև հստակություն է մտցնում երկրների իրավազորության հարցում:

9.

ՄԱՐԴՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների երկու հիմնական խումբ գոյություն ունի՝ **նյութական** (մատերիալ) և **դատավարական** (պրոցեսուալ): **Նյութական իրավունքները** ներառում են մարդուն պատկանող կոնկրետ իրավունքներն ու ազատությունները՝ խոսքի ազատությունը, խղճի ազատությունը, բնակության վայրի ընտրության ազատությունը, կրթության իրավունքը ևն:

Դատավարական իրավունքները մարդու տրամադրության տակ դրված գործողությունների եղանակներն են և դրանց հետ կապված ինստիտուտները, որոնց միջոցով մարդը ստիպում է իշխանությանը պահպանելու և ապահովելու իր իրավունքները: Այս բաժանումը միշտ չէ, որ հստակ է: Օրինակ՝ որոշ դեպքերում դատական քննության իրավունքը կարելի է դիտարկել որպես նյութական (երբ մենք դիմում ենք դատարան՝ որպես արբիտր, որը կլուծի մեր վեճը մեկ այլ անձի հետ), իսկ այլ դեպքերում (օրինակ՝ երբ դատարան ենք բողոք ներկայացնում մի կազմակերպության դեմ, որը խախտում է մեր իրավունքները)՝ որպես դատավարական իրավունք:

Այսպիսով, պետությունները կարող են խախտել մարդու իրավունքների թե՛ նյութական և թե՛ դատավարական կողմը, մասնավորապես երբ պետությունը արդյունավետ հետաքննություն չի անցկացնում ազատազրկման վայրում վրա հասած մահվան գործով (օրինակ՝ «Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի»):

10.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՔԱՆԻ՞ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻ ԵՆ ԲԱԺԱՆՎՈՒՄ

Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ մարդու իրավունքները կարելի է խմբավորել տարբեր ոլորտներում՝ կախված նրանից, թե դրանք մարդու կյանքի որ կողմին են վերաբերում:

Քաղաքացիական իրավունքները պաշտպանում են մարդու անձը և ազատությունը: Դրանց շարքում են՝

- կյանքի իրավունք,
- անձնական անձեռնմխելիություն,
- խոսքի, մամուլի, տեղաշարժման ազատություն,
- ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն:

Օրինակ՝ ոչ ոք իրավունք չունի խախտելու Ձեր անձնական տարածքը կամ արգելելու Ձեզ արտահայտվել:

Քաղաքական իրավունքները թույլ են տալիս մարդուն մասնակցել պետության կառավարմանը: Դրանք են՝

- ընտրելու և ընտրվելու իրավունք,
- հանրաքվեներին կամ հանրային քննարկումներին մասնակցություն:

Օրինակ՝ Դուք ունեք իրավունք մասնակցելու ընտրություններին, քանի որ դա Ձեր ձայնն է պետության ձևավորման գործում:

Տնտեսական իրավունքները պաշտպանում են աշխատելու և արժանապատիվ կյանքի իրավունքը: Դրանց շարքում են՝

- աշխատանքի իրավունք,
- արհմիություն կազմելու կամ գործադուլին միանալու իրավունք,
- նվազագույն աշխատավարձի և սոցիալական երաշխիքների իրավունք:

Օրինակ՝ Դուք իրավունք ունեք պահանջելու արդար վարձատրություն Ձեր աշխատանքի դիմաց:

Սոցիալական իրավունքները կապված են սոցիալական պաշտպանության համակարգի հետ: Դրանք օգնում են մարդուն այն դեպքերում, երբ նա չի կարող ինքն իրեն հոգալ՝

- գործազրկություն,
- հիվանդություն,
- հաշմանդամություն,
- ծերություն:

Օրինակ՝ եթե մարդը կորցնում է աշխատանքը, պետությունը պարտավոր է օգնություն տրամադրելու նրան նպաստի կամ ծառայության տեսքով:

Մշակութային իրավունքները թույլ են տալիս մարդուն զարգանալ մտավոր և մշակութային առումներով: Դրանց շարքում են՝

- կրթության իրավունք,
- մշակույթի մեջ ներգրավվելու հնարավորություն,
- գիտական ձեռքբերումներին հասանելիություն,
- հեղինակային իրավունքներ:

Օրինակ՝ Դուք ունեք իրավունք սովորելու համալսարանում, լսելու երաժշտություն կամ գրելու գիրք և ունենալու դրա հեղինակային պաշտպանությունը:

11.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Երբ խոսում ենք մարդու իրավունքների մասին, պետք է հիշենք, որ երկու հիմնական գաղափարի միություն է՝ «մարդ» և «իրավունք»: «Մարդ»-ը՝ որպես յուրաքանչյուրիս ընդհանուր կերպար, հայտնի է բոլորին, իսկ «իրավունք»-ը կարող է մի փոքր բարդ հասկացություն թվալ: Իրավունքներն այն հնարավորություններն են, որոնք մարդը ունի ազատորեն ապրելու, արտահայտվելու, ընտրություն կատարելու կամ պաշտպանված լինելու համար: Այս հնարավորությունները հիմնված են օրենքների, բարոյական արժեքների կամ հասարակական պայմանավորվածությունների վրա: Ըստ այդմ՝ ընդունված է տարբերակել իրավունքների երկու հիմնական տեսակ՝ իրավական ակտերով ամրագրված և բարոյական (բնական):

Իրավական ակտորով ամրագրված են այն իրավունքները, որոնք գրված են օրենքներում, հաստատված են սահմանադրությամբ կամ միջազգային պայմանագրերով: Օրինակ՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրության իրավունք՝ մասնակցելու ընտրություններին, և դա ամրագրված է սահմանադրությամբ: Այսպիսի իրավունքները պաշտպանվում են դատարանների միջոցով:

Բարոյական իրավունքները երբեմն կոչվում են նաև բնական իրավունքներ (լատ.՝ iura naturalia): Դրանք այն տեսակն են, որոնք մարդիկ ունեն հենց իրենց մարդկային բնույթով: Դրանք մարդուն չեն տրվում պետությունից: Այսինքն՝ պետությունը չի ստեղծել, ընդամենը ճանաչում և պաշտպանում է դրանք, օրինակ՝ կյանքի կամ ազատ մտածելու և կարծիք ունենալու իրավունքները:

Դեռ հին ժամանակներից, հատկապես հռոմեական իրավունքի շրջանից իրավաբանները տարբերակել են այս երկու տեսակի իրավունքները: Բայց մինչև այսօր էլ շարունակվում են բանավեճերը՝ արդյոք բոլոր բարոյական իրավունքները իրականում ունեն համընդհանուր նշանակություն: Այսինքն՝ արդյոք դրանք նույն կերպ կիրառելի են բոլոր մշակույթներում:

Բարոյական իրավունքների ծագման վերաբերյալ քննարկումները ևս միանշանակ չեն: Ոմանք կարծում են, որ դրանք տրվել են Աստծուց, մյուսները՝ որ դրանք առա-

ջացել են մարդու բանականությունից: Հոլանդացի իրավագետ Հուգո Գրոտիոսը համարում էր, որ բնական իրավունքները գալիս են հենց մարդու էությունից: Նա ասում էր՝ նույնիսկ եթե Աստված չլիներ, այդ իրավունքները, միևնույն է, գոյություն կունենային: Այս միտքը կարևոր է, որովհետև, ըստ դրա, մարդն ինքը կարող է հասկանալ, թե ինչն է արդար և անարդար[15]: Հետագայում գիտնականները հարց են առաջ քաշել. արդյո՞ք բնական իրավունքները միշտ են համընդհանուր, թե՞ կապված են տվյալ մշակույթի հետ: Այսինքն՝ մի մշակույթում ընդունված ազատությունները մյուսում կարող են չհամարվել իրավունք: Օրինակ՝ որոշ երկրներում խոսքի ազատությունը լայն տարածում ունի, իսկ ուրիշներում սահմանափակվում է՝ ավանդույթներին կամ անվտանգությանը հղմամբ: Այս հարցերի պատասխանը միանշանակ չէ: Սակայն շատ իրավաբաններ ասում են, որ մարդուն վերաբերող որոշ իրավունքներ, օրինակ՝ խոշտանգումներից պաշտպանված լինելը կամ կյանքի իրավունքը, պետք է ընդունվեն որպես համընդհանուր, այսինքն՝ դրանք չպետք է կախված լինեն երկրի, մշակույթի կամ կրոնի առանձնահատկություններից: Սա է նաև մարդու իրավունքների միջազգային համակարգի հիմքում ընկած գաղափարը:

Հայ իրավաբանական մտքի կարևոր ներկայացուցիչներից մեկը՝ Վլադիմիր Ներսիսյանցը, նույնպես կարևորել է բնական իրավունքը: Ըստ նրա՝ բնական իրավունքը միշտ առկա է՝ անկախ ժամանակից և վայրից: Այն մի բան է, որ մարդուն տրվում է արտաքին ուժից և դառնում է իրավական համակարգերի հիմք: Այսինքն՝ օրենքները չեն ստեղծում այդ իրավունքները, այլ պարզապես ճանաչում ու ամրագրում են դրանք[16]:

15 Гроций Г., *О праве войны и мира*, Электронный ресурс, Электронная библиотека гражданское общество в России, стр. 48.

16 *Проблемы общей теории права и государства: Учебник для вузов*, Под общ. ред. академика РАН, д. ю. и., проф. В.С.Нерсесянца. М.: Норма, 2004. стр. 152-154.

12.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պետությունները չեն կարող ընտրել՝ հարգեն մարդու իրավունքները, թե ոչ: Երբ պետությունը միանում է միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են ՄԱԿ-ը և Եվրոպայի խորհուրդը, ստանձնում է պարտավորություններ: Այսինքն՝ համաձայնում է հետևելու որոշ միջազգային համաձայնագրերի, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: Այդ փաստաթղթերն ասում են՝ ինչ իրավունքներ ունեն մարդիկ, և ինչ պարտավորություններ ունի պետությունը:

Պետությունները, վավերացնելով միջազգային պայմանագրերը, ստանձնում են որոշակի պարտավորություններ այդ փաստաթղթերով սահմանված նորմերի ապահովման համար: Համապատասխան միջազգային կազմակերպությունները մշտապես հետևում են՝ արդյոք պետությունները կատարում են իրենց պարտավորությունները, թե ոչ: ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը և այլ կառույցներ մշակում են մեխանիզմներ, որոնցով պետությունները ներկայացնում են զեկույցներ այն մասին, թե ինչ են արել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, իսկ այդ կազմակերպությունների արձանագրած թերությունների և խախտումների հիման վրա կազմված ռեկամենդացիաները պետությունները պարտավոր են իմպլեմենտացնելու ներպետական մակարդակում:

Մարդու իրավունքների համատեքստում միջազգային իրավունքը պետություններին պարտավորեցնում է երեք հիմնական գործողության՝

- **հարգելու՝** ձեռնպահ մնալու իրավունքների խախտումներից՝ մարդու իրավունքների իրացմանը չմիջամտելով և դրանք չսահմանափակելով,
- **կանխարգելելու** երրորդ անձանց (օրինակ՝ մասնավոր ընկերությունների) կողմից իրավունքների խախտումները,
- **ապահովելու** մարդու իրավունքների լիարժեք իրացումը՝ ձեռնարկելով դրական քայլեր:

Ժողովրդավարական պետության մեջ իշխանությունը գոյություն ունի ոչ թե մարդկանց իշխելու, այլ ծառայելու համար: Այդ պատճառով պետությունը պարտավոր է

հարգելու, պաշտպանելու և ապահովելու մարդու իրավունքները: Բայց իրականում երբեմն հենց պետությունն է վտանգում մարդու իրավունքները, օրինակ.

- երբ մարդուն փակ կամ կիսափակ հաստատություններում պահում է վատ պայմաններում,
- երբ թույլ չի տալիս ազատ արտահայտվել,
- երբ խտրականություն է դրսևորում:

Եթե, ասենք, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում ասվում է, որ ամեն մարդ ունի կյանքի իրավունք, ապա պետությունը պարտավոր է իր պաշտոնատար անձանց միջոցով չսպանելու մարդուն, պաշտպանելու ուրիշների կողմից սպանվելուց, ստեղծելու պայմաններ, որ մարդը կարողանա ապրել՝ ունենալով սնունդ, բուժում, անվտանգություն, իսկ սպանության գործերով էլ անցկացվի համակողմանի և արդյունավետ քննություն:

Իրավաբան Ռոնալդ Դվորկինն ասում էր. «Իրավունքները թագավորություն են մեծամասնության դեմ»[17]: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները պաշտպանում են մեզ նույնիսկ այն ժամանակ, երբ մեզ հակադրվում է նույնիսկ պետությունը: Օրինակ՝ եթե ամբողջ հասարակությունը որոշի, որ ինչ-որ խումբ չպետք է իրավունքներ ունենա, մարդու իրավունքները թույլ չեն տա, որ այդ որոշումն ընդունվի, քանի որ դա կխախտի արժանապատվությունը:

Այս գաղափարը գործում է նաև Սահմանադրական դատարանում[18], երբ ստուգում են՝ արդյոք օրենքները խախտում են մարդու արժանապատվությունը, նաև Եվրոպական դատարանում, որը որոշում է՝ արդյոք պետությունն իր գործողություններով արժանապատվորեն է վերաբերվել մարդուն: Օրինակ՝ Եվրոպական դատարանը «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» գործով համարել էր, որ մարդուն պահել են վատ պայմաններում, ինչը նվաստացրել է նրան, և վճռել, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելք) խախտում՝ դիմումատուին քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելու, ինչպես նաև բողոքարկման վարույթի ընթացքում մետաղյա ճաղավանդակի մեջ պահելու առնչությամբ: Իսկ մեկ այլ՝ «Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով՝ Դատատարանն ընդգծել էր, որ նույնիսկ արտակարգ դրության ժամանակ չի կարելի խախտել մարդու արժանապատվությունը:

Հետևաբար, հարկ է նկատել, որ պետությունը կարևոր պարտավորություն ունի ներպետական օրենսդրական կարգավորումներ նախատեսելիս, իսկ դատարանները՝ ձեռնպահ մնալու մարդու իրավունքների խախտումներից:

17 Dworkin, R., Taking Rights Seriously, Harvard University Press, 1977, p. 184.

18 ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 3:

13.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Նախ և առաջ հարկ է նկատել, որ մարդու իրավունքների գործողությունը ստանդարտ իրավիճակ է: Այսինքն՝ մարդու իրավունքները գոյություն ունեն առանց նախապայմանների, և դա նորմ է: Պետական բոլոր մարմինները, պետության բոլոր ներկայացուցիչները պետք է գործեն՝ ապահովելու և պաշտպանելու մարդու իրավունքները: **Իրավունքների սահմանափակումը ընդհանուր կանոնից բացառություն է:** Եվ ինչպես ընդհանուր կանոնից ամեն մի բացառություն կամ շեղում, պետք է իրականացվի հստակ նախանշված սահմաններով, և պետությունը չպետք է դուրս գա դրանցից: **Մարդու իրավունքների սահմանափակման մեխանիզմը պետք է լինի հստակորեն ամրագրված:** Այն չի կարող կամայական լինել միայն այն պատճառով, որ այդպես է ցանկացել ոստիկանական բաժնի կամ այլ պաշտոնատար անձ: Բոլոր իրավունքները չեն, որ սահմանափակվում են, սակայն կան բացարձակ իրավունքներ, որոնք չեն սահմանափակվում որևէ իրավիճակում: Մարդու որոշ իրավունքներ բացարձակ են: Այլ կերպ ասած՝ պետությունները չեն կարող սահմանափակել այդ իրավունքները կամ շեղվել դրանցից որևէ կերպ կամ որևէ պատճառով: Այս իրավունքների բացարձակ բնույթը նշանակում է, որ դրանք չեն կարող սահմանափակվել նույնիսկ ռազմական կամ արտակարգ իրավիճակների պայմաններում կամ հանուն հանրային շահի: Դաշնագրերում և կոնվենցիաներում հստակորեն նշված է, թե որ իրավունքներն են սահմանափակվում, և որոնք՝ ոչ: ՄԱԿ դաշնագրերում նշված է նաև, թե որ իրավունքներից չի կարելի շեղվել նույնիսկ արտակարգ դրության ժամանակ: Դրանք են ա) կամայականորեն կյանքից զրկելու արգելքը, բ) խոշտանգումների արգելքը, գ) ստրկությունից զերծ մնալու իրավունքը, դ) արդար դատաքննության իրավունքը: Այնինչ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համատեքստում բացարձակ են միայն ա) խոշտանգումների արգելքը և բ) ստրկությունից ու հարկադիր աշխատանքից զերծ մնալու իրավունքը:

Իրավունքների մեծ մասը կարող է սահմանափակվել, բայց խիստ որոշակի դեպքերում՝ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում կամ հանրային շահերը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու կամ այլ անձանց իրավունքները պաշտպանելու համար: Այսպես, **արտակարգ և ռազմական դրության** ժամանակ թույլատրվում է որոշ իրավունքներից շեղվել (դերոգացիա):

Արտակարգ դրությունը և ռազմական դրությունը իրավական կոնկրետ ռեժիմներ են, որոնք պետք է պաշտոնապես հայտարարվեն, և որոնց մասին պետք է ծանուցվեն Դաշնագրերի մյուս մասնակիցները ՄԱԿ գլխավոր քարտուղարի միջոցով: Սա ոստիկանական բաժնի կամ քրեակատարողական հիմնարկի պետի կոնկրետ կարծիք չէ այն մասին, որ դրությունը դարձել է արտակարգ, և մարդու իրավունքները դադարել են պաշտպանվելուց տվյալ տարածքում: Եթե պետությունը չի կատարել ընթացակարգը, ապա նման սահմանափակումները օրինաչափ չեն լինի, և վիճարկման դեպքում կարձանագրվի խախտում:

Երկրորդ հանգամանքը հանրային շահի պաշտպանության համար մարդու իրավունքների սահմանափակումներն են: Խաղաղ ժամանակ մարդու կոնկրետ իրավունքի սահմանափակումը հնարավոր է, եթե ապահովված են այդ իրավունքի սահմանափակումների թույլատրելիության չափանիշները, ինչպիսիք են.

- **Ձևը:** Սահմանափակումները պետք է **նախատեսվեն միայն օրենքով:** Նախ՝ սահմանափակման հնարավորությունն ինքնին պետք է ամրագրված լինի օրենքում, որը չի հակասում սահմանադրությանը կամ միջազգային պայմանագրերին: Երկրորդ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն պետք է ձևակերպվի համապատասխան ակտով, որը պետք է պարունակի նպատակի պատշաճ հիմնավորում:
- **Նպատակները:** Սահմանափակումները **անհրաժեշտ են** որոշակի հասարակական հարաբերությունների, ինչպես նաև այլ անձանց իրավունքների ու ազատությունների պահպանման համար: Կոնկրետ դեպքերը, երբ իրավունքը կարող է սահմանափակվել, որպես կանոն, նշված են միջազգային պայմանագրերում, սահմանադրության մեջ, նորմատիվ ակտերում: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ կիրառման ենթակա է սահմանված շրջանակներից ամենանեղը. **չի կարելի ընդլայնել արդեն իսկ նախատեսված սահմանափակումը:**
- **Համաչափություն:** Սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակության մեջ և լինի համարժեք: Այսինքն՝ սահմանափակումը պետք է լինի **նվազագույնը** նպատակին հասնելու համար: Աննշան նպատակին հասնելու համար չափազանց մեծ սահմանափակումը մարդու իրավունքների խախտում է: Այսինքն՝ պետք է պահպանվի շահերի հավասարակշռությունը նրա շահերի միջև, ում համար դրվում են սահմանափակումները (հասարակություն կամ անհատ), և նրա, ում իրավունքը սահմանափակվում է:

Հարկ է ընդգծել, որ իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող թողնվել պետության հայեցողությանը. դրանք պետք է համապատասխանեն երկրի սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ու միջազգային մյուս պայմանագրերով սահմանված չափանիշներին: Նախ՝ իրավունքների սահմանափակումներ կամ իրավունքներից շեղումներ հնարավոր են միայն

օրենքով և կոնկրետ իրավաչափ նպատակների համար: Ընդ որում՝ սահմանափակումներ նախատեսող օրենքը պետք է ունենա առավելագույն հստակություն և բացառի դրա կիրառության ընթացքում կամայական մեկնաբանության կամ անորոշ ընկալման տեղիք տվող դրույթներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերով՝ մարդու իրավունքներից և ազատություններից շեղումները կարող են համարվել թույլատրելի, եթե դրանք խստորեն անհրաժեշտ են և բխում են իրավիճակից, ինչպես նաև չեն հանգեցնում իրավունքի կամ իշխանության չարաշահման: Կարևոր է նաև, որ բոլոր սահմանափակումներն ունենան իրավական հիմք և համապատասխանեն վերաբերելի սահմանադրական երաշխիքներին ու պահանջներին[19]:

Պետության հայտարարած իրավաչափ նպատակին հասնելու համար գործադրվող սահմանափակումները պետք է կիրառվեն հնարավորինս նվազագույն չափով (less restrictive), իսկ պետության ձեռնարկած քայլերը պետք է լինեն վերջին միջոց (last resort), առանց որի հնարավոր չէ վերահսկել իրավիճակը: Պետությունը պետք է հավաստի, որ մնացած միջոցներն արդյունավետ և բավարար չեն հանրային առողջությունը պահպանելու տեսանկյունից: Պարտադիր է նաև հստակ և կանխատեսելի իրավական հիմքի առկայությունը[20]:

Սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության մեջ, համաչափ լինեն նպատակին և կրեն ժամանակավոր բնույթ[21]: Այս պահանջների նկատմամբ մոտեցումն ավելի խիստ է այն դեպքերի համար, երբ խոսքը ոչ թե գործունեության առանձին տեսակների կամ առանձին խումբ անձանց նկատմամբ կիրառվող, այլ համընդհանուր նշանակության սահմանափակումների մասին է[22]:

Պետությունը պետք է հավաստի այս բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը: Անհրաժեշտ է նաև ղեկավարվել այն հիմնարար սկզբունքով, թե որքանով են պետության առաջարկած սահմանափակումները նպաստում, օրինակ, վարակի կանխարգելմանն ու դրա տարածման դեմ պայքարին, հետևաբար նաև բնակչության առողջության պաշտպանության, այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության և այլ իրավաչափ նպատակների իրականացմանը:

19 Տե՛ս՝ Mehmet Hasan Altan v. Turkey, գանգատ թիվ 13237/17, 20 մարտ 2018:

20 Տե՛ս՝ Enhorn v. Sweden, գանգատ թիվ 56529/00, 25 հունվար 2005:

21 Տե՛ս՝ Kuimov v. Russia, գանգատ թիվ 32147/04, 8 հունվար 2009:

22 Տե՛ս՝ Rotaru v. Romania, գանգատ թիվ 28341/95, 4 մայիս 2000:

14.

ԻՆՉՈ՞Ւ ՈՐՈՇ ԽՄԲԵՐ ՈՒՆԵՆ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հատուկ իրավունքներն անհրաժեշտ են **խոցելի խմբերին** պաշտպանելու համար, որոնք պատմականորեն բախվել են խտրականության կամ պայքարել են համակարգային խոչընդոտների դեմ: Այդ իրավունքներն ապահովում են, որ նրանք ունենան նույն հնարավորություններն ու պաշտպանությունը, ինչ մյուսները: Դրանք ներառում են այնպիսի պայմանների ապահովում, ինչպիսիք են մատչելիությունը (օրինակ՝ թեքահարթակներ, սուրդոթարգմանիչներ) կամ հատուկ իրավական պաշտպանությունը (օրինակ՝ խտրականությունն արգելող օրենսդրական կարգավորումներ), միտված չեն ոչ թե արտոնություններ շնորհելուն, այլ **հավասար պայմաններ** ստեղծելուն, որպեսզի բոլոր անհատներն արդյունավետորեն կարողանան իրացնել իրենց հիմնարար իրավունքները: Հատուկ իրավունքներն անհրաժեշտ են անցյալի և ներկայի խտրականության շարունակվող ազդեցությունը հաստատագրելու և ապահովելու համար, որպեսզի այս խմբերը **չհայտնվեն անբարենպաստ վիճակում:** Հատուկ իրավունքները **խրախուսական գործողության** (affirmative action) ձև են, որոնք նպատակ ունեն այս խմբերին դնելու համահավասար դիրքի: Թիրախային աջակցություն տրամադրելու նպատակն է ապահովել, որ հավասար իրավունքների սկզբունքը լինի իրականություն բոլորի համար, այլ ոչ միայն ցանկալի իրավիճակ:

Մասնավորապես՝ կանայք շատ երկրներում իրավունք չեն ունեցել քվեարկելու, կամ նրանց ընտրական իրավունքը պայմանավորվել է իրենց գույքային դրությամբ, փախստականները հաճախ ապրում են առանց որևէ պաշտպանության, երեխաները չեն կարող ամբողջությամբ հոգալ իրենց և ունեն հատուկ պաշտպանական իրավունքներ: Այս խմբերի նկատմամբ հատուկ ուշադրությունը նշանակում է, որ մարդու իրավունքները կարող են լինել ընդհանուր բոլորի համար, բայց որոշ դեպքերում նաև խորացված՝ որոշակի խումբ պաշտպանելու նպատակով:

14.1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՆ

Շատ երկար ժամանակ երեխաներին չէին համարում առանձին իրավունքներ ունեցող անձինք: Նրանց վերաբերվում էին որպես մեծահասակներից կախված և միայն

խնամքի կարիք ունեցող անձանց: Սակայն 1989 թ. ՄԱԿ-ն ընդունում է մի կարևոր փաստաթուղթ՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան (CRC), որը հիմնովին փոխում է այդ մտածելակերպը[23]: Այս կոնվենցիան առաջինն էր, որն ամբողջ աշխարհում երեխաներին ճանաչում է որպես իրավունքներ ունեցող ամբողջական սուբյեկտների, այսինքն՝ անձանց, որոնց իրավունքները պետք է պաշտպանվեն ինչպես մեծահասակներինը:

Կոնվենցիան ամրագրում է, որ բոլոր երեխաները, անկախ իրենց ազգությունից, մաշկի գույնից, սեռից, լեզվից կամ ընտանիքի սոցիալական կարգավիճակից, ունեն միևնույն հիմնական իրավունքները: Դրանցից են՝

- ապրելու իրավունք,
- կրթություն ստանալու իրավունք,
- առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունք,
- բռնությունից, շահագործումից և անտեսումից պաշտպանվելու իրավունք,
- կարծիք ունենալու և այն արտահայտելու իրավունք:

Կոնվենցիան հիմնված է չորս հիմնական սկզբունքի վրա.

1. **Երեխայի լավագույն շահը:** Յուրաքանչյուր որոշում, որ վերաբերում է երեխային (օրինակ՝ դատարանի վճիռ, ծնողական խնամք, պետական քաղաքականություն), պետք է դիտարկվի երեխայի շահից ելնելով:
2. **Խտրականության արգելք:** Բոլոր երեխաները հավասար են իրենց իրավունքներով, և նրանց նկատմամբ չի կարելի տարբեր վերաբերմունք ցուցաբերել՝ ելնելով որևէ անձնական հատկանիշից:
3. **Կյանքի և զարգացման իրավունք:** Երեխաներն ունեն ոչ միայն ապրելու, այլև լիարժեք զարգանալու իրավունք:
4. **Երեխայի կարծիքի հարգում:** Երեխաները կարող են արտահայտել կարծիք իրենց վերաբերող հարցերի մասին, և այն պետք է լսվի՝ հաշվի առնելով երեխայի տարիքն ու հասունության մակարդակը:

Կոնվենցիան ընդգրկում է բոլոր հիմնական ոլորտները, որոնցում երեխան պետք է պաշտպանված լինի: Օրինակ՝ այն սահմանում է, որ պետությունները պետք է ապահովեն կրթության մատչելիություն (հատկապես պարտադիր և անվճար տարրական կրթություն), առողջապահության որակյալ ծառայություններ և պաշտպանեն երեխաներին, օրինակ, թրաֆիքինգի կամ ընտանիքում բռնության ենթարկվելուց:

Կոնվենցիայի իրագործումը վերահսկում է **Երեխայի իրավունքների կոմիտեն**, որը կազմված է տարբեր երկրների անկախ մասնագետներից: Պետությունները, որոնք միացել են կոնվենցիային, պարբերաբար ներկայացնում են իրենց երկրում երեխա-

23 «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունված 20.11.1989:

ների իրավունքների պաշտպանության մասին զեկույցներ: Որոշ դեպքերում, հատկապես հատուկ արձանագրությունների հիման վրա, կոմիտեն քննարկում է նաև անհատական բողոքներ:

Այս փաստաթուղթը դարձել է աշխարհի ամենաշատ վավերացված միջազգային պայմանագիրը[24]. դրան միացել է 196 պետություն: Միայն շատ փոքրաթիվ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ն, դեռ չեն վավերացրել այն: CRC-ն ցույց է տալիս, որ երեխաների իրավունքների պաշտպանությունը ոչ միայն բարոյական, այլև իրավական պարտավորություն է բոլոր պետությունների համար:

Այս կոնվենցիան մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհում՝ կառավարություններին ստիպելով վերանայելու և բարելավելու կրթության, առողջապահության և երեխաների պաշտպանության ոլորտներում իրականացվող քաղաքականությունները: Այժմ շատ օրենքներ և ծրագրեր ստեղծվում են հենց այս կոնվենցիայի հիման վրա:

14.2. ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ և Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆ

Երբ մարդիկ թողնում են իրենց երկիրը և մեկնում են ուրիշ պետություն՝ աշխատելու, նրանց կոչում են **միգրանտ աշխատողներ**: Նրանք կարող են լինել թե՛ օրինական՝ վավեր փաստաթղթերով, թե՛ անօրինական՝ առանց թույլտվության: Շատերը այս քայլն անում են՝ հույս ունենալով լավ աշխատանք գտնելու, ընտանիքի համար ավելի լավ կյանք ապահովելու կամ նրան գումար ուղարկելու համար: Սակայն իրենց ճանապարհին միգրանտները հաճախ բախվում են դժվարությունների: 20-րդ դարում, երբ աշխարհում ավելի ու ավելի շատ մարդիկ են սկսում տեղափոխվել մի երկրից մյուսը, հաճախ արձանագրվում էին նաև **խտրականության, շահագործման** (այսինքն՝ առանց համապատասխան վարձատրության կամ պայմանների աշխատեցնելու) և **իրավազրկության** դեպքեր: Օրինակ՝ որոշ երկրներում միգրանտներին ստիպում էին աշխատելու երկար ժամերով՝ առանց արձակուրդի, վճարում էին շատ քիչ գումար կամ նույնիսկ զրկում էին առողջապահական ծառայություններից:

Այս խնդիրներին պատասխանելու համար ՄԱԿ-ը 1990 թ. ընդունում է **Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան**[25]: Այն ուժի մեջ է մտնում 2003-ին: Այս կոնվենցիան հստակորեն ասում է, որ **միգրանտ աշխատողները մարդ են, ինչպես բոլորը, և ունեն նույն հիմնական իրավունքները՝ անկախ նրանից՝ օրինական են երկրում, թե ոչ:**

24 Ratification Status for CRC - Convention on the Rights of the Child, taken 07.05.2025.

25 International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of their Families. New York, 18 December 1990.

Այդ իրավունքներն են.

- **անվտանգություն և արժանապատվություն** (չպետք է վատ վերաբերմունքի արժանանան, բռնության ենթարկվեն կամ ստորացվեն),
- **արդար վարձատրություն** (պետք է ստանան այն գումարը, որը համապատասխանում է իրենց աշխատանքին),
- **առողջապահության հասանելիություն** (անհրաժեշտության դեպքում պետք է ստանալն բժշկական օգնություն),
- **կրթություն** (նրանց երեխաները պետք է հնարավորություն ունենան հաճախելու դպրոց),
- **արհմիությանը միանալու իրավունք** (կարող են իրենց աշխատանքային շահերը պաշտպանել),
- **խտրականությունից զերծ մնալու իրավունք** (միգրանտներին չի կարելի տարբեր կերպ վերաբերվել միայն այն պատճառով, որ օտարերկրացի են):

Կոնվենցիան առանձնահատուկ ուշադրություն է դարձնում երեխաների և կանանց իրավունքներին, քանի որ նրանք հաճախ առավել խոցելի են: Օրինակ՝ պահանջում է, որ երեխաները վնասակար կամ չափազանց ծանր աշխատանք չկատարեն, և որ կանայք պաշտպանված լինեն, հատկապես հղիության կամ մայրության ընթացքում:

Իսկ ինչպե՞ս է վերահսկվում այս ամենի իրագործումը: Կոնվենցիան պետություններին պարտավորեցնում է կատարելու դրանում նշված դրույթները, և միգրանտների նկատմամբ պահպանելու **մարդկային վերաբերմունք** նույնիսկ այն դեպքում, երբ երկրում ապօրինաբար են բնակվում: Այնուամենայնիվ, այս փաստաթուղթը դեռ ոչ բոլոր պետություններն են վավերացրել: Հատկապես այն երկրները, ուր միգրանտները գնում են աշխատելու, դեռևս չեն միացել կոնվենցիային: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ կոնվենցիան պարտադրում է պաշտպանելու նաև անօրինական միգրանտների իրավունքները, ինչը երբեմն քաղաքական առումով բարդություն է առաջացնում:

Հայաստանի Հանրապետությունը այս կոնվենցիան ստորագրել է 2013 թ., բայց դեռ չի վավերացրել[26], ինչը նշանակում է, որ Հայաստանը սկզբունքորեն համաձայն է դրանում նշված գաղափարներին, բայց դեռ չի սկսել կիրառել դրանք որպես իրավական պարտավորություն:

Այս կոնվենցիան կարևոր ուղեցույց է միջազգային իրավունքի աշխարհում: Այն հիշեցնում է, որ մարդու իրավունքները պետք է հարգեն **առաջին հերթին մարդուն՝ անկախ նրանից, թե որտեղ է կամ ինչ կարգավիճակ ունի**: Սահմանը հատելը չի նշանակում, որ մարդու իրավունքները պետք է դադարեն գործելուց:

26 UNTC, taken 05.07.2025.

14.3. Ի՞ՆՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Շատ երկար ժամանակ հասարակությունը հաշմանդամություն ունեցող անձանց դիտարկել է որպես խնամքի կարիք ունեցողների՝ մոռանալով, որ նրանք նախ և առաջ մարդ են՝ իրենց իրավունքներով, ցանկություններով ու կարողություններով: Շատերը չեն կարողացել օգտվել կրթությունից, աշխատել, մասնակցել ընտրություններին կամ նույնիսկ ազատորեն տեղաշարժվել, որովհետև հասարակական կյանքը նրանց համար նախատեսված չէր: Պատկերացրեք մի քաղաք, որտեղ սայլակով մարդկանց համար չկա թեքահարթակ, իսկ հանրային տրանսպորտը հարմարեցված չէ նրանց հատուկ կարիքներին: Այս ամենն է խոչընդոտ, ոչ թե հենց հաշմանդամությունը:

2006 թ. ՄԱԿ-ն ընդունում է մի կարևոր փաստաթուղթ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան (CRPD)[27], որը նախատեսում է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն նույն իրավունքները, ինչ մյուս մարդիկ, և հասարակությունը նրանց համար պարտավոր է ապահովելու իրենց իրավունքներից լիարժեքորեն օգտվելու հնարավորություն:

Այս կոնվենցիան հիմնված է մի շարք կարևոր սկզբունքների վրա: Դրանցից են՝

- **արժանապատվության հարգումը** (յուրաքանչյուր մարդ, անկախ իր վիճակից, արժանի է հարգանքի),
- **ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքը** (մարդը պետք է հնարավորություն ունենա ընտրելու, օրինակ, որտեղ և ինչպես ապրի),
- **ներառականությունը** (հասարակությունը պետք է կառուցվի այնպես, որ բոլորը, առանց բացառության, կարողանան մասնակցել դրան),
- **խտրականության արգելքը** (որևէ մեկին չի կարելի տարբեր կերպ վերաբերվել միայն նրա հաշմանդամության պատճառով),
- **հասանելիությունը** (պետք է լինեն հարմարեցված շենքեր, հաղորդակցման միջոցներ, ուսումնական նյութեր ևն):

Կոնվենցիան առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև կանանց և երեխաներին, որովհետև նրանք ավելի հաճախ են բախվում խտրականության և բռնության:

- Այս փաստաթուղթը պետություններից պահանջում է կոնկրետ քայլեր: Օրինակ՝
- կառուցել շենքեր և փողոցներ, որոնք հարմար են բոլորի համար,
- տրամադրել շոշափելի տեքստեր (Բրայլի այբուբենով) կույր մարդկանց համար,
- կազմակերպել նշանային լեզվի թարգմանություն լսողության խնդիր ունեցող անձանց համար,

27 «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունված 30.03.2007:

- աջակցել ինքնուրույն ապրելու հնարավորություններին, այսինքն՝ ոչ թե մարդկանց փակել հատուկ հաստատություններում, այլ օգնել, որ նրանք ապրեն իրենց համայնքներում:

Կարևոր է նկատել, որ կոնվենցիան կազմվել է հենց հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ: Նրանք չեն եղել պարզապես դիտորդներ կամ շահառուներ, այլ իրենք են գրել, քննարկել ու մշակել այդ փաստաթուղթը: Սա ցույց է տալիս, որ նրանք ոչ թե խնամքի օբյեկտ են, այլ ակտիվ քաղաքացիներ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան մեծ քայլ էր այն գաղափարի ուղղությամբ, որ բոլոր մարդիկ հավասար են: Այն մեզ հիշեցնում է, որ խնդիրն ինքը մարդը չէ, այլ այն խոչընդոտները, որ ստեղծում է հասարակությունը:

14.4. ԲՌՆԻ ԱՆՀԵՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՆ

Պատկերացրեք իրավիճակ, երբ ինչ-որ մարդ հանկարծ անհետանում է, և ընտանիքը ոչ մի տեղեկություն չունի նրա մասին: Ոչ ոք չգիտի՝ նա կալանավորված է, մահացել է, թե պարզապես անհետացել: Երբ այդ անհետացումը կազմակերպված է պետության կողմից կամ նրա համաձայնությամբ, և հատուկ փորձ է արվում թաքցնելու ճշմարտությունը, դա կոչվում է բռնի անհետացում**:** Այս երևույթը լուրջ խնդիր է: Այն խախտում է մարդու հիմնարար իրավունքները՝ թե՛ անհետացած անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների: Այդ պատճառով ՄԱԿ-ը 2006 թ. ընդունում է մի կարևոր փաստաթուղթ՝ «Բռնի անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, որն ուժի մեջ է մտնում 2010-ին:[28] Այս կոնվենցիան ստեղծվել է երեք հիմնական նպատակով՝

1. կանխելու բռնի անհետացումները**,**
2. պարզելու արդեն տեղի ունեցած դեպքերի ճշգրիտ հանգամանքները,
3. պաշտպանելու զոհերի և նրանց ընտանիքների իրավունքները և պատժելու մեղավորներին**:**

Այն խոսում է ոչ միայն անհետացած մարդկանց մասին, այլև նրանց ընտանիքների, որոնք ապրում են մշտական վախի, անորոշության և ցավի մեջ՝ չիմանալով հարազատի ճակատագիրը:

Բռնի անհետացումը չի խախտում միայն մեկ իրավունք. այն միաժամանակ խաթարում է մի քանի կարևոր իրավունք՝

- **կյանքի իրավունքը** (քանի որ անհայտ է, թե արդյոք մարդը ողջ է),

28 «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիա, ընդունված 20.12.2006:

- **անձնական ազատության և անվտանգության իրավունքը** (որովհետև մարդուն կարող են պահել գաղտնի վայրում առանց որևէ դատավարության),
- **խոշտանգումների արգելքը** (քանի որ անհետացման պայմաններում մարդը հաճախ ենթարկվում է կտտանքների),
- **ընտանեկան կյանքի իրավունքը** (ընտանիքը չի կարող իմանալ կամ տեսնել հարազատին):

Կոնվենցիան ասում է, որ բռնությամբ անհետացումը պետք է ճանաչվի որպես հանցագործություն, իսկ որոշ լուրջ դեպքերում՝ նույնիսկ մարդկության դեմ ուղղված: Պետությունները պարտավորվում են՝

- ❖ վերացնելու նման երևույթը,
- ❖ պարզելու անհետացած մարդկանց գտնվելու վայրը,
- ❖ ազատելու նրանց (եթե հնարավոր է), կամ, եթե մահացած են, վերադարձնելու մարմինները հարազատներին,
- ❖ տեղեկություն տալու ընտանիքներին,
- ❖ ուժեղացնելու օրենքները, որպեսզի մեղավորները պատասխանատվության ենթարկվեն:

Կոնվենցիայի իրականացումը վերահսկում է Հարկադիր անհետացումների հարցերով կոմիտեն, որը ստուգում է, թե պետություններն ինչպես են կատարում կոնվենցիայի պահանջները, ուսումնասիրում է անհատական բողոքներ, որոշ դեպքերում օգնում է գտնելու անհետացած մարդկանց:

Այս կոնվենցիան հատկապես կարևոր է այն երկրներում, որտեղ եղել են պատերազմներ, հեղաշրջումներ կամ բռնապետական ռեժիմներ: Այդ ժամանակ շատ մարդիկ են անհետանում, և հասարակությունը սպասում է պատասխանների: Կոնվենցիան աջակցում է անցումային արդարադատությանը՝ օգնելով վերականգնելու ճշմարտությունն ու արդարությունը:

15.

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հարկ է նկատել, որ չկա գեթ մեկ երկիր, որտեղ չեն խախտվում մարդու իրավունքները, սակայն ժողովրդավար և իրավական երկրները ոչ ժողովրդավար և իրավական երկրներից տարբերվում են նաև այն գործուն մեխանիզներով, որոնք հնարավորություն են ընձեռում արդյունավետորեն վերականգնելու մարդու խախտված իրավունքները: ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «.... մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»[29]: Սահմանադրությունը երաշխավորում է մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը, հարգումը և պաշտպանությունը պետության կողմից: Սահմանադրության 61-րդ հոդվածը նախատեսում է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»[30]: Այս դրույթը կազմում է մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հիմքը:

Մարդու իրավունքների պաշտպանության իրավական համակարգը բաղկացած է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մեխանիզմներից: Քաղաքացին կարող է պաշտպանել իր խախտված իրավունքը վարչական մարմիններում, դատական համակարգում, արբիտրաժի և հաշտարարության միջոցով, ինչպես նաև դիմել մարդու իրավունքների պաշտպանին կամ միջազգային ատյաններ, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

15.1. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Եթե մարդու իրավունքները խախտվել են վարչական որոշման կամ գործողության հետևանքով, քաղաքացին կարող է բողոք ներկայացնել վերադաս պետական մարմ-

29 ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ., հոդված 3:

30 ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 61:

նին: Այս գործընթացը կարգավորվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով:

Վարչական բողոքի ներկայացման համար օրենսդիրը սահմանել է հետևյալ ժամկետները՝

- վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից՝ 1 ամսվա ընթացքում,
- գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ 1 տարվա ընթացքում,
- վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից կամ վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից՝ 2 ամսվա ընթացքում[31]:

Ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Ժամկետը կարող է վերականգնվել, եթե այն բաց է թողնվել վարույթի մասնակցից անկախ պատճառներով:

Բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերացնելուց հետո վարույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել 15 օրվա ընթացքում՝ նշելով ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները): Վարչական մարմինը, որի վարույթում է վարչական բողոքը, վերականգնում է բաց թողնված ժամկետը և բողոքն ըստ էության քննարկում և լուծում է, եթե բողոքով կամ բողոքի քննարկման ընթացքում հիմնավորվում է բողոք բերողից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) բողոքարկման ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարույթի մասնակիցը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ: 30-օր է սահմանված նաև վարչական վարույթի առավելագույն ժամկետի համար[32]: Այսօր Հայաստանում ներդրված վարչական դատավարության էլեկտրոնային հարթակը առավել մատչելի է դարձնում վարչական դատավարությունը՝ հնարավորություն տալով կիրառելու թվային դարի արդյունավետ գործիքակազմը: Վերադասության կարգով բողոքի քննությունը պարտադիր չէ, սակայն վարչական վարույթի արդյունավետ միջոց է, որը հաճախ կանխում է դատական գործընթացը:

31 «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.02.2004, հոդված 71:

32 «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.02.2004, հոդված 46:

15.2. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դատական պաշտպանության իրավունքը ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ (հոդածներ 61 և 63) և «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով: Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան[33]:

- Դատական համակարգը եռաստիճան է: ՀՀ-ում գործում են Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ, առաջին ատյանի ընդհանուր իրավասության, ինչպես նաև մասնագիտացված դատարանները և Սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն, ի թիվս այլոց, նաև ՀՀ քաղաքացիները, եթե կա հիմնավոր կասկած, որ օրենքը, որը կիրառվել է վերջնական դատական ակտում հանգեցրել է անձի հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը (օրենքով սահմանվում են նաև Սահմանադրական դատարան դիմելու անձանց և պատկան մարմինների շրջանակը և պայմանները)[34]: Սահմանադրական դատարանն իրականացնում է օրենքների և իրավական ակտերի սահմանադրականության վերահսկողություն:

Առաջին ատյանի դատարաններն են՝
1. ընդհանուր իրավասության դատարանները;
2. մասնագիտացված դատարանները, որոնք են՝
    - վարչական դատարանը,
    - սնանկության դատարանը,
    - հակակոռուպցիոն դատարանը:

Վերաքննիչ դատարաններն են՝
1. վերաքննիչ քրեական դատարանը,
2. վերաքննիչ քաղաքացիական դատարանը,
3. վերաքննիչ վարչական դատարանը,
4. վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը[35]:
5. **Վարչական դատարանում** քննվում են պետական մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ ներկայացված հայցերը: Վարչական դատարան դիմելու ժամկետները սահմանված են Վարչական դատավարության օրենսգրքով[36]:

33 ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015:

34 ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 169:

35 Դառական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 2:

36 Վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 05.12.2013, հոդված 72:

- **Քաղաքացիական դատարանում** քննվում են անձնական ոչ գույքային և գույքային վեճերը, օրինակ՝ սեփականության իրավունքի, պարտքային հարաբերությունների, ընտանեկան վեճերի:

Քաղաքացիական դատավարության կարգով կարող են ներկայացվել թե՛ հայցադիմումներ, թե՛ դիմումներ և հատուկ վարույթներ, որոնք ունեն իրավական տարբեր կարգավորումներ:

❖ Հայցադիմում ներկայացվում է, երբ հայցվորը պահանջում է դատական պաշտպանության իրականացում ընդդեմ պատասխանողի կոնկրետ իրավախախտման: Այս պարագայում հարցը լուծվում է հակամարտ իրավահարաբերության շրջանակում: Հայցադիմումի ձևին, բովանդակությանը և ներկայացման կարգին վերաբերող նորմերը ամրագրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում[37]:
❖ Դիմում կարող է ներկայացվել ոչ հայցային վարույթով (հատուկ կամ այլ վարույթի կարգով), երբ տվյալ իրավահարաբերության շրջանակում բացակայում է հակամարտ կողմ, և պահանջն ուղղված է ոչ թե որևէ անձի դեմ, այլ, օրինակ, որևէ փաստի հաստատմանը կամ իրավական պաշտպանության որոշակի միջոցի կիրառմանը:
❖ Հատուկ վարույթները, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-36-րդ գլուխներում, ինչպիսիք են գրանցման վարույթները, փաստերի հաստատման վարույթները ևն[38]:

- **Քրեական գործերով դատարաններում** իրավունքների վերականգնումն իրականացվում է նախաքննության և դատաքննության փուլերում: Քաղաքացին կարող է ճանաչվել տուժող և օգտվել քրեական դատավարությամբ սահմանված իրավունքներից, ինչպես նաև կրել պարտականություններ[39]:
- **Սնանկության դատարանը** մասնագիտացված դատարան է, որը «Սնանկության մասին» օրենքով և Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սնանկության գործերը: Սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը[40]:

Սնանկության դատարանը նշանակում է ժամանակավոր կառավարիչ, կայացնում է սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին վճիռ, պարտապանին ճանաչում է սնանկ կամ մերժում է սնանկ ճանաչելու դիմումը, կայացնում է պարտատերերի պահանջների վերջնական

37 Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 09.02.2018, հոդվածներ 121-124:
38 Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 09.02.2018, հոդված 237:
39 Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 30.06.2021, հոդված 50:
40 Դատական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 24, կետ 2:

ցուցակը հաստատելու մասին որոշում, ինչպես նաև իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

- **ՀՀ հակակոռուպցիոն դատարանը** ստեղծվել է կոռուպցիոն բնույթի քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված վարույթները, ինչպես նաև դատախազի հարուցած՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերի քննության նպատակով[41]:
- **Վերաքննիչ դատարանները** Հայաստանի դատական համակարգի երկրորդ ատյանն են և, օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, վերանայում են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը: Վերաքննիչ դատարանները գործում են քրեական, քաղաքացիական, վարչական և հակակոռուպցիոն գործերով[42]:
- **Վճռաբեկ դատարանը** դատական համակարգի բարձրագույն ատյանն է, որը ապահովում է օրենքների միասնական կիրառումը և դատական նախադեպային իրավունքի զարգացումը[43]:

Վճռաբեկ դատարանը վերաքննիչ ատյանի դատական ակտերի նկատմամբ բերած բողոքները վարույթ է ընդունում բացառիկ դեպքերում, երբ առկա է օրենքի սխալ կիրառման, հակասական դատական պրակտիկայի կամ մարդու հիմնարար իրավունքների խախտման վտանգ: Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են բոլոր դատարանների համար և իրավակիրառ պրակտիկայի ուղղորդիչ աղբյուր են:

15.3. Ի՞ՆՉ Է ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ

Այսօր առաջադեմ աշխարհում քաղաքացիաիրավական վեճերի լուծումը մեծապես պատվիրակում են, այսպես կոչված, ADR (Althernative Dispute Resolution) համակարգին՝ վեճերի լուծման այլընտրանքային եղանակին՝ դատարան դիմելու տարբերակը դիտարկելով որպես բացառիկ:

Արբիտրաժը վեճերի այլընտրանքային, արտադատական լուծման եղանակ է, որի դեպքում վեճի կողմերը համաձայնում են իրենց վեճը ներկայացնելու մեկ կամ մի քանի արբիտրներներից բաղկացած արբիտրաժային տրիբունալի: Արբիտրները

41 Դատական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 24, կետ 3:

42 Դառական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 39:

43 Դառական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 50:

անաչառ և անկողմնակալ անձինք են: Կողմերը պետք է համաձայնեն իրենց վեճն արբիտրաժ հանձնելու վերաբերյալ: Այդպիսի համաձայնությունը սովորաբար արբիտրաժային վերապահման տեսքով է լինում: Օրինակ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պայմանագիր կնքելիս առանձին դրույթով պայմանավորվում են իրենց միջև ծագելիք վեճերն արբիտրաժին հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային վերապահումը կարող է կնքվել նաև առանձին պայմանագրով: Մյուս դեպքն այն է, երբ կողմերն արբիտրաժային համաձայնություն են կնքում իրենց միջև առկա վեճն արբիտրաժի միջոցով լուծելու վերաբերյալ: Արբիտրաժի դեպքում կողմերն են ընտրում կիրառելի իրավունքը, ընթացակարգային իրավունքը, ինչպես նաև արբիտրաժի իրականացման վայրը և լեզուն: Գործընթացը կարելի է իրականացնել ինչպես **ad hoc**՝ հատուկ գործի համար կազմավորված տրիբունալի և քարտուղարության, այնպես էլ մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների միջոցով: Այսպիսի հաստատությունները, որպես կանոն, ունենում են իրենց արբիտրաժային կանոնները, արբիտրների ցանկ և իրականացնում են գործի քարտուղարությունը: Կողմերի վեճը լուծող արբիտրաժային տրիբունալի վճիռը վերջնական և պարտադիր է կողմերի համար, ենթակա չէ վերանայման ո՛չ արբիտրաժային տրիբունալների, ո՛չ դատարանների կողմից: Արբիտրաժային վճիռները կարելի է միայն սահմանափակ հիմքերով չեղարկել, իսկ դրանց (հարկադիր) կատարումն իրականացվում է եզրափակիչ դատական ակտերի իրականացման տրամաբանությամբ: ՀՀ օրենսդրությամբ մինչև 5 մլն դրամ հայցագնով արբիտրաժային վճիռները ենթակա են ուղղակիորեն կատարման, իսկ մնացած դեպքերում՝ դատարանից կատարողական թերթ տրամադրելուց հետո: Օտարերկրյա արբիտրաժային համաձայնագրերը և վճիռները ճանաչելու և կատարելու գործընթացը, որպես կանոն, իրականացվում է Նյու Յորքի կոնվենցիային (1958) համապատասխան, որը վավերացրել են ավելի քան 170 երկրներ: Արբիտրաժն իրավական տեսանկյունից առաջարկում է վեճերի լուծման արդյունավետ գործընթաց՝ դատարաններից դուրս, ինչը կարող է էապես նվազեցնել դատարանների ծանրաբեռնվածությունը: Արբիտրաժը հնարավորություն է տալիս ընտրելու վեճի առարկայի հետ կապված հատուկ փորձով և մասնագիտական գիտելիքներով օժտված արբիտրների, ինչը նպաստում է, որ բարդ տեխնիկական հարցեր ներառող վեճերն արդյունավետորեն քննվեն և ստանան լուծումներ: Ավելին՝ արբիտրաժային վարույթի գաղտնիությունը պաշտպանում է զգայուն տեղեկությունը, որը կարող է բացահայտվել գործը դատարաններին հանձնելու պարագայում:

Հաշտարարն անկախ, անկողմնակալ, գործի ելքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, որն իրականացնում է հաշտարարություն կողմերի միջև առկա վեճը հաշտությամբ լուծելու նպատակով: Հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա: Այն դեպքում, երբ օրենքով սահմանված է նախքան դատարան դիմելը հաշտարարի դիմելու պարտավորությունը, վեճի մասնակիցները պարտավոր են մասնակցելու

հաշտարարությանը, լսելու հաշտարարի կողմից ներկայացվող տեղեկությունը հաշտարարի դերի, հաշտարարության գործընթացի բնույթի ու էության, առավելությունների, վարման կարգի, հաշտության համաձայնության և, անհրաժեշտության դեպքում, նման համաձայնություն ձեռք չբերելու հետևանքների մասին:

Մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ օրենքով նախատեսված լինելու դեպքում անձը կարող է դատարան դիմել միայն հաշտարարությունն ավարտվելու պահից: Նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարության դեպքում վեճի կողմերն իրենք են ընտրում հաշտարարին, իսկ համաձայնության չհանգելու դեպքում հաշտարարին նշանակում է Արդարադատության նախարարությունը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա: Հաշտարարների ցանկում որպես տվյալ գործով հաշտարար նշանակվելու իրավունք ունեցող համապատասխան հաշտարարի թեկնածուի բացակայության դեպքում անձը կարող է դիմել դատարան՝ անկախ նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունն իրականացված լինելու փաստից, որի դեպքում հաշտարարի նշանակման անհնարինության վերաբերյալ թույլատրելի ապացույց է համարվում Արդարադատության նախարարության տված տեղեկանքը, որը պարունակում է պարտադիր նշում հաշտարարի նշանակման անհնարինության պատճառների վերաբերյալ:

15.4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: Պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թ. կոնվենցիայի 2002 թ. դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թ. նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումը, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելումը և պաշտպանությունը: Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելումը և պաշտպանությունը:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու մարդու իրավունքների պաշտպանին: Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել ինչպես փոստի, այնպես էլ պաշտպանին կամ նրա ներկայացուցչին անձամբ բողոք հանձնելու միջոցով և առցանց եղանակով: Պաշտպանին կարելի է դիմել նաև բանավոր: Եթե անձը կարծում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պաշտոնատար անձը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունը խախտել է իր իրավունքը, ապա կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանին:

Պաշտպանի քննարկմանը ենթակա հարցերի շարքում են նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումները: Այնուամենայինով, այս պարագայում պետք է առկա լինի տեղեկություն այն մասին, որ տեղի են ունեցել մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումներ, կամ այդ խնդիրն ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության հետ, որոնք չեն կարող դա իրականացնել ինքնուրույն:

Բողոքը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, կատարվում է բողոքի ուսումնասիրություն, որի հիման վրա պաշտպանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը և ծանուցում բողոք ներկայացրած անձին՝

1. բողոքը քննարկման ընդունելու մասին,
2. բողոքը չքննարկելու մասին,
3. բողոք ներկայացրած անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին,
4. բողոքն այլ մարմնի քննարկմանը փոխանցելու մասին:

Բողոքի հիման վրա հարցի քննարկման ընթացակարգ սկսելուց զատ՝ պաշտպանը կարող է քննարկում սկսել սեփական նախաձեռնությամբ, և օգտվել իրեն վերապահված բոլոր լիազորություններից, որոնք նա իրականացնում է բողոքի քննարկման կապակցությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգ է նախաձեռնում, եթե առկա են մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, եթե խոսքը վերաբերում է հանրային նշանակության հարցի, եթե խախտվել են այնպիսի անձանց իրավունքներ, որոնք չեն կարող ինքնուրույն պաշտպանել իրենց շահերը:

Բողոքի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ սկսած քննարկմամբ՝ պաշտպանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին,
2. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման բացակայության մասին,

3. մարդու իրավունքները կամ ազատությունները խախտող, օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին,
4. բողոքի քննարկումը դադարեցնելու մասին:

Անհատական դեպքերի քննարկմամբ վեր հանված համակարգային խնդիրների հիման վրա պաշտպանն առաջարկում է օրենսդրական փոփոխություններ և դիմումներ է հասցեագրում Սահմանադրական դատարան:

Պաշտպանին դիմելու համար պետական տուրք չի վճարվում[44]:

Դիմումը կարող է ներկայացվել 1 տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին[45]:

Պաշտպանը վարույթ չի ընդունում այն գործերը, որոնք արդեն քննարկվում են դատարանում, կամ գործի կապակցությամբ առկա է վերջնական դատական ակտ[46]:

15.5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԿԱՄ ՄԻԵԴ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը Եվրոպայի խորհրդի դատական մարմինն է, քննում է անհատներից ստացված, ինչպես նաև միջպետական գանգատները, որոնք մեկ կոնվենցիայի մասնակից պետությունները ներկայացնում են միմյանց դեմ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կազմված է անդամ-երկրների թվին համապատասխան դատավորներից (այժմ՝ 46), որոնք ներկայացված են որպես մասնագետներ և ոչ թե պետությունների ներկայացուցիչներ: Դատավորներին ընտրում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ 9-ամյա ժամկետով: Լիակազմ դատարանն ընտրում է իր նախագահին, երկու տեղակալներին և երկու ստորաբաժանումների նախագահներին՝ եռամյա ժամկետով: Դատարանն ունի չորս ստորաբաժանում, որոնց երեք տարով ամրագրված միացությունն ունի աշխարհագրական և սեռային հավասարակշռվածություն և հաշվի է առնում անդամ պետությունների տարբեր իրավական համակարգեր: Ստորաբաժանումները ղեկավարում են նախագահները, որոնցից երկուսը նաև դատարանի նախագահի տեղակալներն են: Յուրաքանչյուր ստորաբաժանում հիմնում է երեք դատավորից կազմված հանձնաժողով՝ մեկամյա ժամկետով: Յուրաքանչյուր ստորաբաժանման

44 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 17, կետ 3:

45 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 17, կետ 1:

46 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 21, կետ 3:

ներքո ստեղծվում է յոթ անդամներից կազմված պալատ՝ հերթագայության հիմունքով, ըստ որի՝ ստորաբաժանման նախագահը և դատավորն ընտրվում են յուրաքանչյուր գործին առնչվող պետության համապատասխան: Ընդ որում՝ դատավորը ստորաբաժանման անդամ չէ. նա մասնակցում է որպես պալատի ex officio անդամ: Դատարանի Մեծ պալատը կազմված է 17 դատավորից. ընդգրկված են նախագահը, նախագահի տեղակալները և ստորաբաժանումների նախագահները որպես ex officio անդամներ: Գործը կարող է քննվել Մեծ պալատում, եթե այն կարող է հանգեցնել Կոնվենցիայի կամ կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը:

Դատարանի բոլոր վերջնական վճիռները պարտադիր են գործին առնչվող պետությունների համար: Դատավճռի կատարման վերահսկման համար պատասխանատու է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն (որոշում է, թե արդյոք պետությունները, որոնց իրավասության ներքո հայտնաբերվել են Կոնվենցիայի խախտումներ, ձեռնարկել են բավարար մեղմացնող միջոցներ՝ կատարելու Դատարանի կայացրած հատուկ կամ ընդհանուր վճիռները): Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է տալ խորհրդատվական կարծիքներ իրավական հարցերում՝ կապված Կոնվենցիայի և կից արձանագրությունների մեկնաբանությունների հետ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և կից արձանագրություններով երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը հիմնված է սուբսիդիարության սկզբունքի վրա: Կոնվենցիայի անդամ պետությունների հիմնական խնդիրն է ապահովել Կոնվենցիայի կիրառումը. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետք է միջամտի միայն այն ժամանակ, երբ պետությունները թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ: ՄԻԵԴ-ի վերահսկողության անհրաժեշտությունը հիմնականում առաջանում է անհատական գանգատների ներկայացմամբ, որոնք Դատարան կարող է ներկայացնել Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անհատ կամ իրավաբանական անձ: Այդ է պատճառը, որ գանգատ ներկայացնող պոտենցիալ դիմումատուների շրջանակը լայն է: Միևնույն ժամանակ կա նաև միջպետական գանգատի ինստիտուտը, որը նշանակում է, որ յուրաքանրյուր բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և կից արձանագրությունների դրույթների ամեն ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ բարձր պայմանավորվող կողմ:

Անհատական գանգատի իրավունքն արդարացիորեն համարվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիմնական առանձնահատկությունը և մեծագույն ձեռքբերումը: Այն անձինք, որոնք կարծում են, որ իրենց իրավունքները

խախտվել են, հնարավորություն ունեն բողոք ներկայացնելու Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Սակայն գոյություն ունեն Կոնվենցիայով նախատեսված ընդունելիության կարևոր պահանջներ, որոնք պետք է բավարարվեն, որպեսզի գործով քննություն անցկացվի: Օրինակ՝ դիմումատուները պետք է սպառեն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները և իրենց բողոքը ներկայացնեն չորս ամսվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը: Դատարանը Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում է:

ՄԻԵԴ-ը քննության է ընդունում միայն այն գանգատները, որոնք ներկայացված են Կոնվենցիան վավերացրած պետության դեմ և վերաբերում են այն իրավախախտումներին, որոնք տեղի են ունեցել պետության կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո:

Դատարանը քննության չի ընդունում անհատական գանգատը, եթե անանուն է կամ ըստ էության վերաբերում է այն նույն հարցին, որը Դատարանն արդեն քննել է, կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

«Դատարանը կարող է գանգատներ ընդունել յուրաքանչյուր անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների.... խախտման զոհ»[47]:

Անհատական գանգատները պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ ըստ դիմումատուների՝ ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք և անձանց յուրաքանչյուր խումբ:

Ամեն անձ, անկախ իր ազգությունից, բնակության վայրից, քաղաքացիական կարգավիճակից, իրավիճակից կամ իրավունակությունից, կարող է վստահ լինել անդամ պետության դեմ Կոնվենցիայի տրամադրած պաշտպանությանը, եթե ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել պետության իրավազորության ներքո: Գանգատները կարող են ներկայացվել միայն ողջ անձանց կողմից կամ նրանց անունից. մահացած անձը չի կարող դիմում ներկայացնել: Այս համատեքստում կարևոր է ներկայացնել անմիջական զոհի և անուղղակի զոհի տարբերությունը: Գանգատ ներկայացնելու համար դիմումատուն պետք է ապացուցի, որ այն դեպքը, որի մասին բողոքել է իր վրա անմիջական ներգործություն է ունեցել: Եթե ենթադրյալ խախտման զոհը մահացել է մինչև գանգատ ներկայացնելը, հնարավոր է, որ մտերիմ ազգական անձը կարողանա զոհի մահվան կամ անհետացման մասին բողոքի առնչությամբ գան-

47 Practical Guide on Admissibility Criteria, updated on 31 August 2024 .

գատ ներկայացնի: Սա պայմանավորված է ենթադրյալ խախտման բնույթով՝ դեպքի առանձնահատկությամբ և Կոնվենցիայի համակարգի հիմնարար դրույթների արդյունավետ կիրառման նկատառումներով: Նման գործերով Դատարանն ընդունել է, որ ընտանիքի անդամները, օրինակ՝ այն անձի ծնողները, որի մահը կամ անհայտացումը ենթադրում է պետության պատասխանատվության հարցի քննարկում, կարող են իրենց համարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) ենթադրյալ խախտման անուղղակի զոհ: Մոտ ազգականը կարող է իր մահացած կամ անհետացած բարեկամի անունից ներկայացնել նաև այլ բողոքներ, օրինակ՝ Կոնվենցիայի 3-րդ (խոշտանգումների արգելք) և 5-րդ (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) հոդվածների շրջանակներում՝ պայմանով, որ ենթադրյալ խախտումները սերտորեն կապված են մահվան կամ անհետացման հետ և առաջ են բերում 2-րդ հոդվածին վերաբերող խնդիրներ:

Կոնվենցիայով նախատեսված իրավունքի՝ անդամ պետության թույլ տված խախտման զոհ լինելը պնդող **իրավաբանական անձը** կարող է հանդես գալ Դատարանում, եթե հասարակական կազմակերպություն է:

Այսպիսով, նշվածներից ոչ մեկը չի կարող 34-րդ հոդվածի հիմքով գանգատ ներկայացնել Դատարան: Գանգատ կարող են ներկայացնել **մի խումբ անձինք**: Սակայն տեղական իշխանությունները կամ կառավարական այլ մարմիններ պետության կողմից պատժելի և իրենց վերաբերելի արարքների առնչությամբ իրենց անդամների կամ իրենց ներկայացնող և իրենց անունից հանդես եկող անձանց միջոցով չեն կարող գանգատ ներկայացնել:

15.5.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը: Նախնական փուլում դիմումատուների կամ նրանց ներկայացուցիչների հետ ամբողջ հաղորդակցությունը և վերջիններիս բանավոր կամ գրավոր փաստարկները կարող է իրականացվել դիմումատուի պետական լեզվով: Եթե այն պետությունը, որի դեմ ներկայացվել է գանգատը տեղեկացվել կամ ծանուցվել է գանգատի մասին, գանգատը և կից փաստաթղթերը շահագրգիռ պետությանը տրամադրվում են այն լեզվով, որով դիմումատուն ներկայացրել է դրանք քարտուղարություն: Լսումների, ինչպես նաև պետությանը գանգատի մասին ծանուցելուց հետո դիմումատուների կամ նրանց ներկայացուցիչների հետ ամբողջ հաղորդակցությունը և վերջիններիս բանավոր կամ գրավոր փաստարկները ներկայացվում են Դատարանի պաշտոնական լեզուներից մեկով, եթե Պալատի նախագահը թույլ չի տալիս շարունակել օգտագործել դիմումատուի պետական լեզուն: Գործով կողմ հանդիսացող պետության հետ ամբողջ հաղորդակցությունը և վերջիններիս բանավոր կամ գրավոր փաստարկները ներկայացվում են

Դատարանի պաշտոնական լեզուներից մեկով: Պալատի նախագահը կարող է պետությանը թույլատրել բանավոր կամ գրավոր փաստարկների համար օգտագործել իր պետական լեզուներից մեկը:

Առանձին անհատներ, հասարակական կազմակերպություններ կամ անհատների խմբեր կարող են սկզբում գանգատներ ներկայացնել **ինքնուրույն կամ ներկայացուցչի միջոցով**: Պետությանը գանգատի մասին ծանուցելուց հետո դիմումատուն պետք է ներկայացված լինի փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կողմից, եթե Պալատի նախագահը չի կայացնում այլ որոշում: Դիմումատուն պետք է ներկայացված լինի Պալատի նշանակած բոլոր լսումներին, եթե Պալատի նախագահը բացառության կարգով թույլ չի տալիս դիմումատուին ինքնուրույն ներկայացնել իր գործը և անհրաժեշտության դեպքում օգտվել փաստաբանի կամ հաստատված այլ ներկայացուցչի օգնությունից: Դիմումատուի անունից հանդես եկող ներկայացուցիչը պետք է լինի փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող փաստաբան կամ Պալատի նախագահի հաստատած որևէ այլ անձ: Փաստաբանը կամ հաստատված այլ ներկայացուցիչ կամ դիմումատուն, որ ցանկանում է ստանալ իր գործն անձամբ ներկայացնելու թույլտվություն, պետք է ունենա Դատարանի պաշտոնական լեզուներից մեկի համարժեք իմացություն:

Մուտքագրվող յուրաքանչյուր գանգատ ներկայացվում է **գրավոր, և այն ստորագրում** է դիմումատուն կամ դիմումատուի ներկայացուցիչը: Եթե դիմումատուն հասարակական կազմակերպություն է կամ անհատների խումբ, ստորագրում են անձինք, որոնք իրավասու են ներկայացնելու այդ կազմակերպությունը կամ խումբը: Գանգատը ստորագրած անձանց իրավասության հարցերը պարզում է համապատասխան Պալատը կամ Կոմիտեն: Եթե դիմումատուները ներկայացված են ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացուցիչ(ներ)ը պետք է ունենա(ն) լիազորագիր կամ լիազորությունները հաստատող գրավոր այլ փաստաթուղթ:

Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիմքով մուտքագրվող **գանգատը ներկայացվում է** քարտուղարության տրամադրած գանգատի օրինակելի ձևի հիման վրա, եթե Դատարանն այլ որոշում չի կայացնում: Դիմումի ձևը հասանելի է առցանց՝ դատարանի կայքում[48]: Այն պարունակում է բոլոր տեղեկությունները, որոնք պահանջվում են գանգատի օրինակելի ձևի համապատասխան բաժիններում, այդ թվում՝ (ա) դիմումատուի անունը, ծննդյան թիվը, քաղաքացիությունը և հասցեն, իսկ եթե դիմումատուն իրավաբանական անձ է՝ լրիվ անվանումը, գրանցման ամսաթիվը, պետական գրանցման համարը (լինելու դեպքում) և իրավաբանական հասցեն. (բ) եթե դիմումատուն ունի ներկայացուցիչ՝ նրա անունը, հասցեն, հեռախոսի և ֆաքսի համարները,

48 www.echr.coe.int.

էլեկտրոնային փոստի հասցեն. (գ) եթե դիմումատուն ունի ներկայացուցիչ՝ գանգատի օրինակելի ձևի լիազորման մասում ամսաթիվը և դիմումատուի ստորագրության բնագիրը, ներկայացուցչի ստորագրության բնագիրը, որը վկայում է դիմումատուի անունից գործելու համաձայնության մասին. (դ) բարձր պայմանավորվող կողմի կամ կողմերի անվանումը, որոնց դեմ բերվել է գանգատը. (ե) փաստերի հակիրճ և հստակ շարադրանքը. (զ) Կոնվենցիայի ենթադրյալ խախտման կամ խախտումների հակիրճ և հստակ շարադրանքը և վերաբերելի փաստարկները. (է) հակիրճ և հստակ հայտարարություն Կոնվենցիայի սահմանված ընդունելիության չափորոշիչներին համապատասխանելու մասին:

Նշված ամբողջ տեղեկությունը պետք է բավարար լինի, որ Դատարանը կարողանա որոշել գանգատի էությունը և ծավալն առանց այլ փաստաթղթերի օգնության: Դիմումատուն, սակայն, կարող է լրացնել տվյալները՝ գանգատի օրինակելի ձևին կից ներկայացնելով փաստերի, Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների և վերաբերելի փաստարկների լրացուցիչ մանրամասներ: Նման տեղեկության ծավալը չպիտի գերազանցի 20 էջը:

Գանգատի օրինակելի ձևը ստորագրում է դիմումատուն կամ դիմումատուի ներկայացուցիչը և դրան կից ներկայացվում են՝ (ա) բողոքարկվող դատական կամ այլ բնույթի որոշումներին կամ գործողություններին առնչվող փաստաթղթերի պատճեններ. (բ) փաստաթղթերի և որոշումների պատճեններ, որոնք ապացուցում են, որ դիմումատուն կատարել է ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառելու պահանջը և պահպանել ժամկետը. (գ) համապատասխան դեպքերում՝ միջազգային քննության այլ վարույթի կամ կարգավորման առնչվող փաստաթղթերի պատճեններ. (դ) եթե դիմումատուն իրավաբանական անձ է՝ փաստաթուղթ կամ փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ գանգատը ներկայացրած անհատն ունի դիմումատուին ներկայացնելու իրավունք կամ լիազորություն:

Գանգատը հիմնավորելու համար ներկայացվող փաստաթղթերը թվարկվում են ըստ ժամանակագրության, հաջորդական համարակալումով և հստակորեն նույնականացվում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատները կարող են **մուտքագրվել** քարտողարություն այցելելու և գանգատը գրանցելու միջոցով կամ ուղարկելով այն ստորև ներկայացված հասցեով.

The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
67075 Strasbourg Cedex
FRANCE

Ֆաքսով ուղարկված դիմումը չի կասեցնում Կոնվենցիայով սահմանված քառամսյա ժամկետի ընթացքը: Դիմողը պարտավոր է չորս ամսվա ընթացքում Դատարան ուղարկելու նաև ստորագրված բնօրինակը փոստով:

Դիմումատուն պետք է բարեխիղճ լինի դատարանի քարտուղարության հետ նամակագրության մեջ: Պատասխանի հետաձգումը կամ պատասխանի բացակայությունը կարող է դիտվել որպես նշան, որ դիմողն այլևս շահագրգռված չէ վերանայելու իր դիմումը:

Դիմումատուները, որոնք չեն ցանկանում բացահայտել իրենց ինքնությունը, տեղեկացնում են այդ մասին և ներկայացնում հայտարարություն, որում նշում են Դատարանում քննվող գործի մասին տեղեկության մատչելիության ընդունված կանոնից շեղումը հիմնավորող պատճառներ: Դատարանը կարող է թույլատրել անանունությունը կամ շնորհել այն սեփական նախաձեռնությամբ: Նշված պահանջները չկատարելու հետևանքով Դատարանը չի քննում գանգատը՝ բացառությամբ, եթե (ա) դիմումատուն ներկայացրել է պահանջը չկատարելու հիմնավոր բացատրություն. (բ) գանգատը պարունակում միջանկյալ միջոց կիրառելու միջնորդություն. (գ) Դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ դիմումատուի միջնորդությամբ կայացնում է այլ որոշում:

Դատարանն ամեն պարագայում կարող է դիմումատուից պահանջել պատշաճ ձևաչափով, եղանակով և սահմանված ժամկետներում ներկայացնել տեղեկություններ կամ փաստաթղթեր:

Գանգատի մուտքագրման ամսաթիվ է համարվում սահմանված ընթացակարգի պահանջներին բավարարող գանգատի օրինակելի ձևը Դատարան ուղարկելու ամսաթիվը: Ուղարկելու ամսաթիվ է համարվում փոստային կնիքի ամսաթիվը: Հիմնավոր գտնելու դեպքում Դատարանը կարող է, այդուհանդերձ, որոշել, որ մուտքագրման ամսաթիվ համարվի այլ ամսաթիվ: Դիմումատուները տեղեկացնում են Դատարանին հասցեի կամ գանգատին վերաբերվող բոլոր հանգամանքների ամեն մի փոփոխության մասին:

Եթե դիմումատուի ներկայացրած նյութերն ինքնին բավարար են եզրակացնելու համար, որ գանգատն **անընդունելի է** կամ պետք է հանվի քննության ենթակա գործերի ցուցակից, գանգատը քննում է միանձնյա դատավոր, եթե չկան այլ կերպ վարվելու հատուկ պատճառներ:

Եթե գանգատը ներկայացված է բոլոր կանոնների պահպանմամբ և **ընդունելի է՝** Պալատի նախագահը, որին մակագրվել է գործը, նշանակում է զեկուցող դատավոր, որը քննում է գանգատը:

Գանգատներ քննելու ընթացքում զեկուցող դատավորները՝ (ա) կարող են առաջարկել կողմերին սահմանված ժամկետում ներկայացնել փաստական տեղեկություններ, փաստաթղթեր կամ այլ նյութեր, որոնք նրանք կարևոր են համարում. (բ) որոշում են՝ արդյոք գանգատը պետք է քննության առնի միանձնյա դատավոր, Կոմիտե կամ Պալատ՝ պայմանով, որ սեկցիայի նախագահը կարող է կարգադրել, որ գործը քննի Պալատ կամ Կոմիտե. (գ) ներկայացնում են զեկույցներ, նախագծեր կամ այլ փաստաթղթեր, որոնք կարող են օգնել Պալատին, կամ Կոմիտեին կամ համապատասխան նախագահին կատարելու գործառույթները:

Միանձնյա դատավորը կարող է անընդունելի ճանաչել կամ Դատարանի գործերի ցուցակից հանել ներկայացված գանգատը, եթե նման որոշում կարելի է կայացնել առանց լրացուցիչ քննության: Որոշումը վերջնական է: Այն պարունակում է ամփոփ հիմնավորում: Դիմումատուն տեղեկացվում է որոշման մասին: Եթե միանձնյա դատավորը չի կայացնում նման որոշում, այդ դատավորը հետագա քննության նպատակով փոխանցում է գանգատը Կոմիտե կամ Պալատ:

Դիմումատուն, որը ցանկանում է ստանալ **արդարացի բավարարում** այն դեպքում, եթե Դատարանը գտնի Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների խախտում, պետք է ներկայացնի համապատասխան պահանջ: Դիմումատուի ըստ էության առարկությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետում դիմումատուն պետք է ներկայացնի բոլոր պահանջների մանրամասն ցանկ՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերով հանդերձ: Եթե դիմումատուն չի կատարում նախորդող մասերում սահմանված պահանջները, Պալատը կարող է ամբողջությամբ կամ մասամբ մերժել դրանք: Դիմումատուի պահանջները փոխանցվում են պատասխանող պետությանը մեկնաբանությունների համար:

Գանգատն ընդունելի ճանաչելուց հետո քարտուղարը կապ է հաստատում կողմերի հետ՝ խնդրի **բարեկամական կարգավորում** ապահովելու նպատակով: Պալատը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները նման կարգավորմանն աջակցելու համար: Բարեկամական կարգավորման բանակցությունները գաղտնի են և չեն ազդում կողմերի դիրքորոշումների վրա վեճի քննության ընթացքում: Վեճի քննության ընթացքում չի թույլատրվում հղումներ կատարել և որպես հիմք օգտագործել բարեկամական կարգավորման հանգելու նպատակով կատարված գրավոր կամ բանավոր հաղորդումները, առաջարկությունները կամ զիջումները: Եթե քարտուղարը տեղեկացնում է Պալատին, որ կողմերը համաձայնվել են բարեկամական կարգավորման, Պալատը, համոզվելով, որ կարգավորումը ձեռք է բերվել հարգելով Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում սահմանված մարդու իրավունքները, ապա հանում է գործը Դատարանի ցուցակից:

15.5.2. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Պետությունը կամ պետությունները ՄԻԵԴ են ներկայացնում միջպետական գանգատ, որը պարունակում է՝ (ա) պետության անվանումը, որի դեմ է գանգատը. (բ) փաստերի շարադրանքը. (գ) Կոնվենցիայի ենթադրյալ խախտման կամ խախտումների շարադրանքը և վերաբերելի փաստարկները. (դ) հայտարարություն Կոնվենցիայով սահմանված ընդունելիության չափորոշիչներին համապատասխանելու մասին. (ե) գանգատի առարկան և ենթադրյալ տուժող կողմի կամ կողմերի՝ Կոնվենցիայով նախատեսված արդարացի բավարարման պահանջների ընդհանուր նկարագրությունը. (զ) պաշտոնական ներկայացուցիչ նշանակված անձի կամ անձանց անունները և հասցեները, և կից ներկայացվող (է) գանգատի առարկային վերաբերվող բոլոր վերաբերելի փաստաթղթերի, մասնավորապես դատական կամ այլ որոշումների պատճենները:

Միջպետական գանգատ ներկայացնելու դեպքում գործը քննելու համար կազմավորված պալատն իր մեկ կամ մի քանի դատավորների նշանակում է զեկուցող դատավոր(ներ), որ գործով կողմերի գրավոր առարկությունները ստանալուց հետո պատրաստում է զեկույց գանգատի ընդունելիության մասին: Զեկուցող դատավորը(ներ)ը ներկայացնում է զեկույցներ, նախագծեր և այլ փաստաթղթեր, որոնք կարող են օգնել Պալատին և դրա նախագահին կատարելու գործառույթները:

Դատարանի նախագահը գանգատի մասին անհապաղ ծանուցում է պատասխանող պետությանը և մակագրում գանգատը սեկցիաներից մեկին: Դրանից հետո սեկցիայի նախագահը ձևավորում է Պալատը և առաջարկում պատասխանող պետությանը գրավոր ներկայացնել գանգատի ընդունելիության վերաբերյալ իր առարկությունները: Նման եղանակով ստացված առարկությունները քարտուղարը փոխանցում է դիմումատու պետությանը, որը կարող է ի պատասխան ներկայացնել գրավոր առարկություններ: Պալատի նախագահը կարող է առաջարկել կողմերին ներկայացնել լրացուցիչ գրավոր առարկություններ մինչև գանգատի ընդունելիության մասին որոշում կայացնելը: Ընդունելիության վերաբերյալ լսում կազմակերպվում է, եթե այդ մասին միջնորդում է շահագրգիռ պետությունը կամ եթե Պալատը սեփական նախաձեռնությամբ կայացնում է նման որոշում: Մինչև գրավոր և, համապատասխան դեպքերում, բանավոր վարույթի կարգը սահմանելը Պալատի նախագահը խորհրդակցում է կողմերի հետ:

15.5.3. ԻՆՉ Է ՊԻԼՈՏԱՅԻՆ ՎՃՌՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

ՄԻԵԴ-ը կարող է նախաձեռնել պիլոտային վճռի վարույթ և կայացնել պիլոտային վճիռ, եթե գանգատում շարադրված փաստերը վկայում են այն մասին, որ պետու-

թյան մեջ առկա է կառուցվածքային կամ համակարգային խնդրի կամ այլ նմանօրինակ դիսֆունկցիա, որի հետևանքով ծագել կամ կարող են ծագել նմանօրինակ գանգատներ:

Մինչև պիլոտային վճռի վարույթ նախաձեռնելը Դատարանը նախ հայցում է կողմերի կարծիքը՝ արդյոք քննության առարկա գանգատը տվյալ պետության մեջ կառուցվածքային կամ համակարգային նմանօրինակ խնդրի կամ դիսֆունկցիայի արդյունք է, և արդյոք ընդունելի է գանգատի քննության տվյալ վարույթը: Դատարանը կարող է սկսել պիլոտային վճռի վարույթ սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի կամ երկու կողմերի միջնորդությամբ: Պիլոտային վճռի վարույթի համար ընտրված որևէ գանգատի քննությունն անցկացվում է առաջնահերթության կարգով:

Դատարանը պիլոտային վճռում նշում է իր պարզած կառուցվածքային կամ համակարգային խնդրի կամ դիսֆունկցիայի բնույթը, ինչպես նաև տվյալ խնդիրը կարգավորելու միջոցները, որոնք տվյալ պետությունը պարտավոր է ձեռնարկելու ներպետական մակարդակում՝ վճռի եզրափակիչ մասի պահանջների համաձայն:

Դատարանը պիլոտային վճռի եզրափակիչ մասում կարող է հրահանգել, որ նշված կարգավորման միջոցներն իրականացվեն սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով պահանջվող միջոցների բնույթը և ժամանակը, որը պահանջվում է ներպետական մակարդակում բացահայտված խնդիրը կարգավորելու համար:

Պիլոտային վճիռ կայացնելիս Դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասամբ հետաձգել արդարացի բավարարման հարցը մինչև պատասխանող պետությունն իրականացնի պիլոտային վճռով սահմանված անհատական և ընդհանուր միջոցները:

Համապատասխան դեպքերում Դատարանը կարող է հետաձգել նմանօրինակ բոլոր գանգատների քննությունը մինչև պիլոտային վճռով սահմանված կարգավորման միջոցների իրականացումը: Շահագրգիռ դիմումատուները պատշաճ տեղեկացվում են քննությունը հետաձգելու որոշման մասին: Նրանք պատշաճ կերպով տեղեկացվում են իրենց գործերի վրա ազդեցություն ունեցող համապատասխան բոլոր փոփոխությունների մասին: Դատարանը ամեն պահի կարող է քննել հետաձգված գանգատը, եթե դա են պահանջում արդարադատության պատշաճ իրականացման շահերը:

Եթե պիլոտային գործի կողմերը հանգում են բարեկամական կարգավորման մասին համաձայնության, նման համաձայնությունն ընդգրկում է պիլոտային վճռի մեջ նշված ընդհանուր միջոցների իրականացման, ինչպես նաև փաստացի կամ հնարավոր դիմումատուներին առաջարկվող փոխհատուցման մասին պատասխանող պետության հայտարարություն:

Եթե պետությունը չի կատարում պիլոտային վճռի եզրափակիչ մասի պահանջները Դատարանը վերսկսում է գանգատների քննությունը, որոնք հետաձգվել էին: Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը և Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների հանձնակատարը տեղեկացվում են պիլոտային վճիռ, ինչպես նաև յուրաքանչյուր այլ վճիռ կայացնելու մասին, որտեղ Դատարանն ուշադրություն է հրավիրում տվյալ պետության մեջ կառուցվածքային կամ համակարգային խնդրի գոյության փաստի վրա: Դատարանի կայքում տեղեկություններ են հրապարակվում պիլոտային վճռի վարույթներ նախաձեռնելու, պիլոտային վճիռներ կայացնելու և դրանց կատարման, ինչպես նաև նման վարույթները փակելու մասին:

Այսպիսով, պիլոտային վճիռները արդյունավետ գործիքակազմ են, որն իրավապաշտպանները կարող են կիրառել իրենց երկրներում համակարգային փոփոխությունների հասնելու համար և այդ նպատակին հասնելու համար պետք է իրականացնեն ռազմավարական դատավարություն:

15.5.4. ԳՐԱՎՈ՞Ր, ԹԵ՞Ր ԲԱՆԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱԳՈՎ Է ՔՆՆՎՈՒՄ ԳՈՐԾԸ ՄԻԵԴ-ՈՒՄ

Երբ գանգատը ճանաչվում է ընդունելի, Պալատը կամ դրա նախագահը կարող են առաջարկել կողմերին ներկայացնել լրացուցիչ ապացույցներ և գրավոր առարկություններ: Կողմերին տրվում է իրենց առարկությունները ներկայացնելու համար նույն ժամկետը, եթե այլ որոշում չի կայացվում: Պալատը կարող է կողմերից մեկի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կազմակերպել գործի ըստ էության լսում, եթե համարում է, որ դա է պահանջում Կոնվենցիայով նախատեսված իր գործառույթների կատարումը: Համապատասխան դեպքերում Պալատի նախագահը կարող է նշանակել գրավոր և բանավոր վարույթ:

ՄԻԵԴ-ում լսումները դռնբաց են, եթե բացառիկ հանգամանքներից ելնելով՝ Պալատը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի կամ այլ շահագրգիռ անձի միջնորդությամբ չի որոշում այլ կերպ: Լսումներն ամբողջությամբ կամ մասամբ կարող են դռնփակ լինել լրատվամիջոցների և հանրության առաջ՝ ժողովրդավարական հասարակության բարոյականության, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով, երբ դա է պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի գաղտնիության պաշտպանությունը կամ հատուկ հանգամանքներում առաջացած ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ Պալատի կարծիքով՝ հրապարակայնությունը վնաս կհասցնի արդարադատության շահերին: Դռնփակ լսում անցկացնելու միջնորդությունը պետք է ներկայացնի պատճառներ և պարզաբանի, որ այն վերաբերում է ամբողջ լսմանը կամ միայն դրա մի մասին:

Պալատի նախագահը կազմակերպում և վարում է լսումները, սահմանում այն հերթականությունը, որով Պալատի առջև պետք է ելույթ ունենան ներկայացած անձինք: Յուրաքանչյուր դատավոր կարող է հարցեր ուղղել Պալատի առջև ներկայացած անձին: Եթե որևէ կողմ կամ այլ անձ չի ներկայացել կամ հրաժարվել է լսումներին ներկայանալուց, Պալատը կարող է անցկացնել լսումը՝ համոզված լինելով, որ դա չի խոչընդոտում արդարադատության պատշաճ իրականացումը:

15.5.5. ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

ՄԻԵԴ վճիռները նախադեպային են և ունեն մեծ կարևորություն իրապաշատպան պրակտիկայի զարգացման առումով: ՄԻԵԴ նախադեպային իրավունքին հղումներ հաճախ արվում են ներպատական դատավարություններում, ինչպես նաև ներպետական դատարանների կայացրած վճիռներում:

ՄԻԵԴ վճիռը ձևական կողմի պահպանմամբ պարունակում է՝ (ա) նախագահի և այլ դատավորների անունները, որոնք ընդգրկված են տվյալ Պալատի կամ Կոմիտեի կազմի մեջ, քարտուղարի կամ քարտուղարի տեղակալի անունը. (բ) վճիռն ընդունելու և հրապարակելու ամսաթվերը. (գ) կողմերի մասին տվյալներ. (դ) կողմերի պաշտոնական ներկայացուցիչների, փաստաբանների և խորհրդատուների անունները. (ե) գործի քննության կարգը. (զ) գործի փաստերը. (է) կողմերի ամփոփ փաստարկները. (ը) իրավունքի հարցի հիմնավորումների շարադրանքը. (թ) եզրափակիչ դրույթներ. (ժ) ծախսերի վերաբերյալ որոշումը, եթե կա նման որոշում. (ժա) մեծամասնություն կազմող դատավորների անունները. (ժբ) անհրաժեշտության դեպքում նշում այն մասին, թե որ տեքստն է բնօրինակ:

Պալատի կամ Մեծ պալատի կազմում գործի քննությանը մասնակցած յուրաքանչյուր դատավոր իրավասու է վճռին կցելու առանձին կարծիք, որը համընկնում է վճռին կամ տարբերվում դրանից, կամ անհամաձայնության մասին պարզ հայտարարություն:

Արդարացի բավարարում շնորհելու ընթացքում Պալատը կամ Կոմիտեն կարող է նախատեսել, որ վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում շնորհված գումարին հաշվարկվեն տոկոսներ: Երբ Դատարանը տեղեկացվում է, որ տուժող կողմը և պատասխանող պետությունը հանգել են համաձայնության, ստուգում է համաձայնության արդարացի բնույթ ունենալու փաստը և, եթե համարում է, որ համաձայնությունն արդարացի է, գործը հանում է ցուցակից:

ՄԻԵԴ բոլոր որոշումները տրամադրվում են անգլերեն կամ ֆրանսերեն, եթե Դատարանը չի որոշում տրամադրել որոշումը երկու պաշտոնական լեզուներով: Մեծ պալատի որոշումները տրամադրվում են երկու պաշտոնական լեզուներով, և երկու լեզվական տարբերակներն ունեն հավասար իրավական ուժ:

Վճիռները ստորագրում են Մեծ պալատի կամ Կոմիտեի նախագահը և քարտուղարը: Պալատի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, այլ դատավոր կարող է ընթերցել Պալատի կայացրած վճիռը դռնբաց նիստին: Կողմերի պաշտոնական ներկայացուցիչները Դատարանում և ներկայացուցիչները պատշաճ ժամանակին տեղեկացվում են լսումների ամսաթվի մասին:

Վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե: Քարտուղարը վճռի օրինակներն ուղարկում է կողմերին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, երրորդ կողմերի, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների հանձնակատարին, և այլ ուղղակի շահագրգիռ անձանց՝ վճիռների կատարումն ապահովելու նպատակով: Վճռի պատշաճ ստորագրված բնօրինակը պահվում է Դատարանի արխիվում և հրապարակվում է Դատարանի պաշտոնական կայքում՝ https://hudoc.exec.coe.int/eng հղմամբ: Վճիռների հայերեն թարգմանությունները առկա են դառնում նաև պաշտոնական իրավական համակարգերում, մասնավորապես www.arlis.am կայքում:

15.5.6. ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՄԻԵԴ-ՈՒՄ ՍՏԱՆԱԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Պալատի նախագահը, անհատական գանգատ ներկայացրած դիմումատուի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, կարող է գործը ներկայացնելու համար անվճար իրավաբանական օգնություն տրամադրել դիմումատուին պատասխանող պետության գրավոր առարկություններն այդ գանգատի վերաբերյալ ստանալու կամ դրանք ներկայացնելու ժամկետը սպառվելու պահից: Եթե դիմումատուին տրամադրվել է գործը Պալատում ներկայացնելու համար անվճար իրավաբանական օգնություն, այդ օգնությունն ուժի մեջ է մնում գործը Մեծ պալատում ներկայացնելու ընթացքում: Իրավաբանական օգնություն տրամադրվում է միայն այն դեպքերում, երբ Պալատի նախագահը համոզված է՝ (ա) որ այն անհրաժեշտ է Պալատում գործի պատշաճ քննության համար. (բ) որ դիմումատուն չունի համապատասխան ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորելու բավարար միջոցներ: Պարզելու համար՝ արդյոք դիմումատուներն ունեն համապատասխան ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորելու բավարար միջոցներ, նրանցից պահանջվում է լրացնել հայտարարագրի ձև, որում նշվում է նրանց եկամուտը, ակտիվները և խնամքի տակ գտնվողների նկատմամբ ֆինանսական պարտավորությունները կամ այլ ֆինանսական պարտավորություններ: Հայտարարագիրը վավերացնում են համապատասխան ներպետական մարմինը կամ մարմինները: Պալատի նախագահը կարող է առաջարկել համապատասխան պետությանը ներկայացնել գրավոր դիտողություններ: Նշված տեղեկությունները ստանալուց հետո Պալատի նախագահը որոշում է իրավաբանական օգնություն տրամադրելու հարցը: Քարտուղարը համապատասխան որոշման մասին տեղեկացնում է կողմերին: Համապատասխան դեպքերում վարձատրություն կարող է ստանալ մեկից ավելի նման

ներկայացուցիչ: Որպես իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել ոչ միայն ներկայացուցիչների վարձատրությունը, այլև դիմումատուի կամ նշանակված ներկայացուցչի ճամփորդական և կեցության, ինչպես նաև այլ անհրաժեշտ ծախսեր ֆինանսավորելու համար: Իրավաբանական օգնություն տրամադրելու որոշում կայացնելուց հետո քարտուղարն ամրագրում է՝ (ա) վարձատրության չափը, որը ենթակա է վճարման իրավաբանական օգնության համար գործող դրույքաչափերով. (բ) վճարման ենթակա ծախսերի չափը: Պալատի նախագահը կարող է բեկանել կամ փոփոխել անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու որոշումը, եթե համարում է, որ նման որոշման կայացման համար հիմք հանդիսացող հանգամանքներն այլևս չեն պահպանվում:

16.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՄԱՆԴԱՏԸ

Մարդու իրավունքների պաշտպանությունը վաղուց արդեն դուրս է եկել միայն պետությունների իրավասության սահմաններից: Այսօր բազմաթիվ միջազգային կազմակերպություններ տարբեր երկրներում և ոլորտներում գործնականորեն ապահովում են այդ իրավունքների իրացումը:

16.1. ՄԱԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ[49]

Այսօր ՄԱԿ մարդու իրավունքների կորիզն են կազմում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ու հետևյալ ինը հիմնարար միջազգային պայմանագրերը.

- «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը,
- «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը,
- «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան,
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան,
- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիան,
- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան,
- «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան,

49 chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.moj.am/storage/uploads/66Binder.pdf.

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան,
- «Բռնի անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» կոնվենցիան:

Պետության կողմից վերը նշված ինը միջազգային պայմանագրերի կատարումը վերահսկում են տվյալ պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինները, այլ կերպ ասած՝ պայմանագրային մարմինները, որոնք անկախ փորձագետներից բաղկացած հանձնաժողովներ են: Յուրաքանչյուր պայմանագրի կատարումը իր իսկ հանձնաժողովն է մշտադիտարկում՝ անդամ պետության ներկայացրած զեկույցի, քաղաքացիական հասարակության տրամադրած տեղեկության, ինչպես նաև այլ աղբյուրների հիման վրա: Այսօր տվյալ ինը պայմանագրերի և մեկ լրացուցիչ արձանագրության վերահսկողությունն իրականացնում են հետևյալ տասը պայմանագրային մարմինները.

- Մարդու իրավունքների կոմիտեն,
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեն,
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն,
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն,
- Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեն,
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտեն,
- Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն,
- Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտեն,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն,
- Բռնի անհետացման հարցերով կոմիտեն:

Բացի ՄԱԿ-ի այս տասը պայմանագրային մարմիններից՝ մարդու իրավունքների ոլորտում պետության պարտավորությունների կատարման հանդեպ վերահսկողություն է իրականացնվում ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի, Համընդհանուր պարբերական դիտարկման, Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի միջոցով: ՄԱԿ մարդու իրավունքների մեխանիզմների գործունեության համակարգումը, իրենց գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և մարմինների մատչելիությունը և հասանելիությունը ապահովում է ՄԱԿ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը: ՄԱԿ մարդու իրավունքների մեխանիզմների, ներառյալ վերը նշված պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինների գործունեությամբ ձևավորվել է ծավալուն իրավական պաշար, որը հավաքագրվում և ամփոփվում է տվյալների շտեմարաններում: Մասնավորապես՝ վերջին տարիներին ստեղծվել է Մարդու իրավունքների համընդհանուր ինդեքսը (International Human Rights Index), որի միջոցով հնարավոր է տեղեկություն գտնել ՄԱԿ անդամ պետություններից յուրաքանչյուրի վերաբերյալ ընդունված որոշումների, եզրափակիչ դիտարկումների վերաբերյալ: Ստեղծվել են նաև մի շարք թեմատիկ և ըստ մարմինների տվյալների բազաներ:

Այսպիսով, ՄԱԿ-ն իր գործունեության գրեթե 70 տարում ձևավորել է մարդու իրավունքների պաշտպանության ծավալուն իրավական հիմք և միգուցե ոչ կատարյալ, սակայն գործուն մեխանիզմներ:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը գործում է ՄԱԿ գլխավոր վեհաժողովի 1993 թ. մարտի 20-ին ընդունած թիվ 48/141 բանաձևի հիման վրա: Հանձնակատարի գրասենյակը ՄԱԿ քարտուղարության մաս է, իսկ դրա աշխատանքները ղեկավարում է Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը, որի նպատակն է խրախուսել մարդու իրավունքների չափորոշիչները ՄԱԿ բոլոր ծրագրերի միջոցով, ինչպես նաև երաշխավորել, որ ՄԱԿ երեք հիմնասյուները՝ խաղաղությունն ու անվտանգությունը, զարգացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը, փոխկապակցված լինեն ՄԱԿ բոլոր մարմինների գործունեության շրջանակներում և հզորացնեն մեկը մյուսին: Հանձնակատարի գրասենյակը աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ մարդու իրավունքների մարմիններին՝ ներառյալ պայմանագրային մարմինները: Մարդու իրավունքների հանձնակատարի լիազորությունները հետևյալն են.

- խրախուսել և պաշտպանել մարդու իրավունքները բոլորի համար,
- առաջարկություններ ներկայացնել ՄԱԿ համակարգի իրավասու մարմիններին մարդու բոլոր իրավունքների խրախուսման և պաշտպանության բարելավման վերաբերյալ,
- խրախուսել և պաշտպանել զարգացման իրավունքը,
- տեխնիկական աջակցություն ցուցաբերել մարդու իրավունքների ոլորտում ծավալվող գործունեությանը,
- համակարգել ՄԱԿ կրթական և հանրային իրազեկվածության ծրագրերը,
- ակտիվ դերակատարում ունենալ մարդու իրավունքների իրացման ընթացքում խոչընդոտների վերացման շրջանակում,
- ակտիվ դերակատարում ունենալ մարդու իրավունքների տևական խախտումները կանխելու ուղղությամբ,
- երկխոսության մեջ մտնել կառավարությունների հետ՝ բոլորի համար մարդու իրավունքների հանդեպ հարգանք ապահովելու նպատակով,
- զարգացնել միջազգային գործակցությունը,
- համակարգել ՄԱԿ համակարգի՝ մարդու իրավունքների խրախուսման գործունեությունը:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գործունեության հիմնական ուղղություններն են՝ ա) չափորոշիչների սահմանումը, որի շրջանակում հանձնակատարի գրասենյակը փորձագիտական աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդին և պայմանագրային մարմիններին, և մարդու իրավունքների մշտադիտարկումը, բ) մարդու իրավունքների չափորոշիչների կիրարկման ապահովումը, որի շրջանակում հանձնակատարը սերտորեն գործակցում է կառավարության, տեղական

հասարակական կազմակերպությունների հետ, գ) մարդու իրավունքների վերաբերյալ կրթության և իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

ՄԱԿ մարդու իրավունքների խորհուրդը միջազգային իրավապաշտպան մարմին է, որը փոխարինել է Մարդու իրավունքների հանձնաժողովին: ՄԱԿ գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմինն է: Խորհրդի առաջին նիստը տեղի է ունեցել 2006 թ. հունիսի 19-ին: Մարդու իրավունքների խորհուրդը ստեղծվել է ՄԱԿ գլխավոր ասամբլեայի 2006 թ. մարտի 15-ին ընդունած 60/251 բանաձևով: ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի ստեղծման մասին բանաձևն ասում է, որ «Խորհրդի անդամները պետք է աջակցեն մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության ոլորտում ամենաբարձր չափանիշներին»: Գլխավոր ասամբլեան լիազորված է նրա անդամների երկու երրորդի քվեարկության միջոցով կասեցնելու խորհրդի անդամի իրավունքներն ու արտոնությունները, եթե համառորեն կատարում է մարդու իրավունքների կոպիտ և համակարգված խախտումներ:

Գլխավոր ասամբլեայի անդամներն ընտրում են 47 տեղ զբաղեցնող անդամներին: Յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է, և անդամներից ոչ մեկը չի կարող երկու ժամկետից ավելի զբաղեցնել: ՄԱԿ տարածաշրջանային խմբերի միջև տեղերը բաշխվում են հետևյալ կերպ. 13 տեղ՝ Աֆրիկայի, 13-ը՝ Ասիայի, 6-ը՝ Արևելյան Եվրոպայի, 8-ը՝ Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի, 7-ը՝ արևմտաեվրոպական և այլ պետությունների համար (ներառյալ Միացյալ Նահանգները, Կանադան և Իսրայելը):

Խորհուրդն իր գործունեությունը ծավալում է իր կազմում ձևավորված մի շարք մարմինների և մեխանիզմների միջոցով, որոնցից հարկ է անդրադառնալ՝

- գանգատների ընթացակարգին,
- Մարդու իրավունքների խորհրդատվական կոմիտեին,
- համընդհանուր պարբերական դիտարկմանը,
- հատուկ ընթացակարգերին:

Գանգատների ընթացակարգի շրջանակում Խորհուրդը ստանում է հաղորդումներ անհատներից, խմբերից կամ կազմակերպություններից, որոնք պնդում են, որ իրենք մարդու իրավունքների խախտումների զոհ են կամ ուղղակի և հավաստի տեղեկություն ունեն նման խախտումների մասին: Խորհուրդը, քննարկելով աշխատանքային խմբերի զեկույցները, կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը. ա) դադարեցնել տվյալ բողոքի վերաբերյալ քննությունը, բ) շարունակել իրավիճակի քննությունը և պետությունից պահանջել հետագա տեղեկություններ տրամադրել ողջամիտ ժամանակահատվածում, գ) շարունակել իրավիճակի քննությունը և նշանակել անկախ փորձագետ իրավիճակի մշտադիտարկում անցկացնելու և Խորհրդին այդ մշտադիտարկման արդյունքների մասին հայտնելու նպատակով, դ) առաջարկել Մարդու

իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին տեխնիկական, կարողությունների զարգացմանն ուղղված և խորհրդատվական ծառայություն տրամադրել ներգրավված պետությանը:

Մարդու իրավունքների խորհրդատվական կոմիտեն Մարդու իրավունքների խորհրդի համար ծառայում է որպես մարմին, որը Խորհրդի սահմանված ձևով և կարգով կատարում է հետազոտություններ և վերլուծություններ և առաջարկներ ներկայացնում Խորհրդին: Այն կազմված է 10 անկախ փորձագետներից: Խորհուրդը, որպես կանոն, ունենում է տարեկան ընդհանուր առմամբ 10 օր տևողությամբ երկու նստաշրջան: Խորհուրդը կազմված է 47 անդամներից, որոնց ընտրում է ՄԱԿ գլխավոր վեհաժողովը: Խորհրդի նիստերը սովորաբար հրավիրվում են տարեկան երեք անգամ: Խորհրդի նիստերը տևում են 10 շաբաթ: Կարող են հրավիրվել նաև Խորհրդի արտահերթ նիստեր:

Համընդհանուր պարբերական դիտարկման (Universal Periodic Review) համակարգը ներդրվել է ՄԱԿ գլխավոր վեհաժողովի թիվ 60/251 բանաձևով: Այն յուրատեսակ մեխանիզմ է, որը գնահատում է, թե որքանով են պետությունները կատարում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող իրենց պարտավորությունները, որոնք ամրագրված են ՄԱԿ կանոնադրության մեջ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այն փաստաթղթերում, որոնց միացել է դիտարկվող պետությունը, տվյալ պետության կամավոր ստանձնած պարտավորություններում ու հանձնառություններում և կիրառելի միջազգային հումանիտար իրավունքում:

Դիտարկումն արվում է 4 տարի պարբերականությամբ: Դիտարկման հիմնական փուլերն են՝ ա) տեղեկության նախապատրաստման փուլը, որի հիման վրա արվելու է դիտարկումը՝ ներառյալ Կառավարությունների ներկայացրած ազգային զեկույցների ընդունումը, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի պատրաստած՝ ՄԱԿ-ից տնօրինվող տեղեկությունների ամփոփումը, այլ կառույցներից ստացված տվյալների ամփոփումը, որը կրկին Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակն է պատրաստում. բ) քննարկում Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբում (դիտարկման ընթացքում Խորհրդի անդամների ցանկից կազմվում է 3 անդամից բաղկացած աշխատանքային խումբ, որը տվյալ պետության վերաբերյալ զեկուցողն է). գ) աշխատանքային խմբի կողմից ամփոփ զեկույցի ընդունումը:

Հատուկ ընթացակարգեր անվանման տակ հասկանում ենք այն մասնագիտացված փորձագետների և աշխատանքային խմբերի գործունեությունը, որոնք Մարդու իրավունքների խորհուրդն է հիմնում՝ առանձին պետություններում իրավիճակի կամ առաձին խնդիրների շուրջ մարդու իրավունքների վիճակի դիտարկման, մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության նպատակով: Թեմատիկ ման-

դատները վերանայվում են յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ, իսկ պետությունների վերաբերյալ մանդատները՝ յուրաքանչյուր տարի: Հատուկ մանդատ կրողներին աջակցություն է ցուցաբերում Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը:

Հատուկ ընթացակարգերը՝

- ընթացիկ կերպով տարբեր աղբյուրներից ստանում և վերլուծում են տեղեկատվություն մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ;
- կապ են պահպանում գործընկերների հետ և տեղեկությունները փոխանցում նրանց, պետական կառույցներին և ոչ պետական կազմակերպություններին, ՄԱԿ շրջանակներին և դրանցից դուրս;
- կառավարություններից պահանջում են, հաճախ հրատապ կերպով, պարզաբանումներ ենթադրյալ խախտումների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ձեռք են առնում միջոցներ մարդու իրավունքները երաշխավորելու և վերականգնելու նպատակով;
- բարձրացնում են իրազեկվածությունը մարդու իրավունքների խախտումների առանձին դեպքերի կամ խախտման վտանգի վերաբերյալ;
- առանձին դեպքերում իրենց մտահոգությունները հրապարակում են լրատվականների կամ հայտարարությունների միջոցով;
- կատարում են այցելություններ պետություններ և առաջարկներ են ներկայացնում կառավարություններին իրավիճակը շտկելու նպատակով;
- զեկուցում և առաջարկներ են ներկայացնում՝ այն դեպքում, երբ նախատեսված է մանդատով, Գլխավոր վեհաժողովին, իրենց մանդատի շրջանակում ծավալվող գործունեության, այցելած տարածքների և առանձին թեմատիկ խնդիրների վերաբերյալ;
- իրենց մանդատի շրջանակում կատարում են հետազոտություններ և կարող են իրավական գնահատական ներկայացնել առանձին հիմնախնդիրների վերաբերյալ:

16.2. AMNESTY INTERNATIONAL

Amnesty International-ը միջազգային կազմակերպություն է, որին անդամակցում է շուրջ 10 մլն մարդ ամբողջ աշխարհից: Կազմակերպությունն անկախ է քաղաքական գաղափարախոսություններից, կրոններից և տնտեսական շահերից: Նպատակն է տեսնել աշխարհ, որտեղ մարդիկ վայելում են իրենց իրավունքները, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Կազմակերպության հիմնական արժեքներն են՝

- միջազգային հանդուրժողականությունը,
- արդյունավետ գործողությունը տուժած անհատների համար,

- միջազգային լուսաբանումը,
- մարդու իրավունքների համընդհանրությունն ու անբաժանելիությունը,
- անաչառությունը և անկախությունը,
- ժողովրդավարությունը և մարդու իրավունքները:

Կազմակերպությունը զբաղված է այնպիսի կարևոր խնդիրների ուսումնասիրությամբ, ինչպիսք են՝ զինված կոնֆլիկտները, երեխաների իրավունքները, մահապատիժները, արտահայտման ազատությունը, կանանց իրավունքները, աբորտները, ռասայական հավասարությունը ևն:

Շատ մարդիկ իրենց կյանքը կորցնում են ռազմական բախումների և պատերազմների պատճառով: Կազմակերպության առաքելությունն է ցույց տալ, թե ինչպես են ոտնահարվում պատերազմների կամ կոնֆլիկտների ընթացքում կանանց, երեխաների և տարեցների իրավունքները, ինչպես նաև աջակցել տուժած մարդկանց, պաշտպանել նրանց իրավունքները:

16.3. HUMAN RIGHTS WATCH

Human Rights Watch-ը հետազոտում և լուսաբանում է մարդու իրավունքների խախտումների դեպքերը աշխարհի բոլոր կետերում: Այս գործով զբաղվում է աշխարհի 70 երկրներից շուրջ 450 մարդ: Նրանք պաշտպանում են ամենաանպաշտպաններին՝ պատերազմների ժամանակ խոցելի փոքրամասնություններից և քաղաքացիական բնակչությունից մինչև փախստականներ, որբ երեխաներ և հաշմանդամություն ունեցող մարդիկ: Անկախությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով կազմակերպությունը չի ստանում որևէ պետությունից ֆինանսավորում կամ աջակցություն, իսկ նվիրատվություններ ստանալիս մանրամասնորեն ուսումնասիրում է ֆինանսավորում կատարած ընկերության պատմությունը:

- Հետազոտություններ: Հետազոտություններ է կատարում ավելի քան 100 երկրներում՝ ուսումնասիրելով մարդու իրավունքների խախտման տարաբնույթ օրինակներ:
- Հրապարակային լինելու բնույթ: Ամենօրյա կտրվածքով տեղյակ է պահում սեփական հետազոտությունների մասին միլիոնավոր հետևորդների՝ սոցցանցերում և օգտահաշվի էջում, ինչպես նաև կառավարություններին, քաղաքական գործիչներին և այլոց:
- Փոփոխություններ: Փոփոխությունների հասնելու համար կապ է հաստատում կառավարությունների, ՄԱԿ-ի, ոչ պետական ինստիտուտների, կորպորացիաների և այլոց հետ՝ պահանջելով, որ բարեփոխումներ՝ օրենքների կիրառմամբ և օրինապահությամբ:

16.4. MINORITY RIGHTS GROUP INTERNATIONAL

Minority Rights Group International կազմակերպությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության կազմակերպություն է, որն ապահովում է փոքրամասնությունների իրավունքները և համայնքների միջև գործակցությունը: Կազմակերպությունը գործում է ավելի քան 60 երկրներում՝ շուրջ 130 գործընկերներով:

Կազմակերպությունը միջոցներ է ձեռնարկում մի քանի ուղղությամբ՝

- լոբբիստական խմբերի միջոցով աշխատում է կառավարությունների և ՄԱԿ-ի հետ;
- հրապարակումներ է անում, որոնք կարևոր են ակադեմիական համայնքների համար;
- արտադրում է վավերագրական ֆիլմեր փոքրամասնությունների խնդիրների մասին;
- վարում է իրավական գործեր փոքրամասնությունների պաշտպանության համար՝ միջազգային իրավունքին համապատասխան:

Այսպիսով, միջազգային կազմակերպությունները կարևոր դեր ունեն մարդու իրավունքների պաշտպանության գործում: Նրանք անցկացնում են մոնիթորինգ, կատարում փաստահավաք աշխատանք, քաղաքական լոբբինգ և տրամադրում իրավական օգնություն:

Միջազգային կազմակերպությունների ակտիվությունն ու մարդասիրական արժեքներին նվիրվածությունը օգնում են նվազեցնելու ոտնահարումների դեպքերը և բարձրացնելու մարդու արժանապատվության պաշտպանությունը գլոբալ մակարդակում:

17.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Հակամարտությունների և պատերազմների ժամանակ մարդու իրավունքների ոտնահարման չափերն ու բնույթը ավելի ընդգծված են դառնում: Պետությունները երբեմն իրենց թույլ են տալիս գործողություններ, որոնք խաղաղ պայմաններում անընդունելի կլինեին, և սա լուրջ մարտահրավեր է համաշխարհային հանրության համար: Երբ մի երկրում կամ տարբեր երկրների միջև տեղի է ունենում զինված բախում, վտանգի տակ են հայտնվում ոչ միայն զինվորները, այլև խաղաղ բնակիչները: Այդպիսի իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանությունը ոչ միայն ցանկալի է, այլև պարտադիր: Այդ պաշտպանության համար միջազգային իրավունքը նախատեսել է հատուկ կանոններ, որոնք կոչվում են **միջազգային մարդասիրական իրավունք**:

Այս իրավունքի նպատակը պարզ է. նույնիսկ պատերազմի ժամանակ մարդուն չի կարելի վերաբերվել անմարդկային ձևով: Այս կանոններն առաջին հերթին պաշտպանում են նրանց, ովքեր չեն մասնակցում կամ արդեն դուրս են եկել ռազմական գործողություններից, օրինակ՝ քաղաքացիական անձինք, վիրավոր զինվորները, ռազմագերիները:

Միջազգային մարդասիրական իրավունքը (ՄՄԻ) կանոնների ու սկզբունքների մի ամբողջություն է, որ սահմանում է, թե ինչ կարելի է, և ինչ չի կարելի անել պատերազմի ժամանակ: Այս կանոնները վերաբերում են թե՛ **միջազգային հակամարտություններին** (երկրների միջև պատերազմներին) և թե՛ **ոչ միջազգային հակամարտություններին** (երբ պատերազմը տեղի է ունենում երկրի ներսում, օրինակ՝ պետության և զինված խմբավորումների միջև):

Այս իրավունքը սահմանափակում է, թե ինչ զենք կարելի է օգտագործել, ինչպես պետք է վարվել վիրավորների, հիվանդների, գերիների կամ խաղաղ բնակիչների

հետ: Օրինակ՝ արգելում է օգտագործել այնպիսի զենքեր, որոնք կարող են մեծ թվով խաղաղ բնակիչների սպանել կամ չտարբերակել զինվորներին քաղաքացիական անձանցից:

Միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը կազմում են **1949 թ. ժնևյան չորս կոնվենցիաները**, ինչպես նաև դրանց **1977 թ. երկու լրացուցիչ արձանագրությունները**: Այս փաստաթղթերը պարզ ու հստակ ձևով սահմանում են, թե ում և ինչպես պետք է պաշտպանել պատերազմի ժամանակ:

Ժամանակակից հակամարտությունների մեծ մասը տեղափոխվել է քաղաքային տարածքներ: Բնակելի շենքերում գործող զինյալների առկայությունը, զինված ուժերի կողմից քաղաքային ենթակառուցվածքների թիրախավորումը բերում են քաղաքացիական կորուստների զգալի աճի: ՄՄԻ սկզբունքները, որոնցից է քաղաքացիական բնակչության և մարտիկների տարբերակումը, դժվար է կիրառել նման պայմաններում: Այս մասին հատուկ անդրադարձ կա ICRC-ի Urban Warfare and IHL վերնագրով զեկույցում[50]:

Քաղաքային տարածքներում զինված հակամարտությունների ընթացքում մարդու հիմնական իրավունքները, ներառյալ կյանքի իրավունքը, արժանապատվության պաշտպանությունը, ազատ տեղաշարժի իրավունքը և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը, հաճախ հայտնվում են վտանգի տակ: Քաղաքացիական ենթակառուցվածքների խոցելիությունն ու բնակչության խտությունն այս գործընթացում ունեն առանցքային դեր:

50 Urban Warfare and IHL, ICRC, taken 18.04.2025.

ICRC-ն շեշտում է, որ քաղաքային միջավայրում ռազմական գործողությունները հաճախ հանգեցնում են լայնածավալ հումանիտար ճգնաժամերի: Օրինակ՝ վնասված էլեկտրակայանների և ջրամատակարարման համակարգերի պատճառով բնակչությունն ամբողջությամբ զրկվում է կենսական ծառայություններից, ինչը լրջորեն խաթարում է առողջության պահպանման իրավունքի իրացումը[51]:

Քաղաքային պատերազմների պատճառով միլիոնավոր մարդիկ ստիպված են լինում լքելու իրենց տները: Այս երևույթը լուրջ հարված է մարդու ազատ տեղաշարժի իրավունքին, ինչն ամրագրված է թե՛ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 13), թե՛ ՄԱԿ փախստականների և ներքին տեղահանվածների պաշտպանության մի շարք փաստաթղթերում:

Ըստ ՄԱԿ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի՝ քաղաքային հակամարտությունները վերջին տարիներին դարձել են ներքին տեղահանման հիմնական պատճառներից[52]:

Քաղաքային հակամարտությունների ժամանակ պետություններն ու զինված խմբավորումները հաճախ հայտնվում են երկակի ճնշման տակ՝ մի կողմից՝ ապահովելու սեփական տարածքների անվտանգությունը, մյուս կողմից՝ պաշտպանելու քաղաքացիական բնակչության իրավունքները: Այս բարդ հավասարակշռությունը հաճախ հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների՝ թե՛ միտումնավոր, թե՛ անուղղակի:

ՄԱԿ զինված հակամարտությունների միջազգային փաստաթղթերում նշվում է, որ պետություններն իրենց պարտավորությունները չեն կարող անտեսել նույնիսկ այն դեպքում, երբ քաղաքացիական և ռազմական նպատակները խճճված են, «հատկապես այն տարածքներում, որտեղ քաղաքացիական ենթակառուցվածքներն օգտագործվում են ռազմական նպատակներով»[53]:

ՄՄԻ խախտման դեպքում պատժի անխուսափելիությունը հաճախ երաշխավորված չէ: Պատասխանատվության հստակ մեխանիզմների բացակայությունը թույլ է տալիս որոշ կողմերի խախտել ՄՄԻ դրույթները ռազմական առավելություն ստանալու նպատակով: Նույնիսկ առկա նորմերի պայմաններում դրանց կատարումը մնում է մարտահրավեր: Կարմիր խաչն իր զեկույցներում նշում է, որ «անպատժելիությունը խաթարում է ՄՄԻ հիմքերը՝ նպաստելով նոր խախտումների ալիքի»[54]:

51 Urban Services During Protracted Armed Conflict, ICRC, 2021, taken 18.04.2025.

52 *Global Report on Internal Displacement*, IDMC, 2023, taken 18.04.2025.

53 *Protection of Civilians in Armed Conflict*, UN Secretary-General's Report, 2023, taken 18.04.2025.

54 *International humanitarian law and the challenges of contemporary armed conflicts*, ICRC, 2024, p. 18, taken 18.04.2025.

Միջազգային մարդասիրական իրավունքը ձևավորվել է որպես իրավական և մարդասիրական գործիքակազմ՝ սահմանափակելու պատերազմների ընթացքում մարդկային տառապանքները: Այն նպաստում է զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանությանը և սահմանում է ռազմական միջոցների ու մեթոդների կիրառման կանոններ: Սակայն 21-րդ դարում պատերազմի բնույթը զգալիորեն փոխվել է: Տեխնոլոգիական առաջընթացը, նոր դերակատարների ի հայտ գալը, ինչպես նաև ռազմական գործողությունների «թվայնացումը» ստեղծում են մի շարք մարտահրավերներ ՄՄԻ-ի համար:

Արհեստական բանականության (ԱԲ) և մահացու ինքնակառավարվող զենքերի համակարգերի ներգրավումը զինված հակամարտությունների մեջ բարդացնում է ՄՄԻ կիրառումը: Այս համակարգերը հաճախ կարող են գործել առանց մարդկային միջամտության՝ որոշումներ կայացնելով կյանքի և մահվան մասին: Այս պարագայում խախտման առկայության դեպքում դժվարանում է պատասխանատվության սահմանումը: ԱԲ-ն կարող է հակասել միջազգային մարդասիրական իրավունքի երեք հիմնարար սկզբունքներին՝ տարբերակում (distinction), համաչափություն (proportionality) և նախազգուշացում (precaution)[55]:

Կիբեռպատերազմի տարածմամբ առաջանում են նոր մարտահրավերներ, քանի որ կիբեռհարձակումները կարող են խաթարել կենսական քաղաքացիական ենթակառուցվածքները՝ հիվանդանոցները, էլեկտրակայանները կամ ջրամատակարարման ցանցերը: Այս հարձակումները կարող են մարդու կյանքին սպառնացող հետևանքներ ունենալ առանց որևէ ֆիզիկական բախման: Այս հանգամանքը բարդացնում է ՄՄԻ կիրառությունը, քանի որ բուն «զինված հարձակում» հասկացությունը ստանում է նոր՝ թվային բնույթ[56]:

Թվային պատերազմների և կիբեռհարձակումների ժամանակ վտանգի տակ են հայտնվում նաև մարդու հիմնարար իրավունքները, մասնավորապես անձնական տվյալների պաշտպանության, ազատ տեղաշարժի և առողջապահական ծառայությունների հասանելիության: Եվրոպական խորհուրդը շեշտում է, որ թվային միջավայրում կատարված գործողությունները չեն կարող դուրս մնալ իրավական գնահատման տիրույթից, նույնիսկ եթե չեն կրում ավանդական ռազմական բնույթ[57]:

Կիբեռհարձակումների դեպքում հաճախ հնարավոր չէ պարզել հարձակվող պետության ինքնությունը: ՄՄԻ շրջանակում պատասխանատվությունը նախատեսում է

55 *Lethal autonomous weapons systems Report of the Secretary-General*, United Nation, 1 July 2024, p. 23-24, taken 18.04.2025.

56 *International Humanitarian Law And The Challenges Of Contemporary Armed Conflicts* Recommitting To Protection In Armed Conflict On The 70th Anniversary Of The Geneva Conventions, 2022, pp. 26-34, taken 18.04.2025.

57 *Committee of Experts on the Rights and the Best Interests of the Child in Parental Separation and in Care Proceedings (CJ/ENF-ISE),* Council of Europe, 2022, taken 18.04.2025.

հստակ վերագրելիություն (attribution), որը թվային միջավայրում շատ հաճախ անհնար է լինում հաստատել: Տվյալ փաստը խաթարում է արդարադատության իրականացումը՝ ներառյալ հարձակումների հետևանքով զոհերի պաշտպանությունն ու վնասների փոխհատուցման գործընթացները[58]:

Հակառակ ՄՄԻ սկզբունքներին՝ չթիրախավորելու քաղաքացիական անձանց և ենթակառուցվածքները, կիբեռհարձակումները հաճախ ուղղվում են հենց այդ համակարգերի դեմ, քանի որ ռազմական նպատակներով օգտագործված համակարգերը լավ են պաշտպանված: Այս պարագայում հարձակման իրական ազդեցությունը կարող է լինել համեմատաբար ավելի մեծ՝ վախի, անորոշության և համակարգային ապակողմնորոշման տեսքով:

Այս բոլորը վկայում են, որ ՄՄԻ-ն դեռևս չունի բավարար հստակություն և մեխանիզմներ՝ կիբեռհարձակումներին ու թվային պատերազմին համարժեք արձագանքելու համար: Դրա համար անհրաժեշտ է միջազգային մակարդակով մշակել նոր իրավական ուղեցույցներ կամ ձևավորել ՄՄԻ նոր մոդել՝ հարմարեցված թվային դարաշրջանի մարտահրավերներին:

Տալլինի ձեռնարկի 2.0 տարբերակի 32-րդ կանոնը (Rule 32) սահմանում է, որ քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների դեմ ուղղված կիբեռհարձակումներն արգելված են միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում: Սակայն, ինչպես նշվում է, եթե քաղաքացիական անձինք անմիջական մասնակցություն են ցուցաբերում թշնամական գործողություններին, կարող են կորցնել իրենց պաշտպանված կարգավիճակը: Այս կանոնը կարևոր է կիբեռհարձակումների համատեքստում, և դժվար է սահմանել ու տարբերակել քաղաքացիական և ռազմական թիրախները[59]:

58 *Group of Governmental Experts on Advancing Responsible State Behaviour in Cyberspace in the Context of International Security* UN GGE Report on Developments in the Field of Information and Telecommunications, 2021, §28, taken 28.04.2025.

59 Tallinn Manual 2.0 on the International Law Applicable to Cyber Operations, Rule 32.

18.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ

Ժամանակակից աշխարհում մարդու վրա արհեստական բանականության ազդեցության խնդիրը սկսել է մեծ ուշադրություն գրավել իրավաբանների շրջանում: Քննարկվող թեման գնալով դառնում է առավել այժմեական՝ պայմանավորված որոշ գործոններով: Այդ մտահոգությունների հիմքում երեք հիմնական խնդիր կա.



1. **ԱԲ-ն շատ արագ զարգանում է** և տարածվում կյանքի տարբեր ոլորտներում, ու մարդիկ դեռ չեն կարող լիարժեքորեն հասկանալ դրա հետևանքները:
2. **Որոշ ոլորտներում չկան հստակ օրենքներ կամ կանոններ**, թե ինչպես պետք է օգտագործվի ԱԲ-ն առանց մարդու իրավունքները խախտելու:
3. **Դեռևս քիչ են ուսումնասիրությունները, թե ինչ բարոյական և էթիկական հարցեր է առաջացնում ԱԲ-ն**, սակայն այդ հարցերը շատ կարևոր են մարդու արժանապատվության և ազատության համար:

1. **Անձնական կյանքի և գաղտնիության խախտում**: ԱԲ համակարգերը հաճախ աշխատում են անձնական տվյալների վրա, ինչպիսիք են մեր անունը, գտնվելու վայրը, առցանց գործողությունները: Այս տվյալների մեծ ծավալը կարող է օգտագործվել մեզ հետևելու համար: Օրինակ՝ դեմքի ճանաչման տեխնոլոգիան կարող է կիրառվել հանրային վայրերում առանց մարդկանց համաձայնության: Սա արդեն տեղի է ունենում, օրինակ, Չինաստանում, որտեղ կառավարությունը վերահսկում է հանրությանը՝ օգտագործելով ԱԲ:
2. **Տվյալների արտահոսք և չպաշտպանված օգտագործում:** Երբ տվյալներն օգտագործվում են առանց հստակ կանոնների և վերահսկողության, կարող են արտահոսել մարդու գաղտնի տեղեկատվությունները՝ վտանգելով նրա

անվտանգությունը: Այս խնդիրն առավել ակնհայտ է այն դեպքերում, երբ ընկերությունները կամ պետությունները չունեն բավարար թափանցիկություն իրենց տվյալների մշակման պրոցեսներում:

3. **Խտրականություն և կողմնակալություն:** ԱԲ համակարգերը սովորում են նախկին տվյալների հիման վրա: Եթե այդ տվյալները պարունակում են խտրականություն, օրինակ, սեռի, ռասայի կամ սոցիալական վիճակի հիմքով, ապա ԱԲ-ն կարող է այդ խտրականությունը վերարտադրել: Դիցուք՝ եթե անցյալում ինչ-որ գործատու աշխատանքի է ընդունել ավելի շատ տղամարդկանց, ապա ԱԲ-ն կարող է «սովորել», որ տղամարդիկ ավելի հարմար են, և մերժել կանանց:
4. **Խոսքի ազատության սահմանափակում:** Սոցիալական մեդիայի հարթակներում ԱԲ-ն կարող է սխալմամբ ջնջել բովանդակություն, որը իրականում օրինական է:
5. **Մտավոր սեփականության (հեղինակային իրավունքների) խախտում:** ԱԲ մոդելները երբեմն ստեղծում են նոր նյութեր՝ հիմնվելով արդեն գոյություն ունեցող հեղինակային բովանդակության վրա: Այս դեպքում հնարավոր է, որ գեներացված տեքստերը կամ պատկերները շատ նման լինեն իրական հեղինակների աշխատանքներին առանց նրանց թույլտվության: Դա կարող է հանգեցնել հեղինակային իրավունքի վեճերի:
6. **Անվտանգության խնդիրներ:** ԱԲ-ն կարող է օգտագործվել նաև վտանգավոր նպատակներով, օրինակ՝ ապատեղեկատվության, ատելության խոսքի խթանման կամ բռնության քարոզի համար: Երբ ԱԲ մոդելները ստեղծում են վնասակար բովանդակություն, դա կարող է սպառնալ թե՛ անհատների, թե՛ հասարակությունների անվտանգությանը:

Կառավարությունները և կորպորացիաներն ավելի և ավելի են օգտագործում ԱԲ-ի վրա հիմնված հսկողության տեխնոլոգիաներ, ինչպիսիք են դեմքի ճանաչումը և կանխատեսող վերլուծությունը, հանրային տարածքները և առցանց գործունեությունը վերահսկելու համար: Այս տեխնոլոգիաները կարող են վտանգել գաղտնիության իրավունքը՝ թույլ տալով մոնիտորինգի և տվյալների հավաքման լայն մակարդակներ: Օրինակ՝ Չինաստանում դեմքի ճանաչման տեխնոլոգիան օգտագործվում է ամենուր հսկողության նպատակով՝ ընդդիմադիրների կամ փոքրամասնությունների դեմ[60]:

Տվյալների արտահոսքը ևս մեկ գործոն է, որը լուրջ մտահոգություններ է առաջացնում գաղտնիության տեսանկյունից: ԱԲ ալգորիթմները հաճախ օգտագործվում են տվյալների մեծ բազաները վերլուծելու համար առանց բավարար կարգավորման կամ թափանցիկության: Այս վտանգները մնում են առանց միջազգային համապարփակ վերահսկողության: Եվրոպական միությունը առաջինն է, որ նախաձեռնել է Ար-

60 *'There's cameras everywhere': testimonies detail far-reaching surveillance of Uyghurs in China*, The Guardian, taken 16.04.2025.

հեստական բանականության ակտը (AI Act)՝ նպատակ ունենալով կարգավորելու ԱԲ-ի օգտագործումը մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակում[61]:

Բացի այդ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2021 թ. ընդունել է ԱԲ-ի էթիկայի մասին առաջին գլոբալ փաստաթուղթը, որը կոչ է անում պետություններին պարտադիր կարգավորումներ սահմանելու մարդու իրավունքների պաշտպանության համար[62]:

Կարևոր է նաև ՄԱԿ գլխավոր քարտուղարի նախաձեռնությունը՝ Global Digital Compact-ը[63] և ԱԲ հանձնաժողովի ստեղծումը: ՄԱԿ-ը 2023–2024 թթ. ձևավորել է հանձնաժողով՝ ուսումնասիրելու ԱԲ գլոբալ ազդեցությունը: Խոսքը դեռ իրավաբանորեն պարտադիր փաստաթղթերի մասին չէ, բայց 2024-2025 թթ.ակնկալվում են ռազմավարական առաջարկներ:

Մյուս փաստաթուղթը OECD-ի «Արհեստական բանականության սկզբունքներ»-ն[64] է, որը ԱԲ ոլորտում առաջին միջկառավարական ստանդարտներն է ներառում: Ընդունված լինելով 2019-ին և թարմացված 2024-ին՝ դրանք բաղկացած են հինգ արժեքային սկզբունքներից և հինգ առաջարկներից, որոնք գործնական և ճկուն ուղեցույց են տրամադրում քաղաքականության մշակողների և արհեստական բանականության ոլորտի գործիչների համար:

Թեև այդ սկզբունքները չունեն պարտադիր իրավական ուժ, բայց վկայակոչվում են որպես բարեխիղճ պետական քաղաքականության հիմք:

Վերջին փաստաթուղթը, որին կանդրադառնանք, Եվրոպայի խորհրդի «ԱԲ-ի, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» 2024 թ. կոնվենցիան է: Այն առաջին միջազգային իրավաբանորեն պարտադիր պայմանագիրն է, որը կարգավորում է ԱԲ կիրառումը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության համատեքստում:

Կոնվենցիան ընդունվել է 2024 թ. մայիսի 17-ին և դրվել է ստորագրման 2024 թ. սեպտեմբերի 5-ին:

Կոնվենցիան բաց է ստորագրման **բոլոր պետությունների համար**՝ անկախ նրանից՝ Եվրոպայի խորհրդի անդամ են, թե ոչ:

61 *The EU Artificial Intelligence Act //Up-to-date developments and analyses of the EU AI Act*, taken 16.04.2025

62 *Recommendation on the Ethics of ArtificialIntelligence*, Published in 2022 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization, 7, place de Fontenoy, 75352 Paris 07 SP, France taken 16.04.2025.

63 *GLOBAL DIGITAL COMPACT REV.4* as of 27 August 2024.

64 OECD AI Principles.

Արհեստական բանականությունը ազդում է նաև արտահայտման ազատության վրա: ԱԲ համակարգերը կարող են ճնշել օրինական արտահայտությունները, երբ սոցիալական մեդիաներում անբավարար կոնտեքստային վերլուծության հետևանքով քաղաքական կամ փոքրամասնությունների ձայները չարաշահմամբ հեռացվում են: Այս վտանգը հատուկ է զարգացող երկրներին, ինչպիսին է Կոսովոն, որտեղ ԱԲ մոդելները հաճախ չեն ընկալում տեղական մշակութային և քաղաքական ենթատեքստը[65]:

Ուսումնասիրելով Կոսովոյի օրինակը՝ տեսնում ենք, որ թեև ԱԲ-ն օգնում է վնասակար բովանդակության հայտնաբերմանը, կարող է հանգեցնել գերգրաքննության (over-censorship)՝ մերժելով օրինական քաղաքական խոսքը կամ բողոքը: Սա հատկապես խնդրահարույց է այն ժամանակ, երբ բովանդակության հեռացումը կատարվում է ավտոմատ կերպով՝ առանց մարդու վերանայման:

Միևնույն ժամանակ ԱԲ-ն ունի նաև դրական պոտենցիալ. այն կիրառում են մարդու իրավունքների խախտումների փաստագրման, ապացույցների վերլուծության, պատերազմական հանցագործությունների մոնիթորինգի համար՝ օգտագործելով արբանյակային լուսանկարներ և սոցիալական մեդիայի տվյալներ: Այս մոտեցումն աջակցում է Միջազգային քրեական դատարանին և միջազգային ՀԿ-ներին, ինչպիսիք են Amnesty International-ը[66] և Human Rights Data Analysis Group-ը[67]:

65 *Information Disorders in Kosovo – 2023*, National Democratic Institute 2024, taken 16.04.2025.

66 *About Amnesty's Evidence Lab*, Amnesty International, taken 16.05.2025.

67 Human Rights Data Analysis Group (HRDAG) - *Syria*.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. First Declaration of Human Right by Cyrus the Great Inscribed in cuneiform on a clay cylinder discovered in 1879. Now on display in the British Museum.
2. Stoicism, Stanford Encyclopedia of Philosophy, First published Fri Jan 20, 2023
3. Appendix to Francis Lieber, On Civil Liberty and Self-Government, 3rd revised edition, ed. Theodore D. Woolsey (Philadelphia: J.B. Lippincott & Co., 1883).
4. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր, հոդված 4
5. Human rights principles, Unites Nations Populations Fund
6. «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա, ընդունված 21.12.1965
7. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված 16.12.1966
8. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ընդունված 16.12.1966
9. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, ընդունված 18.12.1979
10. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիա, ընդունված 10.12.1984
11. Oxford Bibliographies, the meaning of the expression jus cogens, taken 05.07.2025
12. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունված 20.11.1989
13. Ratification Status for CRC - Convention on the Rights of the Child, taken 07.05.2025
14. International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of their Families. New York, 18 December 1990
15. UNTC, taken 05.07.2025
16. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունված 30.03.2007

17. «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիա, ընդունված 20.12.2006
18. Thomas Aquinas, «Summa Theologiae. Translated by the Fathers of the English Dominican Province», Benziger Bros., 1947, Question 94, "Of the natural law (six articles)"
19. Kant, I., Groundwork for the Metaphysics of Morals, Cambridge University Press, 1998, p. 38
20. Ծննդոց 1:27, ՆՎԱԱ
21. Case of Pretty v. the United Kingdom, *Application no. 2346/02*, § 65, 2002
22. Dworkin, R., Taking Rights Seriously, Harvard University Press, 1977, p. 184
23. ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 3
24. Гроций Г., О праве войны и мира. Электронный ресурс. Электронная библиотека гражданское общество в России, стр. 48.
25. Проблемы общей теории права и государства: Учебник для вузов. Под общ. ред. академика РАН, д. ю. и., проф. В.С.Нерсесянца. — М.: Норма, 2004. — 152-154
26. Locke's Political Philosophy, First published Wed Nov 9, 2005; substantive revision Tue Oct 6, 2020
27. The Province of Jurisprudence Determined, John Austin, London, 1863
28. Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության սահմանադրություն, ընդունված 1982 թ. դեկտեմբերի 4-ին և փոփոխված 2018 թ. մարտի 11-ին
29. Immanuel Kant, *Die Metaphysik der Sitten*, in: *Kants gesammelte Schriften*, Bd. 6, Berlin: Georg Reimer, 1907, §46, pp. 313–316
30. ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 3
31. ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 61
32. «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.02.2004, հոդված 71
33. «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.02.2004, հոդված 46
34. ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015
35. Դատական օրենսգիրք, ընդունված 07.02.2018, հոդված 2
36. Վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 05.12.2013, հոդված 72
37. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 09.02.2018, հոդվածներ 121-124
38. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 09.02.2018, հոդված 237
39. Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 30.06.2021, հոդված 50
40. ՀՀ սահմանադրություն, ընդունված 06.12.2015, հոդված 169
41. Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

42. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 17, կետ 3
43. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 17, կետ 1
44. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք, ընդունված 16.12.2016, հոդված 21, կետ 3
45. Practical Guide on Admissibility Criteria, Updated on 31 August 2024
46. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, ընդունված 04.11.1950, հոդված 35, կետ 1
47. www.echr.coe.int
48. United Nations Charter (full text), taken 09.04.2025
49. Карташкин В.А. «Организация Объединенных Наций и международная защита прав человека в 21 веке», Москва, 2016 г. стр. 6
50. Lethal autonomous weapons systems Report of the Secretary-General, United Nation, 1 July 2024, pp. 23-24, taken 18.04.2025
51. International Humanitarian Law and the Challenges of Contemporary Armed Conflicts, Recommitting to Protection in Armed Conflict on the 70th Anniversary of the Geneva Conventions, 2022, pp. 26-34, taken 18.04.2025
52. International Humanitarian Law and the Challenges of Contemporary Armed Conflicts Building a Culture of Compliance for IHL to Protect Humanity in Today's and Future Conflicts REPORT September 2024, pp. 12-13, taken 18.04.2025
53. Committee of Experts on the Rights and the Best Interests of the Child in Parental Separation and in Care Proceedings (CJ/ENF-ISE), Council of Europe, 2022, taken 18.04.2025
54. Group of Governmental Experts on Advancing Responsible State Behaviour in Cyberspace in the Context of International Security UN GGE Report on Developments in the Field of Information and Telecommunications, 2021, §28, taken 28.04.2025
55. Tallinn Manual 2.0 on the International Law Applicable to Cyber Operations, Rule 32.
56. "Ukraine: Russian Attacks on Energy Grid Threaten Civilians Leveraging Civilian Harm as a Tactic of War; Millions Without Electricity, Water, Heat" 6 December 2022, HRW report
57. Urban Warfare and IHL», ICRC, taken 18.04.2025
58. Urban Services During Protracted Armed Conflict, ICRC, 2021, taken 18.04.2025
59. Global Report on Internal Displacement, IDMC, 2023, taken 18.04.2025
60. Protection of Civilians in Armed Conflict, UN Secretary-General's Report, 2023, taken 18.04.2025

61. International Humanitarian Law and the Challenges of Contemporary Armed Conflicts, ICRC, 2024, page 18, taken 18.04.2025
62. 'There's Cameras Everywhere': Testimonies Detail Far-reaching Surveillance of Uyghurs in China, The Guardian, taken 16.04.2025
63. The EU Artificial Intelligence Act // Up-to-date developments and analyses of the EU AI Act, taken 16.04.2025
64. Recommendation on the Ethics of Artificial Intelligence, Published in 2022 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization, 7, place de Fontenoy, 75352 Paris 07 SP, France taken 16.04.2025
65. GLOBAL DIGITAL COMPACT REV.4 as of 27 August 2024
66. OECD AI Principles
67. Information Disorders in Kosovo – 2023, National Democratic Institute 2024, taken 16.04.2025
68. About Amnesty's Evidence Lab, Amnesty International, taken 16.05.2025
69. Human Rights Data Analysis Group (HRDAG) - Syria
70. Human Rights in the Age of AI: Understanding the Risks, Ethical Dilemmas, and the Role of Education in Mitigating Threats, p. 43
71. Charter of Fundamental Rights of the European Union, Article 21
72. International Covenant on Civil and Political Rights, Article 19
73. Աշխատանք ՄԱԿ մարդու իրավունքների մարմինների հետ. ձեռնարկ քաղաքացիական հասարակության համար

Ձեռնարկը հրատարակվել է՝ Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ:

«Մարդու իրավունքների ոլորտում ամենակարևորը, որ կարելի է անել, կրթել մարդկանց իրենց իրավունքների մասին»,— Կոֆի Անան, ՄԱԿ-ի 7-րդ գլխավոր քարտուղար, Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր (2001)